...սէ ...եց
...ուեալ ընդ
...եմ. զի 'ի դա-
...րկեալց յոյժ ։

...նուսն և արդարու-
...մասունք զիս 'ի ձեռս
...ւոց իմոց. ...
...տուայս քո 'ի բարե-
...անք զզուեսցեն
...ոչ իմ փրկութե-
...նից արդարութե քո ։
...յն քում որ ըստ
զ...րդարութիս քո
...տուայ քո եւ ես' ի-
...րիս. և ծանեայց
...մէ պատուէ-
...եցի

...րեալ ... -ծ յ...
...ալք խոկըր զբանեն նախ
զաշխարհս. ամ որք արժանի ... լէք
տեսանել զանուանեալն հրեղէն ... սայ.
բարեխօսեցէք առ տէր վասն ման-
կանց եկեղեցւոյ ։

Նահատակք քրիստոսի. հաւատար-
մութեամբ մատուցեալ զանձինս խորհրդոյն.
որք 'ի հոսանս մեղաց ծովէս
վերածիք զմարդիկ 'ի կեանս ան-
մահ. բարեխօսեցէք ։

Գերագոյն քան զբնութիւն. անձամ-
բ ըւոյն հասիք երանութե. որք 'ի
դասուց տեառն նմանեցիք յեր-
կ ... ան աթոռ ...

891.99
Գ- 89
102
Printed in Turkey

# Գ· Ր Ո Ւ
# Թ· Ե Ղ· Ն Ք

Յօգնաթախանձ բա-
նից օգտակարաց, ա-
պաշաւանաց, հոգեշահ
խրատուց·

## Գ· Ր Ի Գ· Ո Ր Ի
Նարեկայ վանից
վանականի

12004





Printed in Turkey

# ՆԱՐԵԿ

## ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ Հոգեկիր Հաւատորի.

Բովանդակեալ յիննսուն և հինգ բանս՝ հոգեսուն Մաղթանաց.

Եւ Ներբողս Տիրամօրն լուսոյ ՚ի ընթերց ընթերց և ՚ի արբոգրեալ ցրինոնկոյ, և գրեանցս տօրուչեց որ ՚ի Տր գրոյ տնատոն խրոյ, Ամէն ...

Այժմ ՚ի Հայրապետութեան Մեծի գահին Էջմիածնի՝ Տեառն Դաւթի Սրբազն Կաթուղիկոսի ամ Հայոց.

Եւ ՚ի Պատրիարգութեան Սրբյ Երէմ Տեառն Թէոդորոսի Մաքրափայլ Վարդապետի.

Իսկ և ՚ի Պատրիարգութեան Արքայանիստ Մայրաքաղաքիս Տեառն Յօհաննու Աճարեան Կոչեցեալ Վսեմաբան Բարունապետի.

Նորէն տպեցեալ արդեամբք և ծախիւք Տէր Պաղտասարեան, Տր Արիստակէս Քահանա. սէր Քահանայի.

Յամի Տեառն՝ 1806. Հայոց ՌՄԾԵ. Յունիսի Ժ.
՚Ի Մայր Դպրատանն (Կ.ՊՈԼԻՍ)

՚Ի Ձեռն Խումարզատեան Տպագրիչ Մարտիրոսի.

35
9381/57
1259



Printed in Turkey

# +ԴԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ.

## *Բան. Ա.

ՁԱՅՆ ՀԱՌԱՉԱՆԱՑ՝ ՀԵԾՈՒԹԵան սրտի՝ ողբոց աղաղակի՝ քեզ վեր ընծայեմ տեսողդ գաղտնեաց. և մատուցեալ եդեալ ՚ի հուր թախծութեան անձին տոչորման՝ զպտուղ ըղձից ձենձերոյ՝ սասանեալ մտացս՝ բուրվառաւ կամացս առաքել առ քեզ. Այլ հոտոտեսցիս հայեսցիս գթ՛ած, քան ՚ի պատարագն բոլորապտղոյ մատուցեալ ծխոյն բարդուն։



Ըն

Ընկա՛լ զսակաւամասնէյ բանիցս յօդուած՝ քեզ
՚ի հաճութիւն, և մի՛ ՚ի բարկութիւն. եւ չէ՛ ՚ի խորոց սրտի
զգայութեանց խորհրդակիր անձնէկիս՝ վաղվաղակի ժա
մանել առ քեզ՝ կամաւորական նուէր բանական զո
հիս, որչափ կիցել զօրութ՟ ճարպոյ՝ որ յիմնէ պարար
տութ՟, Եւ ՚ի դնելս իմ ը քեզ դատ՝ խառնել ա
ղերսիւ հզօր, մի՛ երբէք զհամբարձումն ձեռաց ամ
բարշտեալն յակոբու, ըստ բողոքելոյն եսայեայ. և
զանիրաւութիւն բաբելոնի, տաղտկալի քեզ երևեա
ցի, զոր առակ եօթանասներորդի երկրորդի սաղ
մոսին ազդէ, այլ իբր զըմբռնեալ խունկն հաճոյա
կան ՚ի խորանին սեղանոյ, զոր դաւիթն կանգնեալ
նորոգեաց տապանակին հանգստեան ՚ի գերութէն
դարձելոյ, որ ՚ի վերստին գիւտ կորուսելոյ հոգւոյ
առակի ընդունելի կամաց քոց լիցի.

Բայց քանզի ձայնդ ահաւոր դատաստանիդ հա
տուցման՝ ուժգին հնչեցել ՚ի ձորն վրէժխնդրու
թեան՝ կրկինս ինձ երկնէ մարտից յարուցմունս.
այժմէն գուշակել շարժմունս յուզմանց ներհակա
կանաց, որ յիմունս անձին ցուցանի, խռովութս
ամբոխից. հարեալք ը միմեանս զէն առ սուսեր՝
խորհրդոցն հոյլք, չարեացն՝ ը բարիսն, և գերեալ
զիս ՚ի մահ, ըստ հին դիպուածոյն՝ որ նախ քան ըզ
շնորհեին ժամանել առ իս. զոր ընտրեալն առաքելո
կանացն դասուց պօղոս՝ առ օրինակեալ զմովսէս
զքն փրկութին յաղթող ցուցանէ. Վասն զի թէ
մերձ է օր տեառն, ոչ գիր ասէ, ՚ի հովիտն անձուկ
ապարախսին յովսափաթու և հեղեղատին կեդրոնի,
մերձ հանդերձարանացն իրաւանց ժամադրութեանց,


որ

որ կենցաղականաւ այսր յաւիտենից՝ պհանդ երձե-
լոցն ինձ կերպարանեն, ապա և յաւէտ մերձեցաւ
'ի վր իմ արքայութն այ՝ մարմին եղելոյ, մեծապէս
գտեալ զիս առ իթ ժամուց՝ բազմաց տոկունէց՝ զա-
նազան մասանց յանդիմանողաց ճշմարտապատմից,
քան զձեռին նորին վերակացութեն անդ ուրեմն եր-
բեմն 'ի հարուածս եդոմայեցւոց և փղշտացւոց,
և այլոց բարբարոս ազգաց։ Քանզի այն ընտրու-
թի՝ ամօք չափեցաւ, իսկ պատուհաս իմում
պարտուց՝ առանց աւարտման ունի զպահման։ Ա՛հ
դուք՝ և որոգայթ անձողորմելի, զի մարգարէին և
առակողին, տագնապաւ մեծաւ առ դուրս ինձ հա-
սեալ՝ զամօթն մշտնջենաւոր տանէն գծագրելով։
Ո՛ որ միայն քո՛ հրաշագործել պատուզս 'դեղոյ՝
'ի հնարս կենաց՝ ամենավարան տարակուսանաց հո-
գւոց վտանգից, քաւիչ այդ՝ գովեալ 'ի փառս ան-
ձառս անսահմանելի բարձրութե յաւիտեանս յաւիտենից։

† Սերաբին յաւելուած նշխին հեծութէ՝ նորին հայոցն,
առ նոյն ողերգս նողբանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝
ընդ այ։ *Բան. Բ.

Ե՛ւ արդ՝ քանզի առ բարձրեալն ած յօդեալ որա-
կան շղթամբք կարգաւ, որ գործովք միայն
գրաւի, և ոչ տեղեկաբանութբ կաշառի, որ յե-
գիպտոս միշտ ունիս զորտիդ զդարձն, զի՞նչ օրի-
նակ առ այս քեզ նմանագոյն և յարմարական առ-
տանօր եդից՝ ա՛նձն իմ պարտաւոր։ Պատժակիցս՝
կործանեցելոյն սոդոմայ. ըմբերանել դատախազս՝

նինուէի. անարի բարբարոսս՝ քան զտիկինն հորո-
ւայլին. վատթարագոյնս՝ քան զ.քանան. յամառեցելս՝
քան զամաղեկ. անբժշկականս քաղաք՝ դրօշելոց,
նշմար մնացեալ՝ ապստամբութե հինն ինելի, յիշատա-
կարան պահել՝ ուխտադրժութեն յուդայ. Աշտամ-
բեալս՝ գեր քան զծուլս. տարամերժեալս՝ քան ըղ-
ծայրգան. խորդաբարոյս՝ քան զգալիլեա. աններելիս՝
քան զանհաւանն կափառնայում. պարսաւեցելս՝
ի բեր զքորազին. բամբասեցելս՝ ընդ բեթսայիդայ.
անպարկեշտ ծաղկեցել ալիքս՝ եփրեմի. Նզու ա-
զանիս մինչ յիմարութի՝ այլ ոչ հանդարտու-
թի. 'ի կորեանց տխուծուց՝ ունձնական օձս ե-
զեռնայյին. կերպս ձուոց քարբից՝ լցեալ ժանտու-
թե. պատկերս վերջին հարուածոցն երուսաղէ-
մի. ըստ բանին տեառնի՝ և տեսանողացն ձայնի.
Ցաղաւարս մերժեալ՝ հասեալ 'ի կործանումն. խոր-
տակեալ դրացս վտաահարան, և կրկին ծրդել չին-
ուածս խոսուն. Թողեալ ժառանգութիս յարմա-
րական, մոռացել տունս ա՛ծակերտ, որ բանից նա-
խագրեցելոցն՝ մովսիսի դաւթայ և երեմիայի.
Ցարկս բանական՝ ունօղս թորոսութե, հարուածել
խորասու քերմանն՝ օրինի կազդուրել. օծեալ կա-
ւոյն՝ ողոքական հեզութեն. անձարակ գտեալ
յելս հնարից, քակտել վերստին ձեռամբ շինողին.
արտաքս ընկեցեալ՝ ի բաւացի հատուցմամբ՝ հրամա-
նաւ հզօրին՝ 'ի տեղի անսուրբ. հերքեալ տարագը-
րեալ խորոցաւ մեծաւ՝ ամենայնիւ աւանց խնայե-
լոյ. Ծածկեալ դրամս յերկրի չարեօք, որ աւան-
դակարոյս ժխտողին՝ որ յաւետարանին ցուցանի.

շՆ. ԺԼ դու ա՛ծ՝ ա՛ծդ հոգւոց և ամ մարմնոց, ո՛ր
գտանելոյ ա՛ծաշնորհին, երկայնամիտ և բազում
ողորմ, ըստ ա՛ռյն յոլովանու ձայնին. շնորհեա՛ կատա
րել 'ի քոյդ հաճու Ի օրհնեալդ կամաց՝ զսկզբնաւո
րեալ մատեան մաղթանաց՝ այսր ողբերգութե.
Նւ ընդ լոլով սերմանել բանիս 'ի նախընթացուս
աստիճանաց՝ օթեւանացս պատրաստուն, 'ի կատա
րածն ժամանելոյ հաւաքման հնձոցն, դարձայց բերկ
րեցեալ լրութե քաւութե՝ պտղոյն երանութե՝
որայից բարութե. Ա՛ի տացես ինձ արգանդ սրտի
անորդի՝ իբր խոտե, և ստինս աչաց ցամաքեալս՝
ողջամենագութ. Ա՛ւր բանական մաղթողիս՝ հը՛զօր
և ողորմած, նախքան երկնի՝ և երկրին երկրի, և
նա ցորենոյ և գինւոյ և ձիթոյ, և նոքա լուիցեն.
Նւ երկնաւորիցն աղերս՝ որ առաքել հոգւոյս՝ ող
գեսցէ՛, քան թէ տարերաց ապականացուաց.
Դու ստեղծիչ՝ և ես կաւ, բա՛ց տարակուսելոյս 'ի
մտաց մաղթանաց այսր հեծութե՝ կամս քաղցրութե՝
զօրանալ աստէն. զի մի 'ի բանալ վերնայինն երկրի՝
անընտիր գտեալ կրթութեան վայելման լուսոյ,
իբր վնիւթ մոմոյ՝ սպառեցայց, ջնջեալ 'ի միջոյ.
Ա՛գի զրկելոյս, ո՛ր մաղթանաց գոչման ստողին, և
ոյժ թալկացելոյս, և կեա՛նք մաշելոյս՝ մտացս խոր
հրդի, տալ ո՛չ տաժանմամբ կրից՝ աշխատութե գտեղ
խնդրելոյ, այլ զաւանդ մաղթանացս, և տուր զողոր
մութի քո շնորհացդ. ընկա՛լ զփոքրս 'ի տկարէս և
շնորհեա՛ զմեծդ՝ առ 'ի հզօրէդ. զօրացո՛ զբանս զրգ
ման, առաքեալ 'ի մեզ հոգի 'ի բարձանց՝ ա՛ծաշունչ
պատգամօք 'ի սմա եղելոյս. Պարգեւեա՛ բարերար՝

 զա

ղտուանքն եսայեայ, լուսաւորեալ առ ճշմարտութիւն,
մատուցանելով մահու արժանոյս, ը պղնձոյս գոյի
անարգս ձայնի՝ զոսկի քո շնորհի. ընդ անզարդութե
երկաթոյս՝ սևութե գունոյս՝ պղինձ պձնելի, ցացք
առաքինութե, հրաշէկ լերանանու. Ընդ էր կարծ-
րացուցանես զսիրտ եղկելոյս՝ չերկնչել ՚ի քէն, ան
ձառ և ահաւոր. Մ՛ի եղեց անպտուղ ՚ի փոքր վաս
տակոյս՝ իբր ապաշան սերմանօղ անբերրի երկրի.
Մ՛ի լիցի ինձ երկնել, և ոչ ծնանել. ողբալ, և ոչ
արտասուել. խորհել, և ոչ հառաչել. ամպել, և ոչ
անձրևել. ընթանալ, և ոչ հասանել. ինձ ձայնել, և
քեզ ոչ լսել. պաղատիլ, և անտես մնալ. կողկողել, և
ոչ ողորմել. աղաչել, և ոչ ինչ օգտել. զոհել, և ոչ
ձեռնձերել. զքեզ տեսանել, և դատարկ ելանել.
Լո՛ւր ինձ նախ քան զկարդալս իմ առ քեզ միայնդ
հզօր. մի՛ զանմարտ տանջանացն տոյժս՝ ընդ թուով
աւուրց մեղաց կեցելոյս չարագործիս ինձ՝ հատու-
ցանել. Կեցո՛ զիս գըթած. լո՛ւր ինձ ողորմած.
մարդասիրեա՛ներօղ. խնայեա՛ երկայնամիտ. պաշտ-
պանեա՛ ապաւէն. բարերարեա՛ հզօր. ազատեա՛ ա-
մենակալ. կենագործեա՛ նորոգօղ. վերականգնեա՛
ահաւոր. լուսաւորեա՛ երկնային. բժշկեա՛ հզօր.
քաւեա՛ անքննին. պարգևատրեա՛ առատ. շնորհազար-
դեա՛ աննախանձ. հաշտեա՛ անոխակալ. ընկա՛լ անո-
խակալ. սրբեա՛ ՚ի պարտուց օրհնեալ. Եթէ յառե-
ցից զաչս իմ ՚նայեցեալ ՚ի հայեցուածս երկուց վը-
տանգից՝ յաւուր թշուառութե, զգոյշ տեսից փըր
կութի՝ յոյս և խնամակալ. եթէ նկատել դիտեցից
՚ի վեր յամենագրաւ ուղին ատեանին, հրեշտակ քո
խա

խաղաղութե՝ քաղցրութե ինձ պատահեսցէ. Ցո՛ց ինձ տէր 'ի յետին աւուր՝ ընչոյս արձակման, մաքրութե ոգի՝ լուսով ամբարձել 'ի յերկնաւորացն երջանկաց՝ պարգևօք սիրոյ քո եկեալ հասանել. 'Ի յարդարոցն կատարելոց՝ կարեաց ինձ կցո՛րդ ժամանեցուսցես. զանակնկալն բարի՝ չորիս 'ի յուսահատութենն աւուր շնորհեսցես. Բա՛ւ լիցի քեզ բա՛րեբանեալ՝ որ փրկութիդ ես անձի, եթէ սխտացելոց քո ոչխարի՝ գազան դժնդակ տացես ուղեկից. մեղօք մեռելոյս՝ անախտ կեանք. կործանելոյս պարտեօք՝ փրկութի.

3 Արդեօք մոռասցի՞ս զբարերարելդ՝ ա՛կնկալութի. անտեսեսցե՞ս զգթասիրելդ՝ խ՛նամօղ. այլայլեսցե՞ս զմարդասիրելդ՝ անփոփոխ. նհանջեսցե՞ս զկենդանագործելդ՝ անվախճան. թողուցո՞ւս զողորմութիդ՝ երջանիկ պտուղ. Աղաւաղեսցե՞ս զքաղցրութեդ բարեշնորհ ծաղիկդ. անպատուեսցե՞ս զնիւթ պանծանաց՝ քումդ ձոխութե. յեղանակեսցե՞ս զփառս հերաց՝ քումդ բարձրութե. ո՞չ պահեսցես զվայելչական զարդ պայծառութե՝ քումդ պսակի. Եթէ ողորմածացն է երանութի, իսկ դու բնաւ իսկ արքայութի լցեալ փափաքմամբ. ո՞չ զբոլորն պարգևեսցես փրկութի. ո՞չ մատուցանիցես դեղ վիրացս. ո՞չ սպեղանիս խոցոտածոյս. ո՞չ դարման տկարութես. ո՞չ ծագեսցես լոյս 'ի խաւարի յուսացելոյս 'ի քո զօրութիդ՝ կենաց պարգևդ տիեզերաց. Որ միայնդ ունիս փառս ինքնութ իսկութ և յարակայ մշանջենաւորութ. վկայեալ 'ի բնաւից. օրհնեալ և փառաւորեալ յերկս յաւիտենս. և անդր քան զպայման սահմանի իմանալեացն յաւիտենից. ամէն.

+Ս երաժին յաւելուած նշխին հեծութ՝ նորին հիւթոյն, տունդ ողբերս ծողխնակ բանի. Ի խորոց սրտից խօսք ընդ Այ. *Բան. Գ.

1 Տէր իմ տէր, տուիչ պարգեւաց, ինքնաբուն
բարի, ամենից տիրող հաւասարապէս, միայն
արարիչ զբնաւս՝ յոչէից, փառաւորեալ, անքննելի,
ահեղ, ահարկու, սոսկալի, հզօր, սաստիկ, անտա-
նելի, անմերձենալի, անըմբռնելի, անիմանալի, ան-
ճառելի, անտեսանելի, անզննելի, անշօշափելի, անո-
րոնելի, անսկիզբն, անժամանակ. Անշամանդաղ գի-
տութիւն, աներկեւան տեսութիւն, ճշմարիտ էականութիւն,
բարձր՝ և խոնարհ օրհնաբանեալ գոյութիւն, անստուեր
ծագումն, ամենափայլ ճառագայթ, խոստովանեալ
լոյս, անտարակոյս վստահութիւն, անսպառտամ հնդիւրո,
անյեղլի կնիք, անսահմանելի տեսիլ, վկայեալ անուն,
ճաշակ քաղցրութեան, բաժակ բերկրութեան, հաստիչ
հոգւոց հաց, օտար մթութեանց սէր, աներկբայ խոս-
տումն, ծածկոյթ ցանկալի, զգեստ անկապուտ, օթոց
բաղձալի, զարդ փառաց, ձեռնկալու մեծ, ապաւէն
գովեալ, աննուաղելի շնորհ, անպակասելի գանձ, ա-
նապական անձրեւ, արփիացնցուղ ցօղ, ամենատեղաց
դեղ, ձրի բժշկութիւն, կրկնաձիր առողջութիւն, վեհա-
գոյն խրախոյս, անպատիր կոչումն, համօրէն աւե-
տիս, սորկամեծար թագաւոր, աղքատասէր պաշտ-
պան, մշտահարուստ տուիչ, անխափան գթացումն,
աննահանջելի հրաման, անհամառօտ յոյս, երկար տե-
սողութիւն, անզղջական տուր, ամենաբաշխս ոչ, արդարա-
կշիռ ձեռն, անաչառ ատեան. Մխիթարութեան ձայն,

 ակիս

սփոփանս լուր · բերկրութե՜ բերումն · անուն կեն-
դանի · նախախնամօղ մատն · անգայթագղելի ելք ·
անխարդախ ընթացք · կենդանարար կամք · աննեն-
գելի խրատ · աննախանձ պատիւ · լայնական հնարք ·
անձկական պայման · անգտանելի հետք · աներևոյթ
շաւիղ · անչափագիր պատկեր · որքանութ՟ անսահման ·
աննմանական տիպ · անզուգական գութ · ողորմութ՟
բազմաշեղ · խոնարհութ՟ տօնելի · համբոյր փրկական ·
Այլ ևս քան զայս՝ ազդմունք վայելչականք՝ մծ ու-
թենդ նուիրելեաց, օրհնեալ · գովեալ · բարեբանեալ
քարոզեալ · աւետարանեալ · հռչակեալ · հնչեցեալ · պատ-
մեալ · անխաբելի կամօք աղաչեալ · և որ ինչ առ մեզ
բերին առ 'ի քէն՝ հոսմունք քաղցրութե, զոր հան-
դերձելոցն ձաւից լուսաբանեն կերպաւորութիւք ·
որով զուարթ ցուցանիս 'ի փրկութին իմ՝ երանութի,
իբր 'ի պտղաբերութե իմեքէ՝ ախորժ տենչանօք լցեալ
զի ոչ իմովս ինչ անտխապատուաստ փառաւորիս եր-
գովք, այլ զի պատճառ իմն առցես զփոքրս աղերս՝
մեծ իդ փրկանաց ·

2 Այլ քանզի առ ամ հասակ անկեցեալ յերկրի ազգ-
բանականաց՝ այս պատուէր նկարագրական նորոգ-
մատենի ողորմ նուագի՛, որ զամենեցունց ունի ըզ
կրից պատահմանց՝ նշաւակել յիւրում պատկերի,
իբր կցորդ մեծ գիտակական կարեաց համայնից, առ
բոլոր գումարս՝ բազմահոլով տիեզերակայոց քրիստո-
նէից · Ու նախնի ժամն ժամանողաց, և առ երկրորդ-
կոչեցեալ չափու որբունն, առ որ 'ի կատարած ա-
ւուրն կոչեալ՝ սակաւաձեան ծերութեն · Ու պար-
տաւորս, և արդարս · առ ինքնարդոյ բարձրայօնն, և

սխալեալ անձնադատ գտեն · առ բարիսն, և եղեւ
նագործս · առ նկունս , և առ արիս · առ ստրուկս և
ներքոյանկեալս · առ սեպուհս և գերաշխարհիկս ·
Մ՛իջակայնոց՝ և պայազատաց · շինականաց և տոհմա
կանաց · արուաց՝ և իգաց · հրամայողաց՝ և հնազան
դելոց · գերելոց՝ և նուաստից · վեհից՝ և փոքունց ·
պատուականաց՝ և ռամկաց · ձիավարժից՝ և սոսկա
կանաց · քաղաքականաց՝ և գեղջկաց · արքայից գոռո
զութեց՝ ՚ի սանձս ահաւորին ըմբռնեցելոց ·
Մ՛իայնացելոց՝ վերնակենացն խոստակցաց · մեքենակա
նաց՝ տիրանուէր զգաստութեց · քահանայական եր
ջանկակրօն ընտրութեց · այցելութեց՝ բարեգդեա
տից դիտողութեց · աթոռակալութեց նախագահից՝
որբանուէր տեսողութեց · որոց ոմանց աղերս աղա
չանաց , և ոմանց խրատ բարեաց, առ դեմս աղօթից՝
այսու մատենիւ մատակարարեցի, ձեռնարկել հո
գունդ զօրութ՝ կարգել ինձ մաղթանս բազմադի
միս , և զմեղս նոցին խնդրուածս՝ գթութե մեծիդ
յանդիման լինել սովաւ հանապազ ·
A Եւ արասցես զսոյն ընթերցողացն ՚ի սիրտս յըս
տակս՝ բժշկութի հոգւոց , և մաքրութի յանցա
նաց · թողութի պարտուց , և արձակուրդ մեղաց կա
պանաց · Եղիցի՛ բղխումն արտասուաց՝ սովաւ վար
ժելոցն , և պարգևել տացի ՚ի ձեռն սորին ապա
շաւ ըղձից · Շնորհեսցի տ՛ր և ինձ ընդ նոսին՝
առ՚ի քէն զղջումն կամաց · և նոցա իմովս ձայնիւ՝
շունչս բարեհամբոյրս · նուիրեսցի վ՟ իմ այսու
մատենիւ՝ պաղատանք նոցին , և բանիւս այսու
հեծութք նոցին՝ Ք՟ իմ խնկեսցին · Ընդ համբոյր

ճաշակման այսր աղբերգութեան , շնորհ լուսոյ քոյ
մտեալ բնակեսցէ · եթէ ելցեն ինձ բարեպարիշտք
ընծայիւք սովաւ , ընկա՛լ կենդանեօքն վ՟քոյ գթած՝
և զիս ը՟ նոսին · եթէ ախտս ինչ սրբունեհրս՝ կաթ-
ուածոց աչաց՝ սովիմք բերիցի , եղիցի՛ ՚ի քէն խնա-
մակալ՝ և յիս անձրևել · եթէ գրեսցի և ՚ի փրկու-
թե՛ կարգեսցի՝ հաղորդելոցն յայս կիրս կենաց ,
արասցես կամաւ քո օրհնեալ՝ և ինձ համարել · եթէ
հեծութիս ա՟ծահաճոյս ՚ի ձեռն այսր բանի՝ ՚ի գաղտ-
նեաց ուրուք յառաջ եկեսցէ , օգտեցայց քև բա՛րձ-
րեալ՝ և ես ընդ նմին · եթէ ձեռն մաքուր՝ խնկով
հանդերձեալ՝ առ քեզ համբարձցի , հասցէ միասցի՛
ը՟ իմս ձայնի և աղաչողացն աղերս՝ յառաջ մատուցցի ·
Եթէ պաղատանս բազմադիմիս ը՟ իմս երկնեսցի ,
լիցի՛ և ինձ քև՝ և ըստ սորին կրկին նուիրեալ ·
Եթէ յարգեսցի այս անձին բանի պատարագ՝ քեզ
՚ի հաճութի , նախայրոյցն՝ ընդ իս քև ընծայեսցի՛ ·
Եթէ ՚ի տխրանաց ինչ ձանձրութե՝ ոք նուաղեսցի ,
կանգնեսցի՛ վերստին հաստատանաւ այս հառաչա-
նացս՝ ՚ի քեզ յուսացեալ · եթէ համբարտակն վտա-
հութե՝ մեղօք յատակի՛ , այսու որձանօք պատականե-
ցելովք աջով քո պաշտպան՝ դարձեալ կառուսցի ,
Եթէ յուսոյն ձգարան՝ սուսերբն յանցանաց հա-
տեալ կտրեսցի , կցեսցի՛ դարձեալ միւսանգամ կա-
մօք ամենակալիդ՝ բարուոք պատրաստեալ · եթէ վը-
տանգ մահու՝ անձնական ցաւոյ՝ զոք պաշարեսցէ ,
գտցէ փրկութի սովաւ առ ՚ի յոյս կենաց՝ յաղօթելն
առ քեզ կեցուցիչ · եթէ տագնապաւ ոք տարակու-
սի՝ ՚ի սիրտ խոցեսցի , քաղցրութե քո սովաւ՝ ապրել



ող

ողջունացի։ Եթէ անքաւելի կորստեամբ պար-
տեաց՝ յանդունդս քո խորոց էջէ ընդլուղեալ,
եկեսցէ 'ի լոյս՝ կարթիւ այս հնարից՝ քև պատա-
պարեալ․ եթէ թմբրութեամբ խաւարից՝ խաւարին
գործոց՝ էջէ ոք վնասել, զօրասցի անդրէն վեմ քո
միայն ապաւէն 'ի քեզ ապաստան եղեալ։ Եթէ
պահպանակն վստահութեան զանձն ուրուք լքցէ,
ընկալցի այսու միջնորդիւ ձեռն քո զնա՝ ամ-
փոփեալ 'ի նոյն հաստատութեան․ եթէ ամայի 'ի
զգուշութենէ պահողացն ոք դեգերեսցի, սպա-
սեսցէ տոկմամբ՝ առ 'ի նոյն դարձ նորոգողին․
Եթէ սաստիւ դիւային ջերման՝ դողումն ինչ
զոք խռովեսցէ, սթափեսցի 'ի սոյն յայս նշան՝
խոստովանեալ և երկրպագեալ խաչին խորհրդոյ․
եթէ անօրէնութեան մրրիկ՝ խորտակիչ հողմոյ՝ յան-
կարծ բախեսցէ զհաստատուն մարմնոյ՝ շինուա-
ծոյ մարդոյ՝ յերկրային ծովուս, հանդարտեսցի
անդրէն՝ ղեկաւ այս թևոց 'ի քեզ պատկանեալ։
Այլ առաքեսցես լինել դեղ կենաց՝ առ հնարս ցա-
ւոց հոգւոց և մարմնոց՝ քոց ստեղծուածոց,
զայս կարգեալ սահման ողբոց մատենիս սկզբնե-
ցելոյ յանուն քո՝ բարձրեալ։ Զսկսեալս իմ՝
դու կատարեա․ եղիցի հոգի քո խառնեալ 'ի
սա․ շունչ զօրութեան մեծիդ միասցի 'ի քո ինձ շնոր-
հեալ ստեղծաբանութիւնս․ զի դու տաս զօրութիւն
վհատեալ սրտից, և ընդունիս փառս յամենե-
ցունց․ ամէն։



Նու

+ԷԼ Երգոյն յաւելուած նորին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն ողբերս մաղթանաց բանի. Ի խորոց սրտից խօսք ընդ Այ. *Բան. Գ.

1 Արդ քանզի սկիզբն կալեալ խօսել ընդ քեզ՝ որ ՚ի ձեռին ունիս զշունչ կենդանութեան՝ հողոյս բազմամեղս, յերկուղի՝ սարսեալ դողացեալ տագնապաւ մեծաւ՝ յաւէտ երկնչիմ. վասն զի ահաւոր և անտանելի, և՚ի սահմանէ բանի ՚ի վեջելի, յիշատակ անձառապրելի՝ անաչառդ քո ատենի՝ ՚ի կշռամբութեան իմ պարտաւորի՝ առաջի երկնի և երկրի. Նաղի և չէք իսկ բժշկութե՛ բազմավէր տանգ սաստկութե՛ վիրացս անողջանալի, խայթմանց խածոտածոց մահաբերին բերանոյ ժանեաց՝ որսողին զանձն իմ ՚ի կորուստ. Մանաւանդ զի ո՛չ գոյ պատասխանի, ըստ առակողին, յաւուր պատերազմի, և ո՛չ բանիւ խրատանալի, և ո՛չ վերարկուաւ պատըսպարելի, և ո՛չ դիմակօք կեղծաւորելի. ո՛չ առ երեսս բանիւք մատչելի, և ո՛չ կերպարանօք երբեք խաբելի. ո՛չ յօդուածովք բանից սատելի. ո՛չ արագամամբութեց փախչելի. ո՛չ թիկանց դարձուցանելի. ո՛չ դիմաց ընդ երկիր մածուցանելի. ո՛չ բերանով ընդ հող հաստելի. ո՛չ ՚ի խորս երկրի ղօղելի. Քանզի մե՛րկ են քեզ ծածկեալքն, և հրապարակեալ են աներևոյթքն. արդարութի իմ նուաղեալ՝ և իսպառ ունայնացեալ. մեղանքն յայտնեցեա՛լ և յաւէտ առաւելեալ. չարիքն իմ մնացական՝ և ես կորստական. իրաւանցն կշիռ պակասեալ՝ և անիրաւութին իսկցն զօրացեալ. բարեացն բերք հատեալ՝ և. խալմունքն ար



Հս

ճանաչեալ․ տուանդն կորուսեն՝ և դաստակնիքն այժ-
մէն գտեալ․ մահուն մուրհակ գծեալ՝ և աւետանեցն
կտակ եղծեալ։ Բարերարն տխրեցեն՝ և բանսար-
կուն ուրախացեն․ հրեշտակաց գունդն թաղծեն՝
և սատանայ խնծղիւք պարեն․ վերնական զօրքն ող-
բացեալ՝ և ստորնայինքն բերկրեցեն․ սպանողին մե
թերք լցեալ՝ և պահողին գանձն կապտեն․ տատրին
հողմն կանգնեալ՝ և ստացողին պարգև մատնեն․
հաստողին ձիր մոռացեն՝ և կորուսչին հաղբքն պա-
հեալ․ երախտիք փրկչին հեծգնեն՝ և բելիար զո՛ւր
թացեալ․ կենացն աղբիւր փակեալ՝ և գտողին
ժանգ՝ ժանդիս ժամանեալ։

2 Ուստի՝ ոչ ապաքէն ըղձալի էր, ըստ գրոյն կան-
խուն նախաձայնելոյ, ո՛չ առեղծանելն երբէք յար-
գանդի և ո՛չ նկարելն 'ի յորովայնի․ ո՛չ 'ի ծնունդ յա-
ռաջագայել՝ և ո՛չ 'ի լոյս կենաց հասանել․ ո՛չ 'ի թիւս
մարդկան գրել՝ և ո՛չ 'ի հասակ անձման ամբառնալ․
ո՛չ 'ի պատկեր գեղոյ զարդարել՝ և ո՛չ բանիւ հնդեր
ձաւորիլ, քան է այսպիսեաց սաստկագունից և սար-
սափելեաց ըմբռնել պարտուց, զոր և ոչ վիմաց կարծ-
րութի բերել, թող թէ մարմնոց լուծականութի․

3 Ուստի՝ տո՛ւր բարեգութ՝ աղաչեմ զքեզ՝ տո՛ւր
ինձ ողորմութի, որ զայսպիսիկ դու ինքնին քե-
զէն քոյովդ բանիւ մեզ սահմանեցեր՝ ասելով․
թէ տո՛ւք զայդ նո՛ւէր՝ յանուն փրկութեն ձերոյ՝
ա՛յ, և սո՛ւրբ եղերուք․ զի ողորմութի կամիմ,
և ո՛չ զպատարագ․ Ո՛հա բարձրացի՛ր վերստին
խնկեալ այսր յիշատակս, որ ունիս զա՛մ, և 'ի
քեն է ա՛մ, և քեզ փառք յաւիտենիցունց․ ամէն․

† Մ`երովբէն յաւելուած նշխին հեծութ՝ նորին համոյն,
առ նոյն աղերս մաղթանաց բանի. ՚Ի խորոց սրտից խօս-
ք ընդ ա̅յ. *Բան. Ը.

1 Արդ՝ ես երկրածինս մարդ՝ կենցաղակա-
նաւ անկայուն գոյիւ զբաղեալ, և յիմա-
րութե̅ պատրողականաւ զինեալ՝ յիմարեալ,
որ ամենայնիւ ստեմ, և ո՛չ միով իւիք ճշմարտեմ.
Քանզի որո՞վք դիմօք վերագրեցելովք՝ նշանա-
կօք աղարտեցելովք՝ յանդգնեցայց լինել յանդի-
ման քում դատաստանիդ, ո՛վ իրաւադատ ահա-
ւոր անճառ՝ անպատում հզօր ա̅ծ բոլորից. Քան-
զի դասեալ ատեանին ՚ի սոյն՝ զապերախտու̅թ մե-
ղուցեալ անձինս՝ առ քումդ երախտիս, ցուցից
զիրաւունս քո միշտ զօրացեալ, և զանիրաւու̅թի
իմ յաւէտ պարտաւորեալ. Որ արարեր զիս ՚ի քո
պատկեր պանծալի՝ ՚ի ձեռն վեհիդ տպաւորութե̅,
զողկալս օժանդակելով.
2 Օրդալեցեր բանիւ. փայլեցուցեր փչմամբ
մտօք. ճոխացուցեր. իմաստիւք աճեցուցեր. հնձա-
րով հաստատեցեր. ՚ի շնչականացն որոշեցեր. հոգւով
իմանալեաւ խառնեցեր. իշխանականին գոյիւ պճ-
նեցեր. Նման հայրաբար. սնուցեր դայեկապէս
տածեր ստացողա̅պ. Տնկեցեր զմբարիշտս ՚ի քում-
դաւթի. Ջրովն կենաց ոռոգեցեր. աւազանին ցօ-
ղով մաքրեցեր. կենացն վտակաւ արմատացուցեր.
հացիւդ երկնայնով ջամբեցեր. ա̅ծային արեամբդ
արբուցեր. անհպիցն և անհասանելեացն ընտանե-
ցուցեր. զաչս երկրեղէն՝ ՚ի քեզ համարձակեցեր.

ռ ուսովդ փառաց վերածածկեցեր· զհողանիւթ մա-
տուՆս՝ անմաքուր ձեռացս՝ 'ի քեզ մատուցեր· զմո-
խիրս անարգ մահացու՝ երբ զնշոյլ լուսոյ յորդե-
ցեր· զհայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդասիրա-
պէս և անարժանիս իմոյ անձին կնքեցեր· Ո՛չ կե-
զեր զլերանս լցեալ նանրութե՝ 'ի ժառանգակիցն
կարգալ զքեզ· ոչ կշտամբեցեր զյանդգնեալս՝ 'ի
քո կցորդութի· ոչ ստուերացուցեր զտեսիլ աչացս՝
'ի քումդ ակնարկութի· ոչ արգելանաւ կապանաց՝
ընդ մահապարտացն տարագրեցեր· ոչ խորտակեցեր
զդատապարտ բաղկիս, որ անմաքրապէս առ քեզ համ-
բառնայր· ոչ մանրեցեր զոստս իմոց մատանցս՝ 'ի շօ-
շափելն զբանդ կենաց· ոչ պատեցին զինև մառա-
խուղք՝ 'ի ձօնելն զքեզ՝ ո՛վ հաւոր· ոչ փշրեցեր զպր-
ատամանցս՝ յըմբոշխնելն զքեզ՝ ո՛վ անսահմանելի· ոչ
գնացեր բարկութբ խոտորնակ՝ խոտորնակի ը-
քեզ հետևօղս, երբ ընդ վրիպելուՆն իսրայելի·
Ո՛չ խայտառակեցեր 'ի հարսնարանիդ՝ զանարժանս
քումդ պարերգու· ոչ 'ի գձուձ հանդերձին տե-
սիլ՝ զանօրինելս յանդիմանեցեր· ոչ կապանօք ձե-
ռացս և ոտիցս՝ յարտաքին խաւարն հալածեցեր·
3. Ա՛յս տմ մատուՆս բարեաց՝ և զներելոյդ եր-
կայնմտութե ընկալեալ 'ի քէն՝ բարերար օրհնեալդ,
և յամի միշտ երկայնամիտ, փոխադրեցի զնաաակս
պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ անօրէնութիս,
մրցմնականաց և անձնականաց՝ ամենեկին բազմածուփ
խորհրդոց յուզմանց երկրաքարշութեց· Ա՛յսո-
սիկ քեզ տ՛ծ իմ և տր, ընդ այսքանեաց բարեց փո-
խաբերեցի· զայս քեզ՝ ինձէն հատուցի չարիս, ը-



մոյ

մոլորեան յանդիմանութեն առակի, մուացեալ
զիմաստութի և սիրողս յիմարութե. Ո՛ այց բա-
րեաց երախտեաց կամօքս՝ ընդունայնութե գնա-
ցիւք՝ չարաչար ունայնացուցի. զայս լուսաւորու
շնորհաց անճառից՝ ՚ի բարձրելոյդ խնամոց բարդե-
ցեալ՝ մրրկաւն խելագարութե ցնդեցի. Նու թէպ
բազում անգամ ծանուցար՝ կարկառմամբ ձեռին
քո այցելութե ձգել զիս առ քեզ, ոչ հաւանեցայ,
ըստ մարգարէին՝ որ զխորայելք ամբաստանութե. և
թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ,
և ոչ ընդ այսմ սահմանաւ ուխտին փակեցայ, այլ
դարձեալ զնոյն նիւթեցի չարիս, անդստին յորձն
առաջին մատեայ, փչոցն մեղաց հերկեցի զանդաս-
տան սրտիս՝ յորոմանն արդիւնաւորութի. Նաւ իս
եղանեն առածք՝ ամարեալ սբ մարգարէիցն։ քանզի
մնացեր յինեն խաղողոյ, և ես ընդ այնորիկ փուշ
շառաւիղեցի. դարձայ յանախորժ դառնութի պտղոյ
այդիս օտարացեալ. բուռն հարի զանհաստատ հող
մոյ, որովք միշտ տատանեալ՝ այսր անդր տարաբե-
րիմ. ըստ ձայնի երանելոյն յոբայ՝ է ճանապարհ իմն
անդարձ գնացի. ՚ի վր աւազոյ՝ շինուածս յիմարու
թե կառուցի. Այնատարր հետովք խաբեցայ՝ կե-
նացն անձկալեաց հասանել, փակեցի ինձէն զելիցն
ուղեորութի, բացի կամաւ զկորստեն խորխորատն.
Խցի զպատուհան լսելեացս իմոց՝ առ բանիդ կե-
նաց ընդունելութի. կփուցի զաչաց հոգւոյս հայեց
ուած՝ առ ՚ի զկենացն դեղ նկատել. Ոչ ընդոստեայ
՚ի թմբրութեց լքմանէ մոացս՝ ՚ի պատգամ փողոյդ-
ահաւորութե. ոչ զգաստացայ ՚ի բողոք գուժի՝

 հրա

հրափորձական աւուրն ընտրութն· ոչ երբէք զուր-
թեալ 'ի նիրհմանէ քնոյն մահացուի, որ 'ի կորուս-
տըն կարապետէ· Մ'չետու հանգիստ քոյ հոգւոյդ՝
'ի մարմնեղէնս տաղաւարի· ոչ ը̄ բնութի շնչյա
խառնեցի՛ զմասն շնորհաց քումդ պարգևի· ի-
մոյս ձեռօք կոչեցի կորուստ, ըստ առակողին, ըզ
հոգիս կենդանի մահացուցանել։

4 Ու զի՞նչ է ինձ սակաւս և նուաղագոյնս յօդել
սահմանս կսկծելիս չափաբերականս, մինչ ան-
ցեալէ ըստ քանակութի՛ և վերիպեալ ըստ բժըշ-
կութի· Ո՛րդ՝ քո՛ է ընձեռել կեանս՝ հոգւովս մե-
ռելոյս, և անոխակալութբ մատչել առ այցելութի
դատապարտելոյս՝ որդի այ կենդանւոյ· քեզ փառք
յաւիտ· ամէն·

† Երրորդին յաւելուած յինին հեծութե՛ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանին· Ի խորոց սրտից խօսք ընդ այ· *Բան· Ը ·

1 Եւ արդ՝ զի՞նչ բարութք գոյ առ այս, կամ ո՞ր
օգուտ ինձ առ սոյն սահման ընթացից ձայ-
նիս հեծութե՛ լքանել, և ոչ զամբարեալ չարա-
մահացու վիրիս՝ խարանաւ բանիս արտաքս հեր-
քել· և կամ զծանրութի սրտիս՝ մթերեալ ցա-
ւոյս՝ հոգեկան խնթոյս, իբր տաղտկացուցանողական
հնարաւորութբ, մատնամուխ զզուանօք փխել։
2 Ու քանզի ոչ գտայ արժանի պարծելոյ 'ի փառս՝
ընդ սրբոց այս, որոց լի են բերանք նց ծաղու՝
և շրթունք խրախանց ցնծութբ, ըստ առակողին և
սաղ

սաղմոսողին, 'ի կարգն երկրորդ դիմեցից՝ ընմինին
իմ յիշատակել համայն աստանօր· Թէպէտ առ իմում
Թերուեն բարուց անբարեաց՝ և նոքա յաղթականք
իցեն, իբր ապաշաւենն՝ քան զանապաշխարն· Տօնէլի
եղև մանաւե, առ իմոց պարտուցս առաւելու ի·
պատուեցաւ և փրկեցին, առ դժնէ իս անբարշտու
Թի· գովեցաւ անառակ որդին, առ անդարձիս ու իս
տազանցուԹի· յիշատակեցաւ կեղծաւորու ի որ
դույն ամասեայ, առ անշնորհու ի ապախտաւորիս·
օրհնաբանեալ եղև աւազակն, որ դատապարտն է ան
հաւատից· պատուեցաւ և կինն պոռնիկ՝ անզղջա
մայրն ապաշաւողաց· Ոչ պակաս քան զփարաւոն՝
զստեղծուած սրտիս իմ խստացուցի· Ի օրինակի
խռովուն մրրկաց ծովու ծփեցայ, ոչ այնքան սար
սեցի և պատկառեցի 'ի սաստկութե քումդ հրաման
նի, որքան այլք ծովուն՝ յեզերացն· Ընդ Թիւս չա
փուց կշռուԹե առ իմս գործոց՝ և աւազոյն կշռա
սահմանեցաւ· պակասեաց անբաւից շիղջք, առ
համբարս իմոցս անօրէնուԹեց·

3. Ոչ ԹԷպէտ և յոյժ բազում են մանունքն՝ 'ի
յափունս ջրոյն համահաւաքելք, այլ ուրոյնք և ո
ւանձնականք 'ի ծննդոց անձելուէ· իսկ մեղքն իմոյս
յանցանաց՝ անԹիւք, զորս անհնար է առնուլ 'ի միտ·

| | |
|---|---|
| Ոմն՝ և ծնունդք իւր · | ոմն՝ և շառաւիղք իւր · |
| ոմն՝ և բիծք իւր · | ոմն՝ և արկածք իւր · |
| ոմն՝ և փուշք իւր · | ոմն՝ և արմատք իւր · |
| ոմն՝ և հաստատածք իւր · | ոմն՝ և պտուղք իւր · |
| ոմն՝ և նշխարք իւր · | ոմն՝ և ձուղք իւր · |
| ոմն՝ և ստաք իւր · | ոմն՝ և արմկունք իւր · |

ոմն՝ և Հիւրանք իւր · ոմն՝ և մատունք իւր ·
ոմն՝ և խլրտմունք իւր · ոմն՝ և զօրութիւնք իւր ·
ոմն՝ և ազդմունք իւր · ոմն՝ և նշմարանք իւր ·
ոմն՝ և տիպք իւր · ոմն՝ և մնացուածք իւր ·
ոմն՝ և ստուերք իւր · ոմն՝ և մթութիւնք իւր ·
ոմն՝ և յարձակմունք իւր · ոմն՝ և հնարք իւր ·
ոմն՝ և պատիրք իւր · ոմն՝ և դիտմունք իւր ·
ոմն՝ և դիմեցմունք իւր · ոմն՝ և չափք իւր ·
ոմն՝ և խորք իւր · ոմն՝ և գարշուլիք իւր ·
ոմն՝ և կայծակունք իւր · ոմն՝ և կիրք իւր ·
ոմն՝ և մթերք իւր · ոմն՝ և գանձք իւր ·
ոմն՝ և ցնցուղք իւր · ոմն՝ և աղբերք իւր ·
ոմն՝ և գիւտք իւր · ոմն՝ և շանթք իւր ·
ոմն՝ և հրդեհմունք իւր · ոմն՝ և պատկառանք իւր ·
ոմն՝ և վիհք իւր · ոմն՝ և անդունդք իւր ·
ոմն՝ և բորբոքմունք իւր · ոմն՝ և աղջութիւնք իւր ·
ոմն՝ և ամպրոպք իւր · ոմն՝ և կայծակք իւր ·
ոմն՝ և հոսմունք իւր · ոմն՝ և հեղեղք իւր ·
ոմն՝ և սառնամանիք իւր · ոմն՝ և դրունք իւր ·
ոմն՝ և շաւիղք իւր · Հնոցն՝ և տապ իւր · հրատն՝ և դողորջիք իւր · հալոցն ձկալին՝ և ձենձերմունք իւր օշինդրին՝ և դառնութի իւր · կործանիչն՝ և հնարան դեղք իւր · բռնաւորն՝ և յեղուզակք իւր · գողոցն՝ և սպառազէնք իւր · աւազակապետն՝ և գումարտակք իւր · գազանն՝ և կորիւնք իւր · խածանողն՝ և ծակոտուածք իւր · ապականագործն՝ և նմանիք իւր ·

4 Բարդ՝ այսոքիկ պետք են գլխաւորութեց՝ ապականողաց ոգւոց համայնից, դառնալ ընդ ենքեամիք նուաճութիւք մասանց իւրաքանչիւրոց՝ ի

 ստ

տացանէ՝ բիւրք բիւրուց՝ և հազարք հազարաց․ իսկ զհամայնիցս թիւ՝ նա միայն զօրէ իմանալ, որ զառ ՚ի մէնջ չէութիւն գրեաց՝ իբր զէութի գործոց տեսանէ․ Այլ արդ՝ եթէ ոք զանձն ոչ խաբեսցէ, և առ երեսս ոչ կերպարանեսցի, և կեղծաւորաբար ոչ անհաւատեսցէ, և մարդ զինքն ծանիցէ, և համարակաց բնութ՟ վարեսցի, և երկրածին զանձն դիտեսցէ, և ՚ի չափս իւրում կանոնին կայցէ, իմասցի՝ ծանիցէ՝ զնախաթիւ մասունս արկածիցդ վերագրելոց․ թէ ոչ ընդունայն ինչ գրեցի, և կամ զբնաւ իսկութիւն սահմանեցի, որ ՚ի մերս բնութ՟ պատուակի ազգի ազգի վերիպականութի․ այլ ՚ի բնութեանց արդասեաց չարեաց՝ չափ մի երևեցուցի, զի նոքօք և զայլսն իմաստասիրեսջիք թէպէտ և ոչ բաւանդակապէս․

---

† Սերաւին յաւելուած Երկին Հեծուէ՝ Նորին Հոգւոյն, առ նոյն աղէրս մաղթանաց Ենի․ ՚Ի խորոյ սրտից իւրոց՝ ընդ ծով․ *Տեառն․ Աս․

Այլ զի մի՝ զմիրկութեանց վտանգութի իսպառ կորեցից, և ապաղէն եղեալ՝ մատնեցայց այսքանեաց աներևութից ընդդիմամարտից, որք ոչ այլ ինչ են, քան թէ ընտանիք թշնամիք՝ ինքնածին բռնաւորք, զոր վերագրեալքդ սահմանեցին՝ զորքանու՟ն պատկերին ձևոյ եդեալ․ ահարկուս ցուցից առ սմին բազմաբոյլ բնութ՟ մարտկացդ՝ զօրեղ ախոյենս ամծականս՝ ամենայաղթօղս և անպարտելիս, թէ և կոխծելիս կերպս՝ և դժուա-



րին

ըակութ պտուղս ծառոց անհասանելեաց, և անկոխ
ճանապարհաց երկք և տաժանմունք։ Քանզի զայն
ամ գունդս չարութե բանսարկուին զօրաց, սա-
կաւ մի արտօսր կաթուածոց աչաց՝ իբր զձձիս զե-
ռունս բազմոտանիս խխայթից երկրի տկար խլրտ-
մանց՝ անկեալ՚ի վերայ ծորուածն ձիթոյ, կամ դդղն-
դեղ ինչ սատակչական՝ ցամաքեցուցանէ։ և դդղն
մի հառաչումն սրտի հեծութե՝ ելեալ՚ի յոգւոյ, ի-
բըր շնչումն հուրային ջերմութե՝ խառնեալ յար-
ևու, զպառնամանեաց սաստկութի հալէ։ քանզի
ըստ միումն նմանութե՝ հեշտածինք են։ և ըստ
միւսումն դիմադրութե՝ դիւրամեռք։

2 Մ. յլես ոչ երբեք կասեցից դառնել զդատապար-
տեալս՝ բանից կսկծմամբ։ պարսել զպարտաւո-
րեալս՝ իբր զհնասակար անփրկանաւոր անհամոզելի։
վս զի զոմանս սատակեալ՚ի յիմոց նեղչացն, ոմանց
զօրութի տամ կենդանանալ՝ առ հոգւոյս կորուստ
Տունկս դառնոստեան, որ զգարշուի անառակ վա-
րուց ծաղկեցի։ բարունակս ապականաբեր և մահ
ողկուզեցն, որ զկորստեան գինին երկնեցի։ քանա-
նու զաւակս՝ և ոչ յուդայի ըստ ասից մեծին դա-
նիէլի։ որդիս գեհենին, և ոչ արքայութե։ ժառանգս
գժոխոց, և ոչ փառացն փափաքելեաց։ նիւթս տան-
ջանացն, և ոչ հանգստեան։ Ապերախտս՝ առ երախ-
տաւորդ։ ապաշնորհս՝ առ բազմապարգևդ։ մի՛շտ մե-
ղուցելոյ՝ առ երկայնամիտդ։ դառնացուցիչս՝ քաղց-
րութե բարերարիդ։ Ծառայս չար և վատ, ըստ
տերունեան յանդիմանուեն։ իմաստունս՝ զչարիս
գործել, ըստ եսայեայ նախասացուեն։ ժիրս՝ առ

ժանդագործութիս զազրութե. փոյթս՝ առ 'ի
բարկացուցանել զՏէրն. մշտաշարժս՝ առ գլուխս սա-
տանայականս. հանապազորդեան վիշտս՝ ստացողին.
Թշուառս՝ առ բարեացն Թուիչս. ծուլս՝ առ երանութեն
ընտրութե. դանդաղս՝ առ դիտմունս խոստացելոցն.
անարիս՝ առ կարիս պիտանեացն և օգտակարացն.
պաշտօնեայս՝ տիրադրուժ երախտամոռաց.

3Վայ անձինս մեղաւորի, զի վարարեցին իմ բար-
կացուցի. վայ որդւոյս կորստեան, որ զկենդանութեն
ձիր մոռացայ։ Վայ պարտապանիս անհամար բիւ-
րուց քանքարաց, որ ոչ գոյ հատուցանել։ Վայ բեռ-
նակրիս ծանրութե մեղաց դժնեից, որ չունիմ դա-
նալ առ հանդստարարն. վայ վնասակարիս տրունեն
պարտուցն, որ չիք հնար յանդիման լինել հզօրին.
Վայ եղեգնախուի կիզանողականս նիւթոյ, որ սո-
չորեալս եմ 'ի գեհենին. վայ ինձ առ այս յիշատակի
զի նետք բարկութեն այ՝ այրեցելովք են գործեալ.
վայ յիմարութեանս, որ ոչ մտաւեցի զծածկեցելոցն
յայտնութե հանդէս։ Վայ ամբարշտիս, զի միշտ
անդադար ոստայնս չարեաց կկեցի. վայ զմարմինս
պարարողի՝ կերակուր որդանցն անմահից, կատաղողացն
թունաւորաց զխարդ համբերեցից. վայ ինձ առ ար-
բուցման մահուն բաժակի, որպէս զյաւիտենականն
տուժեցայց. վայ ինձ առ ելս անարժան հոգւոյս՝
յեղկելի մարմնոյս, իբր դատաւորին ահմարտի յան-
դիմանեցայց. վայ ինձ առ նուաղուն իւղոյն լապ-
տերաց, զի անարծարծելի է աղօտանալն. վայ ինձ
առ ձեռպ տապնապի՝ ահին պակուցման, յորժամ ա-
ւագասրահին մուտն փակեսցի. վայ ինձ առ ձայնին

ահաւորութիւն՝ դողդողուցելոց և տարաժամեցելոցն բանից՝ երկնաւոր Թագաւորին վճռաւ կնքելոյն.

Թէ ո՛չ գիտեմ զքեզ.

† Աստուածային յաւելուած կցեալ հեղինակէ՝ նոյն հեղինակի, առ նոյն ողբերգ մաղթանաց բանին. Ի նորոյս ուրեք երեւ եւ ... ոյ.

*Գլուխ. Ի.

1 Դու արդ՝ զի՞նչ գործեցես անձն իմ կորուսեալ, կամ ո՛ւր Թաքիցես, կամ զիա՞րդ ապրեսցիս, կամ ո՞րպէս եկեցես ՚ի մեղաց բանդէ. Բանդն բազում են պարտիքդ, և անԹիւ հատուցմունքն. սաստիկ կշտամբանքն, և անվրիպելի նախատինքն. անողորմ են հրեշտակքն, և անկաշառ դատաւորն. հզօր ատեանն, և անաչառ բեմն. քստմնելի ապառնալիքն, և անողորմ հատուցմունքն, ահարկու հրամանն, և մերկապարանոց յանդիմանութիւնքն. հրեղէն են գետքն, և անանցանելի են վտակքն. Թանձրամած խաւարն, և արտաքոյ այցելուԹե՝ մոռանալութիւն. անպակասն է գունքն, և մշտնջենաւոր է տագնապն. ամենհնարաւ տարտարոսն. և անզերծ սատանայնքն. Դու արդ՝ որդեակ քեզ են գանձեալ դառինքս այսոքիկ դժնդակք, և տարժանելի օժանդք, անդէմերեսեցան պատուհասից, ով անարժան անձն իմ մեղաւոր՝ չարագործ՝ պոռնիկ՝ բազմաբիծ, և սահման անդառնալի բնութին անմաքրութեան. Ահա՜ զարդ իբրև գործոց ձեռացքոց ժառանգեցես Թիւրեալ ՚ի յուղղութեանց, և զառածեալ ՚ի մաքրութեանց. տարադրեալ յարքայութենէ,



և

և 'ի կարգաց պարկեշտութեց · ունայնդ 'ի լուութեց՝
հոգեպարգև հարստութեց · նախանձարկու բա-
րերարին, և ամենակալ Թագաւորին ·

բ Այլ քանզի կառուցեր քեզ անել արգելան՝ և
անփախչելի որոգայթ, խոստովանեալ քեզէն
զանբժշկականդ քո վէր, և զանօրինակդ հարուած,
վկայելով զանձինդ զպարտականդ մահու՝ զանբու-
ժելիդ բեկումն, ով չարդ 'ի բարեաց · ով դառնու-
Թիդ 'ի քաղցրութեց · ով խաւարդ 'ի լուսազարմից ·
ով կապտեալդ 'ի պճնելոց · ով դատապարտեալդ 'ի գովե-
լեաց · ով անբարիշտդ 'ի բարեպաշտից · ով չնչականդ
'ի բանականաց · ով անմիտդ 'ի մտաւորաց · ով անհան-
ճարդ յիմաստնոց · ով անմաքուրդ յընտրելոց · ով
մահացուդ 'ի կենդանեաց · ով խոտորականդ 'ի սրբոց ·
ով արտաքսեալդ 'ի պարկեշտից · ով կեղծաւորդ յուղղա-
րոց · ով անպիտանդ 'ի պիտանեաց · ով անարգդ 'ի
փառաւորաց · ով նուաստդ յառաւելութեց · ով գե-
րիդ 'ի գերադասունից · ով նուաստագոյնդ 'ի վեհից ·
ով աղքատդ յընչեղաց · ով անարժանդ 'ի փրկութեց ·
ով անմասնդ 'ի բարձրութեց, և 'ի հոգևոր հարստու-
Թեանց · և հատուածեալդ յօրհնելոց ·

---

+Ս երորդին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հոլովղի,
առ նոյն ողբերս մոլորանաց բանի · Ի խորոց սրտից խօսք
ընդ Այ · *Բան · Թ ·

ա Այլ արդ՝ զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բամ-
բասանս շարադրեցից 'ի կտակ մաղթանաց
մատենի այսր ողբերգութեան, ով անձն իմ



Թըշ

թշուառ ամենապատկառ, և առ պատասխանիս բա-
նից անբարբառ, անպիտան ոգւոյ և մեղացն մասնակցու-
թեան. Օ՜ ի եթէ զլիճ մի ծովուց՝ 'ի յորակութիւն
դեղոյ յեղեղեցից. և զդաշտս ապարխօք բազմօք
սահմանեալ՝ 'ի տարածումն լայնութեան քարտեսի չա-
փեցից, և զպուրակս յորդունց անտառուց՝ շամբից ե-
ղեգանց՝ 'ի հատուածս գոյութեան գրչաց կազմեցից,
և ոչ զթիւ մի 'ի բարդելոցն անօրէնութեանց՝ զօրէցից
ընդ գրով սահմանի գրաւել. Նա զի՝ թէ զմայր
լիբանանու՝ 'ի մի լուծ կշռոց զօդեցից, և կամ ըզ-
լեառն արարատեան՝ 'ի կէտ ամբարձման նժարի միոյ
արդարութեան՝ մէջնորդ կացուցից, ոչ հաւասարէ
այնր հարթութեան համազուգակցել.

2 Որպէս ամբարձուղէշ՝ ստուարաստեղն տերևա-
լից՝ ունայն 'ի պտղոյ, նմանակից յաւէտ հարա-
զատ այնր թզենւոյ՝ զոր տէրն չորացոյց. քանզի սա-
ղարթօք վարսից. այսէ՝ արտաքին դիմօք բարեշուք
կերպից՝ իբր պատկառ իմիք պաճուճեալ, բայցակա-
նացն գոս բաղձալի. իսկ եթէ մերձեսցի տնկողն՝
խուզել զխնդրելին, գտցէ զքեզ ունայն 'ի բարեաց,
և գարշելի 'ի գեղեցկութեանց. ծառդ տեսողաց, և
նշաւակութիք նախատողաց. Օ՜ ի եթէ ապաժամանն՝
յանզգոյշ ժամու՝ հերապանծ տունկն պտղաւորաց
անկենդան, որ դոյզն պատկերն է անպատրաստից,
եկն ընդ անիծիւք. և կամ երկիր ոռոգեալ ցօղով,
և ոչ բազմապատիկ՝ զաւանդս արդասեաց երկրա-
գործութեան՝ տածողացն մատուցանէ, լքեալ մոռանի.
Իսկ դու՝ ով անձն իմ եղկելի, սահման բանաւոր և
տունկ կենդանի և ոչ 'ի ժամու իւրում պտղաւոր,

Իբր ոչ զնոյն կրեսցես պատիժ նախնում առկիդ։ Ա՜ս զի զհամայնն ընկալար 'ի քէն՝ անպակաս յառաւելութեց, սկզբնաւորեալ 'ի մարդն առաջին՝ և մինչև 'ի սպառումն ծննդոց նորին՝ զբերս գործոց նանրութեց, և զգիւտս նորոգս՝ ատելիս և անախորժելիս հաստողին զքեզ մ՜յ։

3 Եւ մ՜ս զի եդի զքեզ նպատակ հանդէպ երեսաց տեսութեան մտացս՝ ա՛նձն իմ անպիտան, վիմօք ձգելոց արձանաց բանից՝ իբր զանընդելգազան վայրենի, անողորմաբար զքեզ քարկոծել։ Որ թէպէտ և ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն յառաջնումն պատասխանւոյ՝ իբր ընդ ոսոխի ուժեմն՝ ընդ անձին՝ յօժարամիտ կամօք ոգորիմ, ը՜տ իմաստութեն բանի․ և զյոյզս մտաց խորհրդոցս գաղտնեաց՝ իբր զգլխաւորեալ յանգաւորութի չարութե գործոց խոստովանել, քեզ տարածեցից՝ մ՜ծ իմ և տ՜ր։ Ո՛ ի որում չափով չափեցից զանձինս ստգտանգ, 'ի քոցդ աննուաղ գթութեց՝ այսրէն չափեցայց, ընկալեալ զշնորհդ յաճախագոյնս՝ ը՜տ մեծագունիցդ պարտեաց, Եւ ո՛րքան վիրացն հարուածք՝ անբժշկականք և անհնարաւորք ճարակեսցին, այնքանեօք չափովք կրկին առ սմին՝ և իմաստք արուեստից բարձեալ բժշկիդ՝ բարեհռչակեալ լուսաւորեսցին․ և 'ի պարտուցն առաւելութի, նոյնքան փոխատուիդ առատատրութի՝ բարեբանեալ միշտ պսակեսցի, ը՜տ խնկաւորդ քում առակի։ Ո՛ ի քո է փրկութի․ և 'ի քէն է քաւութի․ և աջով քո՝ նորոգութի․ և մատամբ քո՝ զօրեղութի․ և 'ի հրամանաց քոց՝ արդարութի․ և յողորմութեց քոց՝ ազատութի։

և յերեսաց քոց՝ լուսաւորութի. և՛ի դիմաց քոց՝ զուարճութի. և հոգւովդ քո՝ բարութի. և օծմամբ իւղոյ քոյ՝ սփոփութի. և ցօղով շնորհի քոյ՝ զուարթութի. և դու տաս մխիթարութի, և մոռացուցանես զվհատութի. և բառնաս զխաւար վշտաց, և զհեծութի ողբոց՚ի ծաղր փոխես. Եւ քեզ վայելէ օրհնութի գովութե հանդերձ յերկինս, և յազգս հարցն և՚ի ծնունդս նոցա, և յաւիտենից յաւիտեանս. ամէն.

---

† Մատեանն յաւելուածոյ կրկին հեծութեան՝ նորին հանճարոյ, առ նոյն աղերս մոլորանաց բանի. Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ. *Բան. Ա.

1 Եւ արդ՝ քանզի միապէս մատնեալ կորստեան՝ և զգլխովին ուժգնապէս, և մեղանչելն մոլեգնաբար. զի թէ և ստորացեալ իմն են՚ի միմեանց այլայլութիւք նմանութեցն, սակայն զկերպարանս երկաքանչիւրոցն առ միմեանս եդեալ, զմի և զնոյն վհատութեան ծնունդս արտադրեն. Զի մինն՝ զհզօրին ձեռն՝ իբր ապիկար՝ թերահաւատէ, իսկ միւսն՝ ըստ նմանութեան քառատանեաց պաճարեղինաց՝ յանձգայս եղեալ, զյուսոյն առասանն խզէ. վասն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ հանապազ խնդայ սատանայ. իսկ երկրորդաւն՝ ըստ նմանութե լափլիզող դժոխորովայն գազանի, իբր կերակրով՝ արեամբ պարարի.

2 Եւ արդ՝ իբր զգանեալ բազմահարուածեան հեծանաւ, և յաւէն մահու ժամանեալ՝ դոյզն ինչ



դար

դարձուածն շնչոյ ընկալեալ, և յոգի կենդանի եկեալ,
կազդուրեցայց պատսպարեցայց կանգնեցայց յար
եայց յանկենդանականս կորուսենէ. օժանդակեալ
քի ձեռամբքն՝ որ գթածն է յամի՝ ի բարերար յերկ
նաւոր հօրէն՝ փրկութե և բժշկութե պտուղ ըն
ձեռեալ ինձ մեղուցելոյս՝ ախտացելոյս՝ և մնհացե
լոյս։ Նու սկզբնաւոր ողբերգութե այսր աղերսա
նաց, զհաւ ատոցն շինուած կառուցից. քանզի և ոմն
'ի նախնեացն՝ սոքիմբք զինել, փոխեցաւ իակոյն յան
մահականն վիճակ վերին. զապաշխարութեն դեղ
ընկալեալ, ապաշաւանաց թօշակաւն՝ զգրաւականն
աներծութե ատեն ժառանգեաց։ 'Ի վերքան
զորոց՝ առաքելն ընդ նմին ցուցանէ, որք զհանդէսն
մրցականին յերկրի կատարեալ, ապագայիցն և երկ
նաւորացն յուսոյ հաւատացին, և անտեսիցն ձոխու
թե փարթամացին։ Իսկ զխորախոյս տրունի պաշտե
լի բանին՝ յիշեալ առ սմին, զի ոմն ինչ հնարաւոր է
այնմ՝ որ հաւատայն։ Նո՛ զի՝ և զշավին ընտրակա
նացն բարեմասնութե այ հաճելեացն՝ զննեալ առ
տանօր, զայս պատկեր բանի ընկալաք նախնի գահ
երեց, առ 'ի սրբուեցն մաւտ՝ սովիմբ հնդերձել
առանց որոյ և ոչ որն փառաց՝ զհուրսն առ մեզ հը
րաշագործեաց զօրութի, եթէ ոչ նախ՝ լծակից
խնդրեաց բարերարութեն իւրոյ զհաւատսն մեր։
ուստի և կեանս ընձեռել զօրէ ինքն իշխան բաւա
կանուբ՝ առ ընթեր գոլովայ. քանզի հաւատք քո
կեցուցին զքեզ, որհնաբանեալն այ բերան վկայէ։
Քանզի արդարև սեռն տեսութի, և կատարեալ
իմաստութի, և առ այծ ընտանութի, և բարձրելոյն



ծա

ծանօթութեն հաւատոց մասն՝ երջանիկ և ընտրեալ անուն՝ որ յարաձգեալ մնայ անվթար և անփոխակելի, պատուականից գոլով սիրոյ և յուսոյ։ Ո՜ իեթէ փոքու սերմանի գոյր՝ հատի մանանխոյ չափոյ նուատի հաւատք՝ զերանց մեծութ՟ն փոխէ զօրեղապէս ՚ի սիրտս ծովու, ապա յիրաւի ընկալայք զայն սկըզբընաշաւիղ առաջնորդ կենաց՝ աներկմիտ պաշտօն առ ած, որ զապաւինիսն և ծածկեալսն՝ առանց երկբայութե ՚ի հոգւոյն աչս տեսանէ, երկրորդութէն փառաւորելի անուամբն պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն դասել և յուսոյ։ Ո՜ ի թէ՝ և զերիսն հատուածս առանձնաւորականս՝ ՚ի մի և ՚ի նոյն խորհուրդ դիտեսցես, յաւէտ մեծասցիս նոքօք ՚ի յած. քանզի՝ թէ հաւատաս ՚ի նա, և սիրես. որով և յուսաս աներկբայութեց պարգևաց նորին։

Նմա փառք յաւիտեանս. ամէն։

---

† Մերորին յուսելոյ նշխին հեծութ՟ն՝ նորին հոգւոյ, առ նոյն ողէքս մողլինոց բանի. ՚Ի խորոց սրտից խօսի՝ ընդ այ. *Բան. Ժ․Ա․

Մաւ արդ՝ ես յետինս դաւանողաց՝ ունայն ՚ի բարեաց, նայեցեալ խորհրդով մտացս ՚ի սկզբնաւորն իմ եղելութիւն՝ ՚ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից, յուսով հաւատամ յի քեզ առնել զոր կամի։ Քանզի հաւատացի, վասն և խօսեցայ խոնարհեալ պօղոսիւ, ուսեալ ՚ի դաւթայ, թէ և արդ կենդանի մաղթանք նոյ այց ինձ արասցէ. ոչ հաւատովք ճանաչել զնա, և զզօրութիւն

յորութեն նր̃ , ըստ առաջելոյ , և զհաղորդութի չարչարանաց նորա , և որ զկնի բերին առաջեալքն։ Այսօր է սմին և յայժ նմանատիպ՝ հաւատալն իսկապես և՛ի նորոգս այս փոխադրութի, որ 'ի մեղացն 'ի քաւութի, և՛ի չարագործութէ յարդարութի, և յանմաքրութէ 'ի սրբութի , և յանքաւելեացս պարտեաց մահու յանցանաց՝ յանդատապարտն երանութի , և՛ի ծառայական կապանացս՝ յերկնաւորն ազատութի։ Քանզի զիմ իրդ ոչ արդեօք չքնաղ քանզքան՝ և՛ի մթութէ երկեանու է խաւարի զտեալ՝ և աստուծով օժանդակեալ և օգնեալ սիրոյ մեզաւորի, որ ընդ մարմնապես ծիծաղելն՝ առ նմին հեծէ հոգեպէս։ Որ թէպէտ և յամբարձմանէ բարձրութե գերագունից կայից , ստորասուզել ծանրութե՝ յանդնդայինն մհին խորխորատ դքոյն կործանման , նորագիւտ մեղօքն անջրելեօք , ունի և նշխար նշուլից՝ փրկութե կենաց հպաւորելոր կայծակն լուսոյ պահեցեալ 'ի միտս և յոգի։ որպէս ըղձութն նշանաւոր և զարմանաւոր թանձրամած՝ հըրաշէւք մակարդել վեհին հրամանի՝ 'ի յատակս ներքին նիրհել՝ ջրհորոյն։ Ուստի և մեղուցելոյն իսպառ թաղծելոյ, և ակնկալութի բարւոյն բարձելոյ։ և համարձակութի շնորհին լքելոյ, յուսալ վերըստին անդրէն միւսանգամ նախապարգևիցն փառազարդութեց դարձեալ հասանել։ քանզի և յածուստ անդուստ հանդերձի և այս՝ ներգործիլ առ սոյնս. վս̃ զի սա զտոհմիկն զօրութի՝ ամենահնար աւետարանէ։ Յոր խունկ հաճու է մեծապս հաստոտի ած̃, քան յամ բարութեան անուշից, և քան 'ի խառնելն

երբեմն աղաչմամբ՝ 'ի սպաս խորանին, որ է կերպա-
րան անձանց խոնարհից զինչեալ բեկութբ՝ առ 'ի
միութիւն նոյն նմանութե. Ըստ որում հարցեալ
փրկչին ամենից՝ ցուցանս ախտացելոյս տեսանելեօք,
հաւատամք ասելով՝ առ այդ, թէ կարող եմ առնել
ձեզ զայդ, ոչ պարգևեաց աչաց նոցա լոյս, եթէ ոչ
նախ զհաւատոցն գրաւ ընկալաւ. Քանզի զինչ
քան զմեռելոցն քառօրեայն դիոյ՝ առ կենդանու-
թի մեզ անյուսագոյն, առ որ կանանցն ժամանելոց
'ի յոտս արարչին՝ հաւատոցն հանդերձանօք, անյա-
պաղաբար զփառացն այ տեսլին զհանդէս՝ 'ի յեղ-
բօրն կենդանութիւն.

2 Իսկ աստուածին անկապուտ շնորհին մնացելոյ զկնի
մեղանացն՝ հզօրագոյն են վկայք. Նախ՝ Ենովք.
զկնի ահարոն. յետ նյ̃ դաւիթ. դարձեալ և պետ-
րոս. ընդ որս և փոքրն եղիազար, որ 'ի մեծէն այ
ողորմեալ՝ մեծագունիցն վկայեցաւ. Աւելորդ է
առ այս և բանն առակի անառակ որդւոյն. Թողում
զպոռնիկն՝ որ 'ի տանէ գովեցաւ. և զմաքսաւորն՝ որ
'ի բարեգործէն յիշատակեցաւ. և զաւազակն երջա-
նիկ՝ որ յարձակումն վերջին շնչոյն՝ հաւատովքն պ-
սակեցաւ. և զոր անքաւելին են պարտիք՝ զհաղոր-
դեալքն սպանման մահու արարչին. առ որս և զգլխա-
ւորն ընտրելոց պօղոս՝ որ երբեմն նախանձն էր անօ-
րէնաց. Յորոց ոմանք ծանօթութբ օրինին գըլա-
րեալք, անդրէն կանգնեցան բիւրապատկեան գե-
րազանցութբ՝ քան զնախակրօնիցն առաւելութի.
Իսկ որ նախ քան զօրինակին տնչութի՝ զաւանդն
պահէին հայրենի, միջնաւորագոյն զոլ պատուիրանի

սկզբ

սկզբնահօրն դաւանութե, որ և զնախնւոյն պտրուխ՝
ինքեան վարկուցեալ, զնորայսն՝ իւրովքն տուժեց
կրից տաժանմամբ, ոչ քաւեցաւ միայն ծածկել 'ի
յերկրի, այլ չորչորելեան մարմնով, բանականաց
բնութե կենաց կարապետ՝ յաղթօղ զօրապէս ըղձա
նութե մահու՝ փոխեցաւ. Իսկ ոմանք 'ի բուսոյ
տհաս հասակին չարութն յերկարաձգեալ, 'ի կա
տարեալ տիս ժամանակին, ոչ 'ի բարձրութեն կայից
հասեցան, քան թէ 'ի ստորնականաց թշուառութեց
դժնեից կենացս՝ 'ի կամարն երկնից համբարձան.
Նաեւ թէ այն ժամանեաց կանխաւ՝ զօրացեալ 'ի չա
րեացն դարձ, որ մինչև յոսկեղէն նիւթ յեղանա
կեալ հողոյս գոյութն, և պատկերն արքունի 'ի պղ
տին կերպիս մերոյ՝ նկարեալ արքունականն քան
դակուածով, անկորուստ և անփոխադրելի և յաղթօղ
դաւաճանութե զմերս ենթադրեալ բնութին, ապա
առաւել յուսալի է այժմ մերկապարանոց լուսաւո
րութի անքօղ և անվերարկու՝ տերամբ քի ուխ
տեալ. որով և միշտ հաստատել պահի 'ի մեզ բանն
տրունի, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութե
և կնիք հաստատութե՝ առ հաշտարարն միջնորդ՝
երկնային անմահ կենդանի և մշտնջենաւոր բարե
խօս. Ապա ուրեմն ըստ այսու կանոնի Ճշմարտա
դունի, և անփոխադրելի սահմանի, և արարչաւանդ
տայմանի, համբուրեմ հաւատոց շրթամբք՝ զպատ
կեր բանիս. և ակն ունիմ փառացն շնորհի. քանզի
արդարև յարդարացուցանելն զմեզ այ՝ ոչ ոք զօրէ
դատապարտ առնել, ըստ առաքելական բանին
սահմանի.

ՅԱ ՄԼ յայս անստուերագիր վստահութ(եան) ապա-
տան , կամ կործանելոյ կանգուն . Թշուառա-
ցելոյ յաղթօղ . վրիպելոյ ՚ի դարձն կենդանական .
ամենաթշուառ չարագործի ՚ի յոյս . մահու մատ-
նեցելոյ ՚ի կեանսն . ընդ ապականութ(եան) վաճառելոյ
՚ի ձիրս . դժոխային գործովք գրաւելոյ ՚ի լոյսն .
ստորնասուէր անսանձնակենցաղս յերկինս . կրկին գայ
թաւալելոյ ՚ի վերստին փրկութին . մեղօք կապե-
ցելոյ ՚ի հանդստեանն խոստումն . անբժշկական
վիրօք վիրաւորելոյ ՚ի դեղն անմահացուցիչ . ստամ-
բակելոյ վայրագութ(եան) ՚ի սանձն հանդարտութեն .
որորացելոյ վարատական ՚ի կոչումն . ապառում
գլթնդակս ՚ի հեզութիւն . ընդդիմաբան լուտա-
ցողս ՚ի ներումն . Ի քս յս , և ՚ի հայր նորին
հզօր և ահաւոր , յանուն և ՚ի կամս բարերարութ(եան)
հոգւոյն ճշմարտի . օրհնաբանեալ խոստովանի և մի
ածութեն՝ զօրութիւն և արքայութի , մեծութի
և փառք՝ յաւիտեանս . ամէն .

ԴՍ Երրորդն յաւելուած կրկին հեծութ՝ նորին հայցողի ,
ու նոյն ողբերգ մատենիս բանի . Ի խորոց սրտից խօսք
ընդ այ .      *Բան . ԼԱԲ .

ԱՒ արդ՝ քանզի յաւէտ յառաջնում զղջ-
մանն՝ յուսահատութեն բանիւ լքայ , և
տարակուսանաց հեծանաւն՝ ՚ի մահ ձաղկեցայ ,
աստանօր ՚ի յուսոյն կերպարան փոխեալ՝ յարգա-
հատել համարձակեցայց , զերրորդութին մբ կար-
գալով յօգնաջանութիւն ինձ մեղաւորի . Աւ և
ան

ընդ ստորին երկ յօրհնաբանելն և'ի դաւանելն զկեն-
դանարարն բնաւից ած, իսկոյն և կոչուածն ընտանի
ձայնի ահաւորութե անուամբ շնորհաձիրն բարե-
րարին, մահացելոյս է կենդանութի, ըստ մարգարէին
նախաձայնութե, թէ որ կարդայ զտր, նա կեցցէ.
Իսկ ես ոչ միայն կարդամ, այլ նախ հաւատամ մե-
ծութեն նորին. ոչ եթէ վս պարգևաց նր մատու-
ցեալ յողողք դեգերիմ, այլ իբր զկենդանութի խո-
կապէս, և զինչոյ տուրևառութի հաւատոյ, ա-
ռանց որոյ ոչէ շարժողութի կամ ընթացութի. զի
ոչ այնքան յուսոյն հանգուցին, որքան սիրոյն կա-
պանօք բերիմ։ Ոչ 'ի տուրսն, այլ 'ի տուողն յաւէտ
կարօտիմ. ոչ փառքն են ինձ անձկալի, այլ փառաւո-
րեալն է համբուրելի. ոչ կենացն փափագնօք, այլ
կենարարին յիշատակաւն միշտ ձենձերիմ. ոչ վայե-
լիցն տարփանօք հեծեմ, այլ հանդերձողին տենչա-
նօք' յերկնկամանց սատի կականիմ. ոչ զհանգիստն
խնդրեմ, այլ զհանգուցչին զերեսս աղաչեմ. ոչ
հարսնարանին խնձոյիւք, այլ փեսային անձկութ
մաշիմ. Ի ձեռն որոյ զօրութե' վստահապէս ակնկա-
լութ' վերագրեցեալդ յանցանօք բեռանց' աներկ-
միտ յուսով հաւատամ 'ի կարողին ձեռն ապաստա-
նեալ, ոչ քաւութե միայն հասանել, այլ զնոյն ինքն
տեսանել' յողորմութի և 'ի գթութի և յերկնից ժա-
ռանգութի, թէպէտ և յոյժ եմ տարագրելի.
Արդ' բազում պատկառանօք ամաչեցելոց դի-
մաց կորացեալ, զմիջնորդ ազդման կափուցմանց
երկակի շրթանցս' արժանափակ աղխիւ կարկեալս'
ռանհամարձակ լեզուիս շարժութի, նորոգեցից

'ի յերդ հաւաշման պաղատանաց յեղանակութեց՝ աղիողորմ հեծեծանաց՝ 'ի բարձունս աղաղակելոյ։

### Մ՝ողբոնք չորրորդ՝ որհաւբոդ Գեղջերոյնոյ։

3 Ընկա՛լ քաղցրութբ տէ՛ր ած հզօր, զդատումն ցողիս զաղաչանս․ մատի՛ր գթութբ՝ առ պատկառեալս դիմօք․ փարատեա՛ ամենապարտս, զամօթական տխրութիւնս․ բարձ յինէն՝ ողորմած, զանբերելի ծանրութիւնս․ անջրպետեա՛ հնարաւոր, զմահացու կրթութիւնս․ աւարեա՛ մի՛շտ յաղթօղ, զխաբողին հաճութիս․ բացադրեա՛ վերնային, զմոլեկոյն մաւախուղ․ կնքեա՛ կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս․ ցրուեա՛ ծածկատես, զըմբռնողին չար գտմունս․ խորտակեա՛ անքննին, զմարտողին դիմեցմունս․ Տնագրեա՛ քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ յարկիս․ պարփակեա՛ քո ձեռամբդ՝ զաւասատաղ տաճարիս․ գծագրեա՛ քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս․ կերպացո՛ զքո նշանդ՝ 'ի յետս ելից մաղթողիս․ ամրացո՛ քո աջովդ՝ զհանգստեանս խշտի․ մաքրեսցէ՛ս 'ի հաղբից՝ զծածկարան անկողնոյս․ պահեսցէ՛ս քո կամօքդ՝ զտառապեալ անձն ոգւոյս․ անխորդա՛խ արասցես զքո շնորհել շունչ մարմնոյս․ կացուսցէ՛ս շրջափակ՝ զպար զօրուդ երկնայնոյ․ կարգեսցես 'ի դիմի՝ ընդդէմ դիւացն դասու․ Տո՛ւր հանգիստ բերկրութե մահահանգոյնս նիրհման 'ի խորութե գիշերիս, բարեխօսութբ հայցուածոց սրբոյ ածածնիդ՝ և ամենայն ընտրելոց։

Ամ

Ամփոփեալ պարուրեա՛ զպատուհան տեսութեց՝
զզգայարանացս իմաստից՝ անզրհուրելի դետեղմամբ՝
՚ի ծփական խռովութեց, կենցաղական զբաղմանց,
անրջական երազոց խօլականաց ցնորից, յիշատակու
քո յուսոյդ՝ անմխալելի պաշտպանեալ։ Եւ ընթա
ցեալ վերստին ՚ի ննջմանէ ծանրութե՝ ամենա-
զգաստ արթնութբ, հոգենորոգ զուարթութբ ՚ի
քեզ արձանացել, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ
հաւատոց քեզ՝ ամենօրհնել թագաւոր փառաց ան
ճառից, փառաբանողաց երկնադուամար խմբից եր
գակցեալ՝ յերկրինս առաքել։ Զի դու փառաւո-
րեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն.

† Ս երաբէն յաւելուած նշխէն հեծութե՝ նորէն հեղողի,
առանձին աղերս մաղթանաց բանի. ՚Ի խորոց սրտից խօսք՝
ընդ այ. *Բան. Ժ. Գ.

ՈՎ բարերար հզօր աչաւոր, հայրդ բարի
ողորմութեդ շնորհի, որոյ անունդ իսկ
մեծիդ՝ զգթուն և զընտանութի աւետարանէ
քաղցր՝ դժնէից և անգոհացողաց. Ընդ քեզ և
որդիդ քո՝ իբրև զքեզ, զօրաւոր ձեռն՝ իբրև
զքոյդ, անժամանակ տէրութբ աչեզ՝ ընդ ա-
րարչութեդ քում բարձրացեալ. Եւ հոգիդ մբ
ճշմարտութե, բղխեալ առ՚ի քէն անպառուբ,
կատարեալ իսկութի գոյի, էութի մշտնջենաւոր,
հաւասար քո ամի, փառակից որդւոյ քո մրութբ.
Երրեակ անձնաւորութի՝ համայն անքննին, տրոհել



՚ի

՚ի դիմաց՝ ուրոյն պատուցմամբ․ իսկ միաւորին հա-
մազուգութե՛ նոյնագոյ բնութե տիրապէս՝ անշփ-
փոթ և անանջրպետ՝ միով կամօք և կցորդութե․
ոչ երկեցուն ուսմն ՚ի յուսմն, և ոչ քթթել մի
ական առ նուաղութի միոյն ժամանել, քան թէ
պատճառ սիրոյ երկնային անստուեր լուսոյ՝ որ առ-
մերն է ծանօթութի, միով պսակաւ սրբասացութ՝
անսկզբնաբար ածաբանեալ․ Քանզի արդարև վե-
րաձայնեալս այս խոստովանութի՝ երեքփառաւորէն դ-
դաւանութե՝ զվէմն հաւատոյ պետրոս երանեաց․
իսկ զդատապարտելոյս անձն մեղօք՝ բարեհրաման
քո ակնարկութե, ով խնդրողդ գերելոյս՝ հրաշա-
նորոգ արդարացուսցէ․ Քանզի թէպէտ և քո ի-
ցեն պարգևք՝ և քո՛ ողորմութիք, այլ ո՛չ ՚ի պար-
գևսն ես այնքան հաչակեալ․ որքան յողորմութեն․
զի երկրորդն՝ զքոյդ յաճախէ զփառս, իսկ առա-
ջինն՝ զճգնաւորացն յայտնէ զգործս․ զի պարգևք՝
վաստակոցն են փոխատրութիք, իսկ ողորմութիք՝
մեղուցելոյս բարերարութիւնք․

2 Արդ՝ մի՛ զօրասցին մարդկայինս գործք ա-
ռաջի քոյոցդ շնորհաց՝ ած զթութեց, թէ և
անդր իսկ իցեն քան զօրէնս հասարակաց՝ բնաւորա-
կանս հրամանց, այլ յաղթող եղիցի քոյդ երկայն-
մտութե, նուաղ եղիցի առ քումդ մասին ընթացք
երկրածնաց․ Քանզի և որ մաքրութն պերճա-
նայրն օրինականացն վաստակութիք, ՚ի լուսաւորել
քոյդ արդարութե գուշակ ներկայիս, ամենանուաղ
անձկութե լքեալ հրեշտակին՝ յետնեալ, և յաւէտ
ընդ տարագրականին ողորմելոյն, առաւել նուաղ գտան



կա

կարօտեալ մարդասիրութե. Եւ քանզի ամ ինչ հնարաւոր է քեզ՝ բարերար, լո՛ւր պաղատանաց գոչ-ման հեծութեա՝ որ կարդամս առ քեզ. ողորմեա՛, կեցո՛, և մարդասիրեա՛. Զի քո է երկրպագութի, թագաւորութի, փրկութի, քաւութի, և փառք յամե-նեցունց՝ յաւիտենից ազգաց. ամէն.

✝Ա. Երարին յառնելոյ կրկին հեծութե՝ նորին հեղինակի, առ նոյն աղերս Խաղաղութեան բանի. Ի նոյն ստորեւ իւր՝ ըստ այս. *Ձայն. Ժ.Պ.

1 Պաղատիմ առ քեզ լուսոյ ճառագայթ՝ արքայ երկնաւոր՝ գովեալ անպատում՝ որդի ան-ճառ մեծիդ այ, խոնարհեցո՛ զունկն քո՝ բարձ-րեալ բարեգութ՝ կենաց ապաւէն, նորոգ մեր-ձեցեալ կրկին աստանօր ի հառաչումն նուաղս ձայնի վշտաւորելոյս.

2 Ո՛չ ցուցեալ է երբէք, եթէ աղաչեաց զքեզ ի ձեռն աւազակացն որոյ խոստովանեալն, քանզի կարկամեալ էր. ոչ ձայն պաղատանաց զկնի արձա-կեաց, քանզի անկարինչ էր. ոչ մատամբքն տառանե-լոց՝ զաղէտ վտանգին յայտնեաց տեսողին, քանզի խորտակեալ էր. ոչ աչս կողկողագինս արտասուօք ողբոց՝ բարերարին յանդիման կացոյց, քանզի դա-տապարտէր. ոչ ի պատգամ բանից միջնորդի զողոր-մածին կամս հաճեցոյց, զի անայցելու էր. ոչ հայ-թայթմամբ խորտակել մարմնոյն արիւներանգ ներկ-ուածով ձործոց՝ զգթածին զգիրս ճմլեցոյց, զի զի անյոյս էր. Նա և ոչ ծնգովքն հաստատուն իբր

գարշապարաւ ոտին՝ վարեցաւ, այն զի անյօրէր էր.
քանզի կիսամեռն առել կենդանւոյն՝ սակաւ ինչ
նուաղէ 'ի մեռելութէ. Մանաւանդ զի 'ի քոյոց
խրատեալ բանից, և բարերարեալ քոյդ ողորմու-
թե, և փառօք քո լուսազարդեալ, ոչ միայն զի
ոչ վերջացաւ 'ի հակառակն քո ընթացից, այլ ստահա-
կեալ ապստամբութե՝ յիւր թշնամեացն թիւ յա-
ւելաւ. ընդ նոսին դաշնաւորեցաւ, միաբանեաց
ատելեացն քոց.

3 Իսկ դու՝ բազմապարգև, բարերար, անոխակալ,
ամենակեցոյց, ոչ միայն զի ոչ պահեցեր կչարա-
գործին մեղաց յիշատակ, այլ և ոչ բանիւ յանդիմա-
նեցեր. ոչ ոտն հարեր անկելոյն, այլ կարեկցաբար
մատուցեալ զծայրագոյն ցուցեր զխնամս. Ոչ քա-
հանայապէս ըստ ահարոնեան տկար օրինին՝ զօրա-
ւոր առ մահուն պաշտօն՝ դատապարտիչ անիծիւք
և բանալիր քարինցն ձգմամբ՝ 'ի խորտակումն խոցե-
լոյն արագեալ մատեար. և ոչ ըստ ղևտականն կարա-
պետայլին անկատարագործ՝ 'ի յերկուցն միջի բաժա-
նեալ խորոց՝ հնոյն լրումն՝ և նորոյս սկիզբն, ա-
նայն 'ի հոգւոյ յապաշխարանն հանդիսացեալ՝ զվէ-
րաւորելոյն տեսեր զվտանգ, զի մի՛ սատակիչն օրէ-
նակութե տապարաւն արմատակտրաւ՝ զմահուն պաշ-
տօն 'ի քեզ նկատեալ, յոլով քան զխորհ առակայիցն
սատակեսցի. այլ հեթանոսացն պահպան անուն ա-
սորեստանեացն, որք 'ի հրէիցն ընկալեալ զօրէնն՝
ամբողջ պահեցին, զոր նոքա մոռացան, նոցին կցոր-
դեալ մարմնոյդ վերորկոււ՝ մերակերպարին խա-
նութե, զաղատարարն գծագրեցեր զաւետիս՝ առ


ստա

օտարաշխարհն · և ամենաբարըդ ներգործութ̃ անա-
պականաւ՝ ձեռն կարկառեալ, յարուցեր զմարդն
նախնի՝ մեռուցեալ 'ի մահ՝ խուռովքն ծննդովք.
Զտրտմեցելոյն սիրտ բերկրեցուցեր, և զվհա-
տեալն հաստատեցեր, և զԹշուառացեալն միան-
գամ՝ կրկին զուարթացուցեր. Աւազանին կե-
նարար օծմամբն, և բաժակաւն լուսոյ լցեր. հա-
ցիւդ երկնայնով արարչականդ քոյին մարմնով
նոր յեղանակեցեր. Վերակացութ̃ երջանկայն
ազանց ընտրելոց՝ յանձանձեցեր, գրգեցեր, և
խնամարկեցեր. Հանդարտընթաց գրաստուն տա-
ծողութ̃՝ անզղուելի պահեցեր, մինչև յարկն
լուսոյ ածեր. Ի ձեռն երկաքանչիւրոց միջնոր-
դաց՝ նախնեաց և երկրորդաց՝ տուչութ̃ կտա-
կաց կենդանականաց, մարդասիրապէս դարմանս
տրեցեր. Դու որպ̃ երբեմն ընդ Մովսեսի՝ Թես
տարածեալ արծուոյն օրինակաւ՝ ընկալար զնա,
և՛ի հանգիստն հանդարտութ̃՝ երկրին բարու-
թ̃ առաջնորդեցեր. և զբանին կերակուր՝ ջամ-
բեալ հրամանատրեցեր վարդապետութ̃ց.
Դու արդ՝ որ զբնաւն ծայրագունին բարու̃
լուսոյ՝ յամենայն բովանդակապէս հրաշագործե-
ցեր, զօցտողին զգանձ քեզ սեպհականեալ՝ զքո
ստացուածն առ քեզ դարձուցեր, կեցո՛ և զիս
մաքրեալ 'ի մեղաց պարտեաց, որ ձրի պարգևես
և անպատրաստից. ընդ որոց և ինձ տացես քա-
ւութի և բժշկութի՝ բա՛րեգութ, զ՛օրեղ, ա՛ն-
քննելի, ա՛նեղծ, ա՛հաւոր, օ՛րհնեալ միշտ յաւիտենից
յաւիտեանս. ամէն.

ԴԻ Երարին յաւելուած կրկին հեծութք՝ նորին հանոյն, առ նոյն ողերս մաղթանաց բանի. Ի խորոց սրտից խօսք ընդ այ.

*Բան . ԺԱ .

Ա Իսկ դարձեալ սաստուստ վերստին առ նոյն հե-
ծութ սրտիս վտանկի ինձեն մատուցեալ.
տվին նուագաւ՝ ի նոյն ոճ բանի՝ զամենապարգեւ-
արգահատեցից, տագնապեալ ոգւոյս վտանգ ի-
խուզա. Իբր մեռեալ՝ կենդանւոյ անմահից մաղ
Թեմ այ, խոստովանեալ ընդ փառացդ քո՝ զիմս
անարգութի, և առ չարեօքս իմովք՝ զքոյդ բա-
րութի. որովք յաղթեալ գտայ՝ քան թէ բժշկել, և
ամաչեցեալ՝ քան թէ համարձակել, ուխտակորոյս
աւանդամառաց.

Բ Իսկ կրկին առաւել որ առ իս՝ որ ոչխարին որ-
րուպն տարացուցի, որ յետին անզգայութեն.
և մատնեցեալ մոլորեալ, և՝ ի լերինն՝ ուր ոչէ այցե-
լութի, ընդ գազանականացն դիւաց՝ և կռոցն վայ-
րենութե թափառեալ. ոչ մերձաւոր գոլ սակաւ մի
հօտին. ոչ բան ունելի, որով և ըզձայն ոգն աղէտ պատ
մէի. ոչ ձեռն ձգողական, որ համբոյն է ազդողա-
կան. Իսկ դու միայն գովելի յոկզնանցն յաւի-
տենից՝ և յարդի ծնելոցս դեռեալ՝ ըստ մաղթանաց
գոչման երգողին. ըկս զմեղուցեալս՝ յանհնչոյն մո-
լորութե, խնամողորէն և եսչու թ կամաց՝ հովիւ կո-
չեցար. և ոչ միայն հոգացող, այլև խնդրեցեր. և ոչ
գտեր միայն՝ հրաշագործ, այլ անձառելի բարերա
րութ սիրոյ՝ ի կենդանարար քո յուս բարձեր,
և ընդ երկնային զօրուն դասեցեր՝ ի հայրենիդ քո

ժառանգութեան։ Նուարդ՝ դու՛ Հզօր՝ կենարար՝ օրհնեալ՝ այցելու՝ գթածդ յողորմութեան՝ եթէ զնա ընկալար զպարգևանեալսն աղերսանաց, որ մինն՝ 'ի միջոց մասհու սահմանի էր չարչարեցեալ, իսկ միւսն՝ ըստ անբանից անզգայութեան՝ վտարանդի բացամեր ժութեան յանբնական վայրի վարանել, 'ի բառաչ ձայնի բարբառոյ, որ անկերպաւոր աննշանական, միծայլին բարեխնամութեամբդ տնտեսեցեր զտիեզերահրաշն խնամողութեան՝ առ կորուսելոյն մեծ թշուառութիւն, յայտնեաց վերստին և արդ գթութեանցդ խորք և բարերարութեանցդ հոսանք՝ առ անօրինեալս առաւելութեամբ՝ վերագրեցելոյդ օրինակութեամբ։ Նա բազմօրինակ մասհու պարտականս։ առ որ 'ի ծարութեանց խառնից քաղցրութեանց՝ յատուկ համս չար։ առ անդամս մարմնոյ՝ արժանաւորս հատման։ առ համաձարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս վիրաւոր։ առ հաւասարեալս անզգայութեանց անասնոց։ առ օտարացեալս յընտանութենէ իմաստնոց։ առ աննմանս հանգունակից բանաւորութեանց։ Որ եթէ տարացոյց գոյր, ես սաէի։ թէ նմանակից գոյր իմ, պատմէի։ թէ հանգունակից գոյր ես ձառէի։ թէ հաւասար գոյր, ես գրէի։ թէ կուգագործ գոյր, ցուցանէի։ թէ օրինակ գոյր, ես ասդէի։ թէ յանցեալսն, հայթայթէի։ թէ 'ի ներկայումս աստ, ես յուսայի։ Բայց քանզի անցեալէ ըստ օրինակ, և հրաժարել ըստ նմանութեան, զոր միայն քո՛ է քաւել բժշկել և կենագործել՝ կենդանարար համայն մեռելոց՝ նորոգութիւնդ տիեզերաց։

3. Մի եթէ միայն սրտի՝ տեսութեամբ երջանկին



դաւ

դութայ, անօրէնութեան չարեաց բարձրացեալ ասի
քան զգլուխ, և ըստ ծանրութեանց բեռանց դժուա-
րակրելոց՝ յանցմունք մեղաց. իսկ որ առ իս կրին
ախտալմունք, գերազանցեն քան զհեղեղին ջրակու-
տակ տիեզերասոյզ ամենասպառ ծովուն յորդու-
թեան, և գլխոց լերանց վերադրեալ. Այլ չնչեցէ
օդ քո քաղցրութեան՝ իբր առ նոյին, և որ զէրինա
հալէ զօրութեան, ցամաքեցուցանել զչիղջս ջրակոյտս
բազմակոհակս՝ և երկրակործան խմոցս պարտեաց,
և լեռնակարկառ բարձրութեան մեղացս ամբարձելոց.
Եւ համառօտեալ զբան քո հզօր՝ ամենակար հնա-
րաւորութեամբ, հակիրճ հատուցմամբ, արասցես ահա
ելս քաւութեան, ըստ մարգարէին, առ երկարաձիգս
անօրէնութեան. և ներելով իմս յամառութեան, ով էր
կայնամիտ ողորմած օրհնել՝ թողցես միանգամայն,
բարեգործեսցես իսկոյն, հատցես բոլորովին զան-
վճարելի պարտուցս՝ զարժանահատոյց տոկոսեցս
տոյժս տարժանակիրս. Նա զի՛ և չիք իսկ առ քեզ
ցասումն սրտի, և կամ բորբոքումն բարկութեան, որպէս
ոչ կրին նենգութիւնք, և կամ նշմարանք մթու-
թեան. քանզի կեանք են 'ի կամաց քոց՝ և լոյս,
և ոչ արարեր զմահ, և ոչ խնդաս ընդ կորուստ
մարդոյ, ըստ դաւթի և սողոմոնի.

A Եթէ մարդկան կարգեցեր զայս կէտ սահմանի
մեծի պայմանի՝ 'ի բարեվճակդ քո կանոնաց՝
ոչ փոխատրել անդրէն չարի չար, այլ եօթանասնիցս
եօթն թողուլ անդուստ 'ի յաւուր զիւրաքանչիւր
մեղանաց զպարտս. և այդ բան առ մեզ, որ միշտ 'ի
բնութեան ունիմք բնաւորաբար ուղերձեալ զբիծ

չարեաց՝ անհամար բիւրուց նորոգ յայտնելոց, որք
օրհնաւորին երկնին յանդաստան սահմանի՝ ամենա_
բոյս փշածին բնութես, ըստ անսուտ քո վկայութե,
որ թէ՝ միոջ մարդոյ՚ի խնամս չարի են արժանացել
՚ի մանկութէ. Զի՝ ՚որ զկատարեալ մաքրութին
ունէր՝ աւետարանիչն կենացդ բանի՝ յովհաննէս,
և զէնքն Է հասարակաց բնութե լծակցեալ, հաս_
տատեաց զճշմարտութի քո՝ առ իմս ստութի յոյժ
արդարացեալ. թէ ասեմք ասէ, մեղս ինչ մեք չու_
նելյասուտ առնեմք զնա. Այլ արդ՝ կատարելէ բան
քո խնկեալ, և՚ի գլուխ ելեալ անպակաս ՚ի ստու_
գութէ առ իմս մոլորութի և գժնդակ անիրաւութի.
Այլ ու որոյ խնայեա՛ յիս ողորմութբ՝ քա՛ղցրութե
ճաշակաց աղբեր, միայն օրհնեալդ յամենայն
յաւիտենից. ամէն.

---

†Առ երգոյն յաւելուած նէղին հեծութե՝ նորին հայրի,
առ նոյն տաղերս մաղթանաց բանին. Ի նորոյ սորին եղծ՝
ընդ այ. *Բան. ԺԶ:

1 Այլ արդ՝ դու միայն ած երկնաւոր՝ բարձ_
րեալդ՝ բարեգործ՝ քո՛ է զօրութի, քո՛ նե_
րողութի, քո՛ բժշկութի, քո՛ առատութի, քո՛
են պարգեւք, քո՛ միայնոյ են ձիրք ձրի, քո՛ քա_
ւութի, քո՛ պաշտպանութի, քո՛ հնարք անիմանալիք.
քո՛ արուեստք անգտանելիք, քո՛ չափք անչափելիք.
դու սկիզբն և դու կատարած. Բանզի ո՛չ երբէք
ստուերացուցանէ զլոյս ողորմութե քո՛ խաւար
մոլորութե. վս զի ո՛չ ես գտաւեալ Է մասամբք
ալս

ախտից՝ 'ի վերդ քան զբան · Պատկեր անպարագիր՝ անդր քան զորքանուն կշռուե · անչափ լայնուն փառաց · անտարրափակ ընդարձակութի՝ հաստու զօրութն · անամփոփելի առաւելութի բացարձա-կութն · անտկարանալի բարերարութի գթութն · Դու դարձուցանես՝ ըս մարգարէին, յայգ՝ զստո-ւերս մահու · որ իջեր կամաւ 'ի տարտարոսն ներ-քին արգելականացն բանտի, յորում և մեղթանացն դուռն էր աղխեալ, և գերեալ անտի զմեթերիցն կա-պուտ՝ վտարանդելոցն հոգւոց, սուսերբ հրաման ի յաղթական բանիդ՝ զկապ սատակման մահուն խզե-ցեր, և զմեղացն կործիս ցրուեցեր · Դարձ առ իս՝ որ զընդամ զընդանաւ վհիս՝ տղմասիդ գբոյս՝ յեր կալթս մեղաց · վիրաւորեալ խոցմամբ սլաքաց բան

սարկուին նետից ·

3 Մայլ դու յամի տրդ բարերարողդ 'ի մէջ խա-ւարի, օրհնուեդ գանձ, ողորմած, գթած, մարդասէր, կարող, զօրաւոր, անպատում, ան-քննին, անձառ · բաւական՝ ըստ սբյն յակոբայ · անհնարիցդ ամենից՝ դիւրապատրաստ հնարաւո-րութի, հուր ծախիչ զխաւիւս մեղաց, ճաճանչ կիզանօղ՝ ընդհանրական թափանցանցուե խոր-հրդոյ մեծի, յիշեա՛ զիս յողորմուե քո՛ օրհ-նեալ, և մի՛ յիրաւունս քո · 'ի ներողուե քո, և մի՛ 'ի հատուցման · յերկայնմտուե, քան 'ի հաւաստուե · Եթէ կշռեսցես զմեղանաց ի-մոց ծանրութի, ընդ քաղցրուե քո՛ և մի ընդ-արդարուե · զի առ սակ նախնուսն՝ յայժ ե՛ նուա-զեալ, իսկ 'ի ներհակ վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր ·

3 Տէ՛րդ՝ մատի՛ր առ իս՝ բարութի՛, որ յունկանն
բժշկութի՛ հակառակ քո համբարձելոյն. բարձ
՚ի մեղուցելոյս զհողմ մահու խռովութեան, զի հան-
գիցէ յիս ամենակալ հոգիդ խաղաղութե. Եւ
քեզ փառք յամենայնի, յաւիտեանս յաւիտենից.
ամէն.

† Ս երաբին յաւելուած երկին հեծութե՝ նորին հոգւոյն,
առ նոյն ողբերգ մաղթանաց բանի. Ի խորոց սրտից խօսք՝
ընդ Այ. *Բան. ԺԳ.

1 Տէ՛րդ՝ աղաչեմ զխնամակալդ վտանգաւորաց
տաժանելեաց կրից թաղծութեց հոգւոց
վըշտացելոց. Մի՛ յաւելուր հեծութեանս ցաւ.
մի՛ խոցեր զվէրաւորեալս. մի՛ դատապարտեր զպատ-
ժեալս. մի՛ տանջեր զչարչարեալս. մի՛ գաներ ըզ
հարուածեալս. մի՛ գլորեր զանկեալս. մի՛ կործա-
ներ զդայթագղեալս. մի՛ մերժեր զհեռացեալս. մի՛
տարագրեր զհալածեալս. մի՛ ամաչեցուցաներ ըզ
պատկառեալս. մի՛ կշտամբեր զհարթուցեալս. մի՛ խոր
տակեր զբեկեալս. մի՛ խռովեցուցաներ զամբոխեալս.
մի՛ ալեկոծեր զըքացեալս. մի՛ սասանեցուցաներ ըզ
դղրդեալս. մի՛ շփոթեր զմրրկեալս. մի՛ կեղեքեր ըզ
դիշատեալս. մի՛ ջաղջախեր զբեկեալս. մի՛ գօշեր ըզ
մորմոքեալս. մի՛ կուրացուցաներ զխաւարեալս. մի՛
զարհուրեցուցաներ զապշեալս. մի՛ խորովեր զխար
շատեալս. մի՛ մահացուցաներ զհիւանդս. մի՛ բեռանց
ծանրութե մատներ զտկարս. Մի՛ անուր յաւելուր
կարկամեալ թիկանցս. մի՛ կրկնակի ողբումն՝ դառն

հեծութեանս. մի՛ ուժգնապէս վարեսցիս առ հողս. մի՛ սաստկապէս՝ առ մոխիրս. մի՛ անաչառաբար՝ առ ստեղծուածս. մի՛ ահարկութեամբ՝ առ փոշիս. Մի՛ ընդհարկանիր խստութեամբ մեծիդ ընդ փոքուս. լոյսդ՝ ընդ ստորնականիս. բնութեամբ բարիդ՝ ընդ՚ի բնէ չարիս. ողկոյզդ օրհնութեան՝ ընդ պտղոյս անիծից. քաղցրութիւնդ խնկապէս՝ ընդ համայն դառնութեանս. փառաւորեալդ անփոփոխ՝ ընդ ամենևին անարգիս. կենացդ նշխար՝ ընդ կաւոյս զանգուածոյ. տէրդ տերանց՝ ընդ տղմիս երկրայնոյ. աննուաղ լիութիւնդ՝ ընդ չքաւոր սորկիս. անկապուտ ճոխութիւնդ՝ ընդ անպատսպար տառապելոյս. անկարօտ բարութիւնդ՝ ընդ ամենաթշուառ աղքատիս. Քանզի ո՛վ ոք համեղ յառաւօտ, և՚ի ծագման լուսոյն խիթայ մերձենալ. և կամ ընթերակաց կենաց, մահանալ. կամ ազատութեան, և պարտաւորիլ. կամ շնորհաց, և դատապարտիլ. կամ փրկութեան, և մատնիլ. կամ նորոգման, և եղծանիլ. կամ օրհնութեան, և տարագրիլ. կամ բժշկութեան, և վիրաւորիլ. կամ լիութեան, և նուաղիլ. կամ յաճախութեան հացի, և քաղցնուլ. կամ գետոց հոսանաց, և պապակիլ. կամ մայրենի գըթոց, և նենգիլ. կամ խնամոց աստուածեան աջոյդ, և զզուիլ.

Նուարդ՝ ընդ ախտացելոյն սաստկապէս մարմնոյն բորոտութեամբ, հոգւոյս վտանգաւ և ես պաղատիմ, տէ՛ր՝ եթէ կամիս. կարող ես զիս սրբել. Ընդ աչացաւացն նեղելոց՝ մշտագիշերն խաւարափնօք՝ մեծականկան ձայնիւ հառաչեմ. ո՛չ որդի անուանեմ Դաւթի, այլ ծնունդ Եւայ դաւանեմ.

ոչ միայն ռամբքի կոչեմ, որ վարդապետացն է սպա-
տին՝ կարծողական զխսկն գիտելոյ, այլ տր երկնի
և երկրի հաւատամ։ Ո՛չ ձեռինդ միայն ձգմամբ
հպաւորութե՛, ո՛չ բարեգութ ա՛ծ մերձաւոր, այլ
'ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ՝ ակնունիմ զօրել
քո բանիդ՝ առ իմ բժշկութի։ Ո՛չ թէ ինչ խորոց
կասկածանաց միջոցի բանի, որ երկմտութեն կար-
ծի նշանակ՝ 'ի մէջ արկանեմ կամելոյն և ողորմու-
թեանն, այլ կամիս որպ բարեգութ, և կարես ո՛պ
զօրաւոր։ Ասա՛ բանի՛դ, և բժշկեսցայց։ Ը՛նդ հա-
րիւրապետին հաւատոց՝ և ես լծակցեմ։ ո՛չ մինչ
անցուկ միայն բացակայութե հեռի լինելով խորան
'ի խոյանէ, հաւատամ աղդել քո կարողութեդ առ-
յարութի և բժշկութի, այլ 'ի վերինն երկնի բազ-
մելով և 'ի ստորինս երկրի բովանդակ առ հրաշիցն
սքանչելութի՝ ո՛չ ունիմ հատուցանել։

3 Շնորհեա՛ ինձ, ո՛պ դատակնիք բանին քո վճռեց
առ պոռնիկն ընդունելութիւն՝ հնգից հա-
րիւրոց դենարաց պարտուց շնորհաբաշխութի՛ ա՛ծ-
բարութեց և տր երանութեց. որ յաճախն ընձե-
ռել բզզումն փառաւորիս, և 'ի շատն մատուցմնել
նովին չափ սիրիս. և յառաւելն ողորմել կրկին բար-
գաւաճիս. և յայսքան բարիս՝ իրաւամբք գովիս.
և ամի տէր գոլով հաւասարորդ ճանաչիս. և որ
զըղորն ունիս՝ ընդ մերումն կշռիս. և անճառե-
լեաւդ ձրիւ՝ մերայնովքս վճարիս. և ընդ երկրա-
ւորիս՝ զանվախճանն պարտ վարկանիս. և մեծագը-
րեալ քո զմերն՝ վեհս գոհաբանիս. և 'ի սակաւ ուն-
տուն չուլի՝ գոյգն փառաւորիլ ոչ ամչարտաւանիս.

Արա՛ և ինձ զնոյն գթութիւն՝ ունողիս զգործս
անհամար պարտուց․ զի և ՚ի ձեռս երախտեաց
քումդ պարգևաց՝ նորին իսկ սակով սիրելւոյն կար-
գեսցի․ և քեզ փառք յաւիտ․ ամէն․

† Սերտին յուղղուած կրկին հեծութիւն՝ նորին հոգւոյն,
առ նոյն աղերս մաղթանաց բանի․ Ի խորոց սրտից խօսք
ընդ այ․ *Բան․ Ժ․Բ․

1 Արդ՝ ես ծնունդս մեղաց, որդիս մահացու-
երկանց, արդարև անսահման բիւրուց
քանքարաց տուժից գոլ հատուցանող ՚ի միում
աւուր․ Այլ ոչ թէ առ փոքրկուն մարդկային
մտաց հայցեմ ներութին, այլ առ աննմանագ լիու-
թեն փրկչին մին քո պաղատիմ մարդասիրութեն․
որ չէի երբեմն, և ստեղծեր․ չմաղթեցի, և դու
արարեր․ չև ևս եկեալ ՚ի լոյս, և տեսեր․ ոչ
յայտնեցեալ իմ, և գթացար․ ոչ կարդացեալ, և խը-
նամարկեցեր․ ոչ համբարձեալ ձեռն, և նայեցար․
ոչ պաղատեալ, և ողորմեցար․ ոչ կերպացեալ ձայնիս,
և լուար․ ոչ հեծեծեալ, և ունկնդրեցեր․ գիտե-
լով զարդեան դիպուածոյս, և չանտեսեցեր․ նա-
խահայեացդ աչօք նկատեալ զպատժապարտիս չա-
րագործութին, և յօրինեցեր․ Եւ արդ՝ զքո ա-
րարեալս, և զքո փրկեալս, և զայսքանեաց խնամոց
յանձանձեալս՝ մի՛ իսպառ կորուսցէ մեղացն հար-
ուած գիւտք բանսարկուին․ մի՛ յաղթեսցէ յա-
մառութեա իմոյ մոռացումն՝ ներողութեան քո լուսոյ․
մի՛ սրտիս կարծրութին՝ երկայնամիտ բարութեդ․
մի՛

մի՛ մահացու մեղիս՝ ամենակատարդ լրութեն. մի՛
տկարութիւ նիւթոյ՝ անպարտելիդ բարձրութեն.

ԶԼ. Ահա կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս
յանուն քո՝ Հզօր. արտասուօք ողջ իբրև զաւա-
ջինն, մինչ ՚ի դրախտին փափկութե՝ զպտուղն կե-
նաց կթէի. Աշխանդեալ գօսացեալ ՚ի կոր կործա-
նմամբ ընդ կնոջն տագնապելոյ՝ կոյս անուղղելի հո-
գւոյս լծորդութեան, և երկիր պշուցեալ մեղացն
կքմամբ՝ ամենայաղթ բուռն կապանօքս զի մի՛ զերկ-
նայնոյդ ընկալցի զողջոյն. խոնարհեա՛ց առ իս՝ միայն
ողորմած, զի բարձրացուսցես զվհատեալս խոնարհ բա-
նաւոր անկեալ, և զչորացեալս ծաղկեցուսցես ՚ի
բարի կրօնս վայելչութեն, ըստ ա՟ծաբանութեն սր-
մարգարէին. Ո՟պ զի ծնէ կոյրն անլուսաւոր՝ չու-
նիմ տեսարան, որով զստեղծչիդ նկատեալ զկերպ
մաղթեցից՝ Հզօր բարերարութ, միայն դու պաշտ-
պան ակնարկեալ խնամովք անճառ քո սիրոյ՝ ՚ի շըն-
չական խօսուն քո անօթս, յանէից գոյաւորութի
լուսոյ հաստեսցես. Ընդ երկոտասանամեայ չարեօք
չարչարեալ վշտագին կնոջն տանջեցելոյ՝ գետովք մե-
ղանաց արեան հեղեղին, հայեա՛ց ՚ի բարձանց ան-
մատոյց լուսովդ պարածածկեալ, ուր ո՛չ է. բղխոնցք
ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ, այլ տարա-
ծուածն հրաշից՝ ա՟մ ուրեք զօրացեալ. Ո՛չ օծութ-
իւղով պատմապարտս և մեղաւորին մատուցեալ
առ կենդանածիր ոտից գարշապարդ՝ զկ. թիլս աչացս՝
վարսիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ զամփոփ հա-
ւատս՝ ամբարձմամբ բազկացս՝ ատոյդ դաւանմամբ հո-
գւոյս ողջունիւ շրթանց կափուցմամբ զերկիր համ

բուրեմ, խառնեալ հեծութեան աղբերցս արտա-
սուաց՝ բժշկութեան հոգւոյս աղերսեմ. Աստնէլ
մեղանօք հոգւոյս գոյութեան լուծեալ մեղկութք,
և յերկուց կայից միայնակողմանք անհաստատ հե-
տովք, զնթացից գործին՝ նահանջմամբ չարին՝ ըզ
հետս՝ եկանն բարձողութեան շինուածոյ մարմնոյս՝ առ
ելս ծառոյն կենսաւէտ պտղոյն խափանեցելոյ, պա
տապարեցես անդրէն վերստին՝ միայն հնարաւորդ
առ 'ի փրկութիւն. Ո փառաբանարան հաստուածոյ
կերպիս 'ի քէն եղելոյ՝ ամրափակ խցմամբ համրա
ցոյց արգել հողմ բանսարկուին, հոգւոյդ քո ազդել
մեծդ ողորմութք, ըստ յաւետարանին բժշկեցելոյ,
հրաշափառապէս բարեգործեսցես բանդ կենդանի՝
ինձ խօսողութեան անայլթափելի. Ընկեալ կամ չա-
րեօք 'ի մահիճս ախտից ընկողնոց մեղաց՝ դի կեն
դանի և խօսուն մեռեալ, կարեկցել իմում թըշ-
ուառութեան՝ ողբականօք գգուանաց ձայնից, ո՜վ բա
րերար որդի այ, օրհնաբանել աչացդ ցօղով վերա-
կանգնեսցես 'ի կենդանութիւն, իբր զեղբայրն 'ի
յանշնչական մեռելութենէ. Սոյն դառնացօղս 'ի
դքի մեղաց կամ տարակուսեալ, ձեռն մատուցել
որև անստուեր որդի բարձրելոյ, հանցես զիս 'ի լոյս
քումդ նշուլից. Ընդ աղխողորմ թշուառութեան
կականման ձայնի՝ այրւոյն 'ի նայելն՝ մօր միամօրին,
տատանմամբ մատանցն, կոծմամբ կրծիցն, հոսմամբ
արտասուացն, տուայտանօք տխրութեան դիմացն՝ և
ես պաղատիմ վերջին հեծութբս, տուր յուսահա
տելոյս զքաջալերութիւն մխիթարութեան գթած քո
բանիդ, ասելով և ինձ գովելագ բարի՝ ատեղծ ին


աղ

աշխարհի, թէ մի՛ լար դերի՝ բազմաց ողբալի․ որով
ընդ պատանւոյն կենդանացելոյ՝ 'ի վշտացելոյ ծընո
ղին ափոփանս՝ զամենապարտ ողբս ընկալեալ 'ի քէն
ընդ նմին կրկին նորոգել։ Ընդ այսակիր անզգայե
լոցն՝ դիւաւլուկ և քարակոծ հեղձամղձուկ եղ
կելի անձանցն, քստմնելի դիւախառն հերացն, փայ
լենլերես բանդագուշելոցն 'ի քէն ողորմեալ փրկիչ
բոլորից, իբրև զնոսին առաքեալ դիմեցից․ հերքել
մերժեսցես զդունդս չարացն ապականողաց՝ 'ի քո
խորանէս. զի ժամանեալ հոգիդ քո բարի՝ այսրէն
հանգիցէ, լցեալ զմարմինս մաքրութեամբ չնչոյս՝
զդեցմամբ անդամոցս՝ զդատս արտաքսես զխելագա
րեալս ամենաթշուառ։ Ընդ գերեցեալ դժոխաբը
նակաց վտարանդելոցն հոգւոց՝ արգելեալ կամ 'ի
վտանգի, զՃառագայթ ողորմութեան փառաց քոց
ծագեալ՝ լոյսդ իմ անձկութեան՝ 'ի կապանաց օդոտղէն
զերծեալ զիս ապրեցուսցես։ Պաղատանորդայթ ան
երևութերակ վրիպակ արահետ դարձութեամբ մե
ղաց ջրդողեցեալ ոգւոյս կերպարին՝ կայ 'ի տագ
նապի, զծածկեցեալն 'ի տեսողութեանց՝ զչարագործին
նիւթիցն այսուցմունս, քո ինքնաւորդ զօրեղու
թեամբ՝ որդի Աստուծոյ, դթածաբար առողջացուսցես։
Ո բազմազան տարազս ցեղիցն զանազանից ախ
տաւորութեանց մահացուցանողաց՝ իւրաքանչիւր կո
րուստեան բերիւք՝ դժնդակարմատն շառաւեղօք
հաստատեցելովք՝ 'ի յանդ աստանի անօրէն մարմն
ոյս, տարակորզեսցես 'ի ձեռն ձեռինդ ամենակալի
որ արօրադրեալ միշտ՝ և մշակես զսահմանս հո
գւոյս առ բանիդ կենաց արդիւնաւորութիւն։



Եւ

3 Եւ քանզի անցաւ ըստ նմանութի օրինակութեց յանցուածոցս մերոց, Տր Ճարակօղն քաղցկեղի, առ ընաւ անդամս մասնաւորեալ զախտին տարածումն, չիք սպեղանի իբր իսրայելի առ անչափութի խարանացն մատուցանել, 'ի խարախաց բուժիցս՝ մինչև ցաւին կառուցման ըութեն անդամոցս՝ չէ առողջութի, այլ ամենևին անբժշկութի. Իսկ դու՝ ողորմած բարերար օրհնել, և երկայնամիտ Թագաւոր անմահ, ըստ պաղատանացս արգահատութե ողոքիս վտանգի, որ կարդամս առ քեզ Տր 'ի նեղութեան.

† Աղօթքին յաւելուած նշխին հեծութե՝ նորին հոգւոյն, առ նոյն ողբերգս ձայնակցեալ բանի. Ի խորոց սրտից խօս ընդ Այ.

## *Բան . Ժ . Թ .

1 Նայեա՛ց՝ ամենահայեաց տեսութիւն կենաց բարութե յուսոյ, 'ի մեծաբարբառ աղաղակ ցաւագնեալ անձինս հեծեծանաց. Անհաս մեծութի. անուն ահաւոր. բարբառ կենդանի. լուր ցանկալի. Ճաշակ ախորժելի. կոչումն պաղատելի. բարութի խոստովանելի. ազդումն խնկելի. իսկութի դաւանելի. էութի փառաւորելի. գոյութի օրհնաբանելի, տէր յմ՝ ընդ Հօր քում գովեալ և երկրպագեալ, և ընդ Հոգւոյդ Սբյ բարձրացեալ և վերաձայնեալ. Որ միայն մարմնացար վս մեր՝ ըստ մեզ, զի արասցես զմեզ վս քոյ՝ ըստ քեզ. Լոյս Այ, յԱմի ողորմած՝ Հզօր՝ երկնային. Եւ այժմ զլուծեալ և զխորտակեալ հողանիւթ անօթ՝



ամ

ա̃ծօրէն հրաշալիերութեամբ, աղաչեմ զգ՛թած, նո-
րոգ հաստատեա։ Ո՜վ քոյին պատկերս մեղօք հընա-
ցեալս՝ ՚ի քրայս հալոցաց՝ կայծակամբ բանիդ, պա-
ղատիմ առ քեզ, վերստին ձուլեա։ Ո՜վ խախտեալ
շինուածս քումդ հանգստեան խորանի մարմնոյս՝
պահպանաւ հոգւոյս, մաղթեմ բարերար ՚ի բընա-
կութի քեզ մաքրագործեա։ Մի՛ հատուցաներ
չարեացն իմ գործոց՝ զնոյն փոխատրութի։ Ա՛ր-
բեալ եմ, ըստ մարգարէին բանի, և ո՛չ ՚ի գինւոյ։
Թափեա՛ զմրուրս անօրէնութե՝ թմբրութե մա-
հու բաժակիս՝ ազատարար հրամանաւդ՝ ա՛մենա-
կեցոյց, զի մի՛ զքոյդ քամեցից ՚ի վերջին աւուր
յետնում հատուցմանն։

2 Արդար ես յիրաւունս քո, և յաղթօղ ՚ի դատաս-
տանի։ Եթէ մահու մատնես, ճշմարիտ են գործք
քո։ Եթէ դատապարտես՝ աստուստ սկսեալ զտան-
ջողակինն կշտամբութի, սաստոյգ են հատուցմունք քո։
Եթէ յանդունդս խորոց սուզեսցես, թէ զկենդա-
նութի չորժմանս բարձցես, թէ զբանիս զօրութի
ունայնացուսցես, թէ զաչացս պատուհանս ստուե-
րացուսցես, թէ զկենացն ճաշակ ՚ի քեզ ինքն ամ-
փոփեսցես, թէ զհասարակաց կերակրոյս դարմանս
բարձցես, թէ զաւուրցս հարստութի համառօտես-
ցես, թէ ընդ իջման քաղցրութե ցօղոյ՝ և հուր
տեղասցես, թէ ՚ի լռութե բանի քո սովեցուսցես,
թէ զականջացս դրունս խցցես, թէ զշնորհիդ ձիր
կտրեսցես, թէ զդետին յատակի ոտից սասանե-
ցուսցես, թէ յանձկալի երեսաց լուսոյդ քոյ հան-
ցես, թէ ՚ի համօրէն աշխարհէ աստի հերքեսցես,



Թէ

թէ փայլատակմամբք հրոյ պակուցես, թէ անբը-
ժըշկական ցաւօք դատեսցես, թէ դիւաց չարաց
մատնեսցես, թէ գազանաց ժանեօք մանրեսցես,
թէ հողմով ցասման հոսեսցես. և թէ այլ ինչ նորոգ-
արարած տանջանարանաց կազմեսցես՝ չար քան
զտարտարոսն, և սաստիկ քան զգեհեն, թունա-
ւորագոյն քան զորդունսն. տարակուսելի քան
զխաւարն, երկիւղագին քան զխորխորատն. ողոր-
մելի քան զմերկութին, վկայեմ անձամբ անձին՝ յոյժ
պարտապան գոլ սոցա.

3 Եւ քանզի յաւետ տպաւորագոյն են նմանութիք
փոխաբերութեան՝ առ ազդակցութի մեղանաց՝
իբր պատկերակիցք միատեսակք զուգաշաւիղք՝
նշանակիչք այսր խորհրդոյ, արդ կարևոր է խոստո-
վանել և յանդիմանել զերեսացն ծածկոյթս՝ առ
ծանօթութի խնդրողին. Ես՝ զի ոչ ջերմն սիրով
առ ընկերին կրկին մատուցայ, յերաւ ի'ինքնումն
վրանի ին տառապեալ սառնում. Եւ զի ոչ զցան-
կականն խորախտականութի սանձեցի, յարժանի կրեմ
եղկելիս՝ զանզովանալի զկիզումն. Եւ քանզի ոչ
սիրեցի զլուսոյդ աւետիս, արդ ար հատուցմամբ՝
'ի մթութի ըմբռնողական միգին կորստեան՝ վը-
րիպեալ դանդաչեմ. Եւ զի ոչ խորեցի զմանու-
նըս փոքունցն յանցանաց, իբր անխնասակարք
վարկանելով. պատկանաւս 'ի խածանողականսն զա-
զիրն զեռնոց՝ խմթեալ խոցոտիմ. Եւ զի ոչ ձեռն
կարկառի՝ առ կերս վտանգաւորին՝ այց առնել նը-
մին, 'ի դէպ է սակ՝ ըստ գծագրութե այսր օրինակի,
ապականութեն գրոյ նուիրեալ մատնիմ.


Եւ

4 Եւ արդ՝ ո՛չ յա՛մծուստ ամենաբարի գանձուցդ՝
չարիս, և ո՛չ ՚ի լուսոյդ նշուլից՝ խաւար, և ո՛չ
յապաւինութենէդ՝ գայթագղութի, այլ ես ինձէն
կորստեան որդիս գտի զայսոսիկ. մեղանք անօրէ-
նութե իմոյ գանձեցին նիւթեցին զայսքանեաց
բարկութե մթերս հոգւոյ. իշխանին մոլորութե
հընազանդեալ, թողի զտեղի քո՝ Տր, ըստ գրոյն
խրատու յանդիմանութե. Եւ քանզի յայտնեցաւ
յետուստ՝ գաղտնեաց առականաց մարմնոյս անդա-
մոց, և արկաւ զերեսօք կերպիս՝ անվայելուչ
ստուեր ամօթոյս, որ մարգարէին առակի, տգեղու-
ցուցեալ զիս ամենևին՝ իբր մերկացեալ խայտա-
ռակեցելոյ պոռնկի, ծածկեա՛ յիս զլոյս քաւութե՝
ա՛րքայ երկնաւոր, զի թօթափեալ զմեղաց փոշիս,
ըստ աւետեաց ձայնին դարձելոցն ՚ի բաբելոնէ,
նըստայց վերստին կանգնեալ ՚ի հողոյ, և ՚ի հաստա-
տուն յուսոյդ հիմնացեալ անսասանելի, որ եսայ-
եան բանին, զգեցեալ զզօրութի բազկի կարու-
թե նախնում մաքրութեն, վն մեծութե փառաց
քաղցրութե՝ ամենապարգև քոյ ածութեդ. օրհ-
նեալ յաւիտեանս. ամէն.

---

† Սերտէին յաւելուած նըկէի հեծութե՝ նորին հոգւոյ, ու նոյն տաղերս մաղթանաց բանի. ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ. *Բան. Խ.

1 Տէ՛ր տէր՝ անոխակալ և երկայնամիտ. ներող բարեգութ, հզօր, ողորմած. ահա՛ ճշմարտութի են գործք քո, և խոստովանեալ



դա

դատաստանք քո. վկայեալ են ընտրութիւնք քո՝ ան-
սողդ ծածկութեից. Ընդ երից երջանկից մանկանցն,
որք կիզանողական բոցովն փորձեցան և ոչ վնասե-
ցան 'ի բաբելոնին, զնոցա թախծութն զերդն հա-
ւաչեմ, մեղայ, անօրինեցայ, յանցեայ, ապստամբե-
ցայ, և պատուիրանաց քոց ոչ անսացի. Այլ քանզի
մաքուր գոլով 'ի մնասուց նոքա, և զայս խոստովա-
նութիւն գոչէին, իսկ ես ընդ նոցայն՝ նովին աղեր-
սիւ ձայնակցեալ ամին ողբոց երգութ, և ոչ յա-
ւելից՝ ամենապարտս մահու. Ընդ դանիելի երա-
նեալ և սրբ մեծ մարգարէի, որ 'ի քում հարազատու-
թեան ազգականութե տանն յուդայի՝ շառաւիղ
ընտրեալ, զնորայն առեալ ընդունական և նուիրա-
կան բանից պաղատանս, իմովս պատժականութե
գոչմամբ հեծութեան՝ և այլ կրկնեցից. 'ի մէջ դե-
տուեան՝ անպատշաճականս գնացի, զարտուղի սխա-
լեալ դժնդակապէս. այսէ՝ ամիծ ամ իրօք մեղան-
չելն. Ըստ սահման կշռութ կամաց քոց արտաքս
վարեցի. որ է հաւասարի կերպարան՝ բասիր անօ-
րէնութ. Ընդ իմոյցն հափոց՝ չարութ գործոց՝
լրումն յաճախութ նիւթեցի. որ է ճշգրիտ պատ-
կեր յանցաւորութ. Ապառնացար, և ոչ զարհու-
րեցայ. արդահատեցեր, և ոչ երբեք լուայ. որ է ա-
պըստամբութ յայտնի նշանակ. Զնեղ արդարութ
հանդերձեցեր՝ բարերար, և ինձ ամօթ և պատկա-
ռանս պատրաստեցեր. քեզ փառս վայելչականս, և
ինձ նախատինս յարմարաւորս. քեզ քաղցրութ
յիշատակ, և ինձ մաղձ բացախեալ 'ի կատարածի.
քեզ բարերանութի անլռելի, և ինձ ձայնս ողբոց

աղաղակի․ քեզ օրհնութիւնս երգոց ինկելի, և ինձ
մերժումն տարագրութեան անյուսալի: քեզ իրաւունս
բազմարժանիս, և ինձ պատասխանատուութիւնս ամե-
նավարանս․ քեզ բարձրութիւնս անճառ գովեստից,
և ինձ զաճիւն լիզելոյ՝ պատիժ ձաղանաց․
Ու արդ՝ ընկալար դու բարեաց ընտրութեանց
անկշիռ սահման՝ զքոյոցդ ախորժականաց կնդըր
կաց ստողոց վեր առեալ ըստ քեզ, և ես զիմոյս ա-
տեն առ ամին պարսաւանս յոգունս՝ կրկնակի բար
դեալ ինձ ըստ իս․ Իսկ եթէ անարատիցն մաղթա-
նաց՝ այս էր յանձնառութի, իսկ ինձ զո՞րս հիւ-
սեցից չարս և տողս բանից դարովականաց, որ քան
զոմն դժնեայս՝ յաւէտ վրիպեցայ․ Մոլորեցայ ա-
նառակ ընթացիւք՝ ՚ի միտս վայրենիս․ յանդգնեցայ
շրթամբք խօսից՝ ՚ի բանս երկրաւորս․ ճակատեցայ
անկասելի՝ ՚ի պատկառելեացն գործոց․ Փքացայ,
վերացայ, որ յետ սակաւ մի ժամանակի՝ ՚ի հող մա-
հու եմ իջանելոց․ գոռոզացայ, բարձրացայ, որ և
ո՛չ զգրաւական հոգւոյս՝ տուր և առութեան շնչոյս՝
ունիմ ՚ի ձեռին․ Ամբարտաւանեցայ՝ փոշիս շնչա-
ւոր․ ամբարհաւաճեցայ՝ կաւս ձայնաւոր․ հպար-
տացայ՝ հողս անարգութեան․ ՚ի վեր ամբարձայ՝ մոխիրս
մերժելի․ բազում կառուցի՝ բաժակս մանրելի․
Տարածեցայ առաւել իբր վէհ, և դարձեալ իբր
զհերքեալ՝ առ իս ինքն ամփոփեցայ․ Նարկութեն
բոցով ցոլացայ՝ տեղմս բանաւոր․ իբր զոնմեռ ոք՝
մեծամտեցի, որ է քառոտանեաց մահու եմ փա-
կեալ: Գիրկս արկի կենցաղոյս սիրոյ, և ՚ի քեզ թի-
կունս՝ փոխանակ դիմաց դարձուցի․ ՚ի թռիչս մտաց՝



ընդ

ընդ խաւար խորհրդոց սլացայ․ զանտրատ հոգիս՝
մարմնոյս փափկութիւն յաւէտ վատեցի․ զզօրութի
աջական կողմանս՝ տկար արարի, ահեկանացս կայից
ու ժգնութի տալով՝ յաղթեցի․ Օ քեզ իսկ տեսն
հոգացեալ մտ իմ․ զոր չէ ասա գրելի, և ո՛չ պատկա
ռեցի․ երբեմն զհաւ վայրենի սրացայ, ըստ ովսէեան
բանին առ եփրեմ՝ ի նախնին իմ սովորութի․ Յաղօ
թարանն վայրի՝ ընդ պատաղմունս այսր կենցաղոյս
շրջանակեցայ․ ո՛չ կացուցի յոտին զերիվար մտացս՝
երասանաւ բանին․ Ընդ հին չարութեցն՝ նորոգ
ինքնաստեղծութիս գտի․ անուրս, ըստ յոբայ, ծա
նուցս և անտանելիս՝ ինձէն ինձ սատակացուցի․
առիւծ անկարկատելի, ըստ երեմիայի, զանձն իմ
արարի․ իբր զվիժած անդրելի կողման, ըստ առակ
արկողին, ի մարդկանէ համարոյ եղծայ․ իբր զհան
դերձս ինչ ապահարից, ըստ եսայեան բանին, զաղ
բացայ․ որպէս զթրծեալ աման խեցեղէն՝ փշրեցայ ա
նարծարծելի․ ըստ բամբասանացն եղոմայ ի մարդա
բէէն, զչորրորդ չափին անօրէնութե սատակման՝
ինձ պատրաստեցի․ Եւ զի՞նչ սոսուի առ այս՝ և
զայս յաւելուլ ընդ այս, քանզի զվերանն իսկ դի
ւանունս մողոքայ՝ առի ինձ այսրէն՝ առ դժոխոցն
ժառանգութի, լքեալ զերկնայինն՝ յեղանակաւ
իմն օրինակի նմանակիր ձևակերպութե, որպէս առակ
պատկերի ատեղն ռեփանայ բաբելական կիւրոյ
էլէ պատուեցեալ ցուցաւ ի սինայ․

Իսկ արդ՝ զի ի նախնի շնորհին համարձակութ
դարձեալ փոխեցայ, ըրկեցայ, ելայ, հեռացայ, բա
ժանեցայ, և անպատուասատելի կորուեցայ, արդ ընկալ


զիս

զիս տէ՛ր՝ վերստին կերպարանել ՚ի պատկեր հոգ-
ւոյ, զանարժանս կենաց՝ իբր զմահապարտ. իբր
զչարագործ. իբր զպատկառեալ. իբր զկոխան
եղեալ բանսարկուին. ո՜վ զանբժշկելի մանրե-
ցեալ. ո՜վ զհասեալ յատակս մահու. ո՜վ զգար-
շեցեալ. ո՜վ զխոտան գտեալ՝ քո կողմանդ. ո՜ր
միանգամայն ՚ի կորուստ վարեալ. որպէս դե-
գերեալ. ո՜ր վանեցեալ. ո՜ր տարակուսեալ.
ո՜ր թշուառացեալ. ո՜ր վհատեալ. ո՜ր կոր-
ծանեալ. ո՜ր խորտակեալ. ո՜ր բեկեալ. ո՜վ
զլծախծեալ. ո՜ր տրտմեցեալ. ո՜ր թշնամա-
նեալ: Իսկ դարձեալ ակնարկելով քո՝ գ՛թած,
մարդասէր, հ՛զօր, ՚ի յաղերս բանիս՝ որպէս
զզջացեալ. ո՜ր խոստովանեալ. ո՜ր ՚ի յոյս քո
դիմեցեալ. որպէս զապաշխարեալ: Որ կշռես՝
դրեա՝ և մեծ համարիս զհառաչ հոգւոյ, և զաղ-
դումն շնչոց հեծութեան. զկսկիծ շրթանց,
զպաքել լեզուի, և զտխրականութիւն երեսաց.
զկամս խորհրդոց, և զյօժարութիւն խորութեան
սրտից: Որ փրկութիւն ես անձանց, և տեսօղ՝
ո՜չ գործեցելոց. և ստեղծիչ բոլորից, և բժիշկ
վիրաց աներևութից. պաշտպան յուսացելոց, և
բարեխնամօղ տէր ամենեցուն: Նու քեզ փառք
յամի, յաւիտեանս. ամէն.

ԺԱ Սերովբէն յաւելուած նշխէն հեծուէ՝ նորին հանգոյն,
առ նոյն ողջոյն մողբանոց բանի։ Ի նորա սերէց խօսք՝
ընդ այն։ *Բան. ԽԱ։

1 Սուքանչի ես ինձէն անձամբ իմով ինքնա-
գրաւ ՚ի մահ՝ ոչ կացի երբէք ՚ի յուսա
մարդոյ, և ոչ սիրտ բանական ստացայ, ըստ գրոյն։
Սուքանչի ոչ փոփոխեցայ ՚ի նախակարգելոցդ,
և ոչ ընդ բարուոք ուղին ընթացայ, ընդդէմ ոչ
զխոստորնական հետոցն խաւարայնոց զդեմս դուցից՝
՚ի սահման կարգի այսր ընթերցուածոյ։ Եւ որս
ածեալ յարմարեալ առ սոյն՝ զկերպարան տեսակի
բանիդ երեսաց, ըստ վերադոյնդ նշանակելոյ՝ ան-
փոխադրելի պահելով, խոստովանեցայց վերստին
դարձեալ ասատանօր՝ զմնացեալ չարաւնցն զբիծս,
զոր յաջորդաւդ է իմանալի։
2 Օտար ժանտագործս արժանապատիժս՝ աճեցուն
արարի գնացիւք անսաստութեամբ՝ զպուռնդն բե-
ւիարայ։ Սոքաւս կայթից՝ և ցոյցս վաղից՝ խաղա-
կացն դիւաց դարշելեայ ձարտար խաբողաց՝ ծու-
լուբս իմով շնորհեցի։ Գռանս գաղտնիս՝ և խոց-
ուածս անյայտս՝ ՚ի կործանեցելոցն դաշձագ ընկա-
լայ։ Ոչ հերքեցի զվանեալսն խաչիւն քի՛ քան թէ
անդրէն առաւել կրկին իսկ զօրացուցի։ Սան
իմոյ հիքոյս անօրէնութեամբ՝ անուանդ մի հայհոյի
՚ի մէջ այսականաց, ոչ վս խորայելի՝ ՚ի մէջ հեթա-
նոսաց։ Հարուածս հարուածոց՝ մնասակարս ասպա-
կանութեանց ժանդոյ և թրթրոյ՝ և այլոց կերչաց
վատնողաց, զծաղիկ հոգւոյս, ըստ միոյն յովելեայ

հրաշական ողջոյնոր 'ի ցոյցս երկրի մտ̅ իսրայէլի
յառակս հինից և չարաց հոգւոց, յիս ինքն անկե-
ցի. առեղծանել զնո̅ պատրաստեցայ չքան թէ սատա-
նել. Արիւրս կուտեալ հաւաքեցի անձին իմում՝
մարտիկս մահաշէնս. կշտամբիչս ինձ գոյացուցի՝
անիրաւս և անպատկառելիս. ներհակս ինձ զօրա-
ցուցի՝ ապառումն և անկումելիս. դառինս ինձ
առի մասունս՝ ընդ քաղցրաւենեացն ճաշակաց. առ
ատացօղն՝ միշտ նենգաւորս. և առ բանսարկուն՝ յա-
ւէտ հաւատարիմս. Աւաղ աղէտիս, վի՛շտ վտան-
գիս, խաւա՛ր ամօթոյս, մութ պատկառանացս, զիա՞րդ
և առ բանիս յանդիմանութի համարձակեցայց.
մեծ է ձայնս գուժիս և անբերելի բողոքս աղաղակի.
Քանզի թէ զհոգիսեր զիմ տեսանել, տգեղս՝ և
նուաղս՝ և ամենևին ներդաեալս, ցաւոլք հեծու-
թեան՝ 'ի վերջինս վարձս վարանմանս, և մրճատեալ
աղտեղեալ գունով զազրութեան՝ իբր զպաշտօնեայ
տար մեհենի. մն զի նոյն է ապա տանել ձուլեալ
պատկերի և մեղաց ախտի. Արդ՝ ես գնացի ընդ
այս ճանապարհ կորստեան հետոց խաւարի. եւտու
զքածինն քո ցանկալի՝ յանապատ անկոխ, ըստ մար-
գարէին՝ որ առ քահանայսն իսրայէլի ամբաստա-
նութեան.

3 Եւ զիա՞րդ աստացից անձին իմում մարդ՝ գրելո
ընդ անմարդիս. և իբր անու անեցայց բանական՝
անբանիցն յիմարութե կցորդեալ. և որպէս կոչե-
ցայց տեսանողական՝ մթացուցեալ զլոյս որ յիս.
և ընդ էր համբաւեցայց զգայական՝ զիմաստիցս դը-
րունս փակեալ. կամ որո՞վք ցուցայց տպաւորութ

նկարագրութեան անեղծին շնորհի՝ անձամբ ինձէն յոգի մահացեալ. նաև ոչ շարժողական, և կամ շնչական ունիմ անուանել, թող թէ հոգեկան, կամ մտաց ընդունական. անպիտանս՝ 'ի թիւս անօթոց. անարգս՝ 'ի քարինս որմոց. արհամարհեալս՝ 'ի կարգս կոչեցելոց. վատթարս՝ 'ի յազգս հրաւիրելոց. արհաւիրք մահու պակուցեալս, անխտախուսելի 'ի բոլորեցուն՝ ցաւովք և տանջանօքն երուսաղէմի, ըստ երեմիայի բանին խըրատեցեալ. պակասեալ աւուրցս՝ 'ի հեծուէ, և ընթացք ամացս՝ 'ի հառաչմանէ, ըստ նուագարանաց երգողին. Իբր աստուի 'ի ցեցոյ՝ և փայտ 'ի յորդանէ, ըստ իմաստնոյն բանի, 'ի խիղճմանէ սրտիս հալեցայ. իբր զոստայն սարդից մաշեցայ, ըստ սաղմոսողին, և խոտանգտայ. իբր զամպ առաւօտեայ՝ և զշօղ վաղորդայնի, ըստ մարգարէութեանն ձայնի, սպառեցայ. Այլ ոչ 'ի մարդ որք ունիմ զայս, եթէ անիծեալ 'ի տեսանողէն՝ անյուսադրելի վհատիմ, այլ 'ի քեզ՝ տէր իմ ոգեսէր. որ ընկղմեալ 'ի քոյդ գթութեանց բարեաց անբաւից, և 'ի բևեռելոյն ժամու 'ի խաչին՝ մաղթեցեր մեծդ ողորմութեան առ հայր քո բարձրեալ՝ քո

չարչարողացն.

Արդ՝ շնորհեա՛ ինձ յոյս քաւութեան կեանք և ապաւէն. և 'ի տուր շնչոյս թշուառի, առից զոգիդ քո բարի. Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով զօրութիւն, յաղթութիւն, մեծութիւն և

փառք յաւիտեանս. ամէն.



Դար

+Սրտին յաւելուածն կրկին հեծութե՝ նորին հաւաք, առ նոյն աղերս մաղթանաց բանի. Ի խորոց սրտից խօս-
ք ընդ այ. *Բան . ԻԸ.

Վարձեալ պղլաբանեցից՝ ի նոյն շարունակ բար-
դեալ զկշտամբանացս եղանակ՝ գարուլեալ
անձինս, ածեալ մատուցեալ՝ կրկին կացուցեալ
նովին պատկերաւ՝ ի նոյն պայմանի. Թերեւս գրեա-
ցէ ինձ ամենագէտն՝ զայս յանդիմանութե-
դատակնիք՝ կսկծեցուցանողական բանի՝ ճշմա-
րիտ խոստովանութի համայնից գործոց՝ զաղ-
նութեանց չարեաց.

2 Այլ ոմն ձիս խօսնական՝ կարծրբերանս սանձակոտոր
արձակերասան. յովանակս անհամբոյր՝ վայրենական
և անկրթական. երինջս աւողական՝ անուղղական և
անվարժական. Մարդս մոլեգնական՝ ուրադրական
և կորստական. մանուկս մեղանչական՝ անխրատական
և վարատական, անտէրս մահապարտական՝ տարտա-
մական և անգործական. բանականս անասնական՝ գա-
ղանական և անմաքրական. Ձիթենիս ամայական՝
անպտղական և կործանական. մարմինս հոգեւոյս իմ
թախծողական՝ դատողական և տանջողական. խռո-
ցեալս անբժշկական՝ անխնամական և անկանգնա-
կան. Ոսկի շարս կայսերական՝ աղտեղական և ան
գտական. ծառայս սխալական՝ փախստական և
թշուառական.

3 Հա ես ինքն ինձէն կամաւորապէս անձնամատն
և մոլեմնակործան, հոգեկորոյս և միշտ մոլախաբ,
կամակոր իսկ՝ և որոտաբեկ. ուշամոռաց և հանձա-



րա

րազզըու · զգայազիրն, և իմաստասպւս · յայլրատատեա
և եղեռնալորը · Ես սատուսատ և անդուսատ բընա֊
ւիւք բովանդակամբք մանհարքեր երկամբք փառաւորս
ոչ միով լինիք տեսութե՛ ՚ի գործ ընտրութե քեզ
պինտանացուս՝ տէ՛ր · բոլորէ ո֊ · որ ամ զոր ամպյննս
որ երկնեցն զիս · աշխարհեմ զատինան, որ դիեցուցին·
ընդդէմ ոչ մաղձ մակարդեալ ընդ կաթինն ձգեցի,
և զերկրորդ ոչ դառնութի ինձ ընդ քաղցրութե·
ջամբեալ մատուցաւ · Ո՜ր իսկ եթէ ես ինձէն անձին
իմում դժնեայ դատախազ համբարձայ պյպքանեօք
բանիւք, և ունիմ տակաւին զսուր բարկութեա
անխոնարհելի, ով որ ՚ի յերկրածնաց աստի զիս ո֊
գջքեացէ · զա՛մ խայտառակեցից · զանաւ էութիս
դատեալ տուժեցից · զհամօրէն զխասակարացն ըզ֊
գունդ՝ գանեցից · զխոցողացն զինուորութ ցդա֊
տախազեցից · զգայականացն գլխաւորութիս կշտամ
բեցից · Մեղայ ամե՛ն յամի, ողորմեա՛ դը՛թած · ոչ
նոր ինչ գտեր յիս զյանցանաց պարտեաց մատա֊
խուղ, այլ նոյն եմ յաւէտ նովին պատահմամբ պար
տաւորութեան՝ անկցելի ձորձով սխալեալ առաջի
քո անփոփոխելի · և դու միայն ինկապէս գթած
որհնեալ մարդասէր, ընդ աջմէ իմոյս փրկութե.

կանխեալ ներութե անսայլայելի ·

Արդ՝ մարդա խնամակալ՝ հզօր՝ երկնաւոր՝ բարե֊
րանիրդ հաստիչ յոչ էից՝ զբանիւ զօրութեան
իմաստից կայծակն ՚ի գործի աղդման լեզուիս շար
ժութե, առիթ մաքրութե յամենուստ զգայակա֊
նաց գոյութեց յիս մանաւանդ ելոց՝ քո ձեռա
կերտից · տեղօք առ՚իքէն եղելովք և բժշկելովք,


կը

կրկին հանդերձանօք, անպակաս ձայնիւ, անհատ
բարբառով քեզ վերընծայել գոհաբանութիւն ՚ի
փառս մեծութեան հօրդ քո՝ այ մերոյ, յաւի-
տեանս. ամէն.

† Մերաւին յաւելուած նշխէն հեծութե՝ նորին հոյովել,
առ նոյն ողջէրս մոլորանաց բանի. ՚Ի խորոց սրտից խօսք
ընդ այ. *Բան. ԻԳ.

1 Տէր ած ամի, զօրաւոր յամի. անպարագիր և
անփարափակ տեղի ամենեցուն. բոլոր
խնկութք հուպ յամենեսին. անուրեք վայրից.
և չէ՛ք սահման առանց քոյ. Ո՛չ երևեալ եր-
բէք, և ո՛չ տեսականութի առանց քո ծածկման՝
լուսաւոր. փառք աչաւորութե. անուն ան-
հասութեան. կոչումն մեծութե. ձայն ան-
բաւութե. խնկութի անքննութե. Աննմա-
նելի հեռաւոր, և անընդմիջելի մերձաւոր.
Տեսող հեծութե. նրկատիչ թշուառութե. մօտա-
կաց թախծութե. ամենաբուժ հնար սնձարու-
թեան. հայր գթութեց. ծագող ողորմութե.
ած մխիթարութե.

2 Հայեաց տէր ողորմութեամբ՝ ՚ի պատկեր մխտաց
դատնութե՝ բազմավտանգ կրիցս կարեաց, զոր
հանդէպ քո տարածանեմ կցորդակի՛ց լեր բժշկա-
պետ, և մի՛ ՚ի խոցս ընտրութեան կոչեր դատաւորա-
բար. Որդարև մեծ է վտանգ տարակուսանաց
ցաւոց՝ այսր վարանման, յորժամ իցէ մարմինն՝ մե-
ղօք գրաւել. և անձն ՚ի գործոց չարեաց ոչ մեկու-
սացել. գործնականացն գործի սովորութեն կարեաց
կապեալ.

զանգուածն հանդերձանաց՝ միջացու կրիւք շաղա-
խել. զզգայունն սրտին իմաստից՝ խելթիւ խոցոտել.
ակնկալութի բարեացն՝ բնաւին բարձեալ. և՚ի
բանականութեն՝ ընդ անասունս դասակարգեալ.
և զազնիւ գարշութի՝ ընդ գոյութեն շարամանեալ.
և տեսականացն ողջ ելով՝ իմանալիքն վիրաւորել.
Ու ՚ի խստութէ յանցանցն յշտկի՝ յետ յուսահատել
և տագնապաւ նախագործելոցն՝ միշտ տարակուսել.
և յստակութիւն աղերսին՝ իսպառ պղտորեալ.
և խղճիւ մտացն յաւզմանց՝ կրկին ձենձերեալ.
Ու ձեռն՚ի մանկի գործոյն՝ զայետոնցն հետազօտել.
և կերպ՚ի յոյժ դժնեալ՝ ուրք՚ի վերջ կայ յետահորել.
Ու գիտութե էիցն՝ ՚ի չէիցն միշտ խաբեցեալ.
և՚ի մտացն մարտ՝ ՚ի փոքունցն յաղթահարեալ.
Ու ՚ի թոյանչ սրտին՝ հագագին դուռն հրդհել.
և բռնաւ զօրութի քմացն՝ ամ ուրեք տոչորեալ.
և անարև մըգով՝ յամենայն մասանց պարփակեալ.
Ու լոյսու ի ակնկալութեն՝ ամենևին իսպառ ամ-
փոփել. և անլեբրելեցն տղմ՝ ՚ի զզուելիսն տպաւո-
րեալ. և եղկութի կորստեանն՝ ՚ի յաւշ անդ եկեալ.
և դատակնիք հատուցմանն ՚ի դիւնէ մտացն դրեցել.
Ու բարերարին ակն՝ ՚ի ցասումն իմն երևեցեալ.
և լոյսն բնութե՝ զանկուածոյ հողոյս զայրացեալ.
և աջաւորուի էին՝ ը փոքրկուի բնութես ը հարել.
և միշտ արտամիմ բանից՝ բանուոր մխրոյս բարկա-
ցել. և իրաւունցն վիմօք՝ զարժանիս մհաւ կոշկոճել.
Ու որ իմն է տաղնոյ յանաւկս՝ ատէն կորուսել.
և պատուական իրին տուացուած՝ իբրև անարգ՝յերկ-
րի թաղեալ. և տաժանմանցն արդասիք՝ ծուլութեն



մթով

մթով ծածկեալ, և իբրև զ՚ի բաց բարձեալ նշմա-
րան ձրագի՝ չերևեալ։ Եւ պատասխանատուն լեզ-
ուիս՝ յիրաւանցն օտար՝ կարկեցեալ. և անհամբոյր
շրթանցս դրուԹ՝ օրինաւոր դատմամբ պապանձել։
Եւ յուզմունք մտացս՚ի զանազան մասունս ցրն-
դեալ. և զկեալն ՚ի մի օգտին՝ ոչ ինչ գխոսացեալ։
և՚ի կշռութի բարւոյն ընտրութե՝ յիմար երևեալ։
և ընթացք ելից՝ նշանջմամբ չարին խափանեալ։
և վառարան իւրոյն՝ աձիւնով հնոցի լցեալ։ Եւ
անուանս գիր՝ ՚ի կենաց մատենէն եղծեալ, և կըշ-
տամբանք ընդ երանութե՝ անդ արձանացեալ։
3 Եթէ զինուոր տեսանեմ, մահու ակն ունիմ.
եթէ պատգամաւոր, խոստութե. եթէ մատենա-
գէտ, մուրհակի կորստեան. եթէ օրէնաւոր, անի-
ծից. եթէ աւետարան, կան, փոշւոյ տոհցն Թօթափ-
ման. եթէ բարեկրօն, յանդիմանութե. եթէ առա-
ուում, կսկծման. Եթէ ջրոյն ընտրութե փորձիմ
խորտակիմ. եթէ դեղ ինչ դատման ձգեմ ստատա-
կիմ։ Եթէ բերս նկատեմ բարութե, ՚ի կարծեաց
չարեացս փախնում։ եթէ ձեռն համբարձեալ կո-
րանամ. եթէ փոքր ինչ խրատուիլ, սարսեմ եթէ
սակաւ մի Թնդիւն, ըսսփիմ։ Եթէ ՚ի խորախձանս
ըմպելեց հրա-կրիմ դողամ. եթէ մեծի դ յանդի-
ման լինիմ սարսափեմ։ եթէ ՚ի հարցումն բանի կո-
չիմ, կարկիմ։ եթէ իրաւամբք քննիմ համրանամ։
Որդ՝ այսքան ամենաԹշուառ և ողորմագին տարա-
կուսանացս ՚ի մի մեանց բարդելոց, որք զատուրև
զ.այակնաց սրտիս պայուԹե՝ ՚ի ներքուստ ան-
տաստ անբժշկական ցաւօք՝ աներևակի նետիւք

 խոցո

ցուցանել, անարատաբերելն մշտակեր յարամնաց հանա-
պազամուխ ըստեռեալ սատուսա է հոգւոյս. ըն-
ցեալ շարաւով՝ կրկին հարուածով վտանգ սաս-
տակման մահու գուշակեն. Թէ արախ մթերից՝
պատել զերկաթով գաղտնեացս ծածուկք՝ ազդ-
են ինձ տագնապս վէրս պահեալս անխնամարկե-
լս՝ ըստ ելս շնչոյս տուր եւատուէ. յորոց ներու-
թեց չարաչար ձնշեալ աղաղակ ձայնիս՝ խառնեալ
արտասուօք. կողկողագին թախծանօք հոգւոյս.
բարեգործիդ հնարաւորութե, յերկրատեղ-
ծիցս նահատակաց՝ ըստ իմ մաղթողաց, վերջին
հեծութս և ես ըստ նոսին՝ արտասուօք ողբոց ա-
մենեքումբք նուիրողօք՝ զաղերսանս ըղձիցս՝ 'ի
սուրբնայնոցս սատի՝ յերկինս առաքեմ: Ո՛ նոր-
հեա՛ տ՛ր անդորրութե կենաց հանգստեան՝ ողորմե-
լի վաստակեցելոյս՝ 'ի յընդունայն երկրագործու-
թս. համայնդ յամենայնում. տմի՛ ստացեալ. քեզ
փառս.

† Մերսաին յառելոյծ կրկին հեծուէ՝ նորին հոկողի, սու նոյն ողբերս մաղթանաց բանի. 'Ի խողոց սրտից խօսի՝ ըստ այ.

* Բան. ԻԳ.

Ո՛ւ արդ՝ որոց խնդրոց արժանաւոր վարկանե-
լով զիս՝ մատչիմ աղերսել, արքայութեանն՝
յորմէ վրիպեցայ, եթէ փառացդ վայելչութե՝
յորմէ զրկեցայ, թէ կենացդ անմահականաց՝
յորմէ հերքեցայ. թէ ըստ հրեշտակն պայծառ-
ցութեան՝ յորմէ օտարեցայ, թէ ըստ ար-
դարոն մասնակցութեան՝ յորոց ձեղքեցայ.



Թէ

Թէ ո՞ւր որթոյն կենդանւոյ՝ յորմէ քանցեցայ ։
Թէ ուստ տնկոյն բերկրութե՛ յորմէ դօսացայ ։
Թէ ծաղիկ փառացն շնորհի՝ յորմէ թափեցայ ։
Թէ պանծանացն ժառանգաւոր՝ յորմէ կորացայ ։
Թէ հայրենի ծոցոյն հարազատ՝ յորմէ ընկեցայ ։
Եթէ զգեստուն լուսոյ պարծիմ՝ յորմէ մերկացայ ։
Եթէ՚ի խոստացող դրախտին յուսացեալ՝ յորմէ խորթացայ ։
Եթէ ՚ի լուսոյն իղձս դիմեցից՝ յորմէ մեկնեցայ ։
Եթէ յխաւսի յոսկերան յօդիմ՝ յորմէ մերժեցայ ։
Եթէ ՚ի թեւս նորա մերձիմ՝ յորմէ օտարացայ ։
Եթէ յապաւէ՞նն ապաստանեցայց՝ յորմէ խեթեցայ ։
Եթէ ՚ի փրկութեն նորոգու՞թ՝ յորմէ մահացայ ։
Եթէ ՚ի զգաստուեն զուարթու՞թ՝ յորմէ եւ լքայ ։
Եթէ ՚ի կանո՞նն կենացն ու խոտի՝ յորմէ փոլեցայ ։
Եթէ ՚ի սահմանն հաստատութեան՝ յորմէ սահեցայ ։
Եթէ յանշարժ վիմին պնդու՞թ՝ յորմէ սասանեցայ ։
Եթէ ՚ի շուրս գումարտակին՝ յորմէ հոսեցայ ։
Եթէ՚ի քաղաքն անդրանկաց շինիմ՝ յորմէ գերեցայ ։
Եթէ հանապազորդեան հացի՞ն աղօթեմ՝ զոր ո՛չ
վաստակեցայ ։ եթէ փոխադրու՞թ երկանցն խընդ-
րեմ՝ յոր ո՛չ քրտնեցայ ։ թէ պարգեւօքն պսակե-
ցայց՝ յոր չհանդիսացայ ։ թէ արձան ինձ կենաց
դրեցից՝ յորմէ ընջեցայ ։ թէ զերախտեացդ ձիր
յիշեցից՝ զոր միշտ մոռացայ ։

Բ. Հա՛ հատաւ եւ կամ խզեցաւ լար կենաց յու-
սոյն ։ տխրեցայ ՚ի բորբոքեցն դարշութենէ ։
համայն ախտացեալ՝ ամենն սպառեալ մարմնոս ապա
կանուՅն շրջապատեալ՝ մեռոյց ամ ։ Դոյզն պա-
լար՝ փայլունակ տեղեղ լնացեալ ։ մնացուած ինչ


պա

պաշտեալ նախանձնակ երկդիմի կերպին , որ զերկին
անմաքրութիւն նշանակէ , պարծանացն նշոյլ՝ ամե_
նեւին ինձ շիջաւ · փրկութիւն մատնեցաւ · բարին
ստուերացաւ · ելք կենացն՝ բնաւին փակեցաւ · մը
խիթարութիւն բարձաւ · դատաստանին ատեն մերձե
ցաւ · Թոյնք մահուն ինձ արծարծեցաւ · ապաւէնն՝
կրկին ինձ կենդանացաւ · լուսոյն դադարք՝ վիմօք
խցաւ · շաւիղն յուսոյն՝ կուրացաւ · շնորհին ծած
կոյթ՝ յինէն մերկացաւ · փառացն վայելչութի՝ ըստ_
ուերացաւ , համձարն առաջնորդական՝ խափանե_
ցաւ · կշտամբանացն փուշ՝ բազմացաւ · անօրէնութեան
ուղէշ՝ ծաղկեցաւ · բոց գեհենին՝ ինձ բորբոքե_
ցաւ · ծառայութեան լուծ՝ սաստկացաւ · ստրկութեան
կապ՝ զօրացաւ · ունօղն յարկին կառուցման՝ ահա
անկաւ · բարձրութեան վտահարան՝ կործանեցաւ ·
ընտանութեան միաւորութի՝ անջրպետեցաւ · որբու

թեանն սիրող հօրին իմյ՝ որոտմեցաւ ·

3 Ու քանզի զվերջինն համբուրեցի դառնութի ,
տանջանս՝ խեթս՝ ախտութիս , վէշտս հոգեկանս ,
ցաւս անխնամարկելիս , տարակոյսս անյուսադրելիս
ամօթանս անպարտուրելիս , խայտառականս անմերար
կելիս , պատկառանս անհամարձակելիս · փախուստս
անդառնալիս , հալածանս անմարդասիրելիս , երկայն
ուղևորութե՝ ապաձեռն անթաշակութիս , իսկ
դու փրկութի զօրութի և օգնութի , ողորմութի
լուսաւորութի . քաւութի և անմահութի տէր յս
քս , որդի այ կենդանւոյ , արարիչ երկնի և երկրի ·
որ ընձեռես ջուր պարգևելոցն ՚ի ծարաւուտ վայրս
անապատի , օրհնեալ բարեգութ հզօր մարդասէր ,



եր

երկայն. միտ, խնամակալ հնարաւոր, այցելու. պաշտ-
պան աննախանձ. պահապան յաղթօղ կեանք անկո-
րուստ. միջնորդ երկնային, լութի աննուաղ,
երանութի տօնելի, ձեռն ձգեալ սիրոյ՝ ողորմու-
թեան քոյ աջոյ՝ ընկա՛լ և մատո՛ քաւեալ և սրբել
զիս զամենապարտս՝ բանդ կենդանի առ հաւասա-
րապատւի քո հօր. զի քև վերստին հաշտեալ յիս
դարձցի. Եւ 'ի ձեռն քո՝ խորոմ կամօք մաքուր
նուիրեալ՝ զօրեղն ինքնութե̅ զիս հօր ընծայեալ,
անդէն առ նմին՝ նովիմբ միշտ 'ի քեզ՝ չնչոյս ող-
ջունիւ կապեալ ընդ շնորհիդ՝ 'ի քեզ միանալ ան-
բաժանելի. Ա̃յ քեզ ընդ հօր քում՝ հոգւովդ-
սրբով երրեակ անձնաւորութե̅դ՝ 'ի միում բնութե̅
և 'ի մի ա̃ծութե̅՝ փառք, և 'ի ստեղծականաց էից՝
գոհաբանութիւն, յաւիտեանս յաւիտենից.
ամէն.

+ Ս̃երատին յաւելուած կրկին հեծութ̅ եւրին հակողէ. տառ նոյն ողբերս մեղկմանց բանի. 'Ի խորոյ սրտից խօսք ընդ ա̃յ.

*Բան. ԽԱ.

1Բայց քանզի 'ի մի̅ այսքանեաց գերութե̅ց ամե-
նաթշուառ վտանգաւորիս՝ մի զմիով ել և
ելս առնելոյ, զոր զներբողարանս անցիցն 'ի մաս-
նէ վերածառուեալքդ նախադրեցին, ուստի և
փոխեալ զեղանակ բանիս՝ այլ ոչ զեղկութիւն
աղէտիս.
2Ան զի ծովէ ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք՝
յոյժ նմանագոյն. յորում կոհակօք բազմօք անթիւ



դի

դի Եցմանց՝ տատանեալ հոգիս ՚ի յայսմ աշխարհի՝
մարմնոյս շինուածով իբր ՚ի նաւակի. Ո՜վ որ ե-
տայխաս մարգարէ՝ զյանկարծադէպ կատարածն,
որ ՚ի պարսկականն հինից եկեալ և սամարիայ կոր-
ծանմանն, նմանութ այսր օրինակի կերպաւորե-
ցոյց. որ և առ իմս հոգևորական խորտակումն զու-
գաձայնել՝ ոչէ սխալական. Քանզի մինչդեռ չը-
նէի ես յանհոգութե՝ անտարակոյսն վստահութբ.
դոյզն կասկած արկածից ՚ի միտ բերելով առ խորոց
փոքր միջոցին, որ ՚ի մէջ հանգստեանն և աշխատու-
թեանն իբր այն թէ հասեալ իցէ ձմեռն՝ յամարայնի,
բքաբեր հողմով ժամանեալ՝ երեքպալեանն դիմակը
ցութբ, ամբոխեաց զհանդարտութիւն. Աւստի
նաւն ՚ի բախմանէ վայրենի ալեացն՝ խորտակեցաւ.
Թևոցն ձեռնարկութե՝ քայքայեցաւ. կայմն ամ-
բարձման՝ ՚ի կայից իւրոց խլեցաւ. առագաստին թըռ-
չարան՝ յանկարկատելի ծուէնս պատառեցաւ. շին-
ուածոյն շուրք՝ անզարդացաւ. առասանք ձգողակա-
նացն՝ խզեցաւ. տեսարան դիտոյն դիտակի՝ խոնար-
հեցաւ. ապաւանդակին պարան՝ կտրեցաւ. ապա-
ւինութե խարսխին՝ լուծաւ. լուծք ստուարք ա-
մուրցն կցորդութե՝ բաժանեցան. սամիք ուղղչացն
հետոց՝ զալարեցան. լուստ հիմանն հաստարանի՝ ըն-
կղմեցաւ. զեկացն կառուցմունք՝ անդրին սուզան.
չուոցն յարմարութե՝ պակասեցան. ողնափայտին պա-
տսպարան՝ խակյն բեկաւ. կապընք զօտին հաստ-
ուածոյ՝ յօշատեցաւ. գօտք ամփոփման ծոցոյն կող
մածոյ՝ անսորդեցան. խելք շրթանցն եզերաց՝ խախ
տեալ սատեւ. պաղպաջունք բազմականացն՝ անկեալ

[illegible]

[illegible]

մաքրեսցես 'ի [illegible] [illegible] [illegible]
կամ [illegible] [illegible] : Իսկ թէ [illegible] [illegible] 'ի [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible]
[illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] :
Եւ թէ կամիս [illegible] [illegible] [illegible]
[illegible] : Եւ թէ [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] : Եւ թէ
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] : Եւ թէ [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] :
4 Եւս [illegible] [illegible] [illegible] [illegible] , [illegible] [illegible] [illegible]

նա

ջարեացն հնարք՝ ընդ որ ոչ կարացից անցանել, եւ
եթէ լոյս ողորմութեան բարերար կամացդ քոյ ցուցցի․
գթութեան քոյ դուռն՝ բացցի․ ճառագայթ փառաց
քոյ՝ ծագեսցի․ խնամք ձեռին քոյ՝ յայտնեսցի․
արեգականդ կենաց որ՝ տարածեսցի․ առաւօտիդ
ընձայլ տեսիլ՝ մերձեսցի․ առատութիւն քաղցրութեան քոյ՝
աղբերասցի․ վճռակ արարչիդ կոչեց՝ հասեսցի․ ծո-
րութիւն անապակ սիրոյ քոյ՝ հեղցի․ ծագումն աւե-
տեաց շնորհի քոյ՝ երեւեսցի․ պարգեւիդ քո ծառ՝
ծաղկեսցի․ մատունք օրհնել մրմնջոյդ՝ բաշխեսցի․
համառօտեալն ակնկալութիւն հանդիպեսցի․ հաս-
տատեալ ձայն ողջունի քոյ տէր՝ լուիցի․ հեռա-
ցեալ խաղաղութիւն՝ մերձեսցի․ Յայտնեալ յաւէտ
տեսլեան սահմանաւ երանականաւ՝ հաւատ ընկալեալ
յուսոյ հաստատնոյ, ապաւինեալ ՚ի հոգին քո սուրբ,
որ ընդ հօր քում պաշտի ձայնիւ քաղցրութեան՝ ընդ
քեզ փառաւորել ՚ի լոյս անմատոյց, որով կեանք եւ
երանութիւն քաւութեամբ հանդերձ՝ ընծայեալ ինձ
մեղապարտիս։ Յաւանդ անկորուստ ընդ իս պա-
հելով առհաւատչեայ ճշմարիտ յիշատակի․ ՚ի ձիր
աներեւութեան՝ անուանմամբ անճառելեաւ ահաւորու-
թեան՝ հզօրի միոյ միայնոյ եւ անքննելի տէրութեան
երրեակ անձնաւորութեանդ․ որ եւս յաւիտեան յէութեան
եւ յարակայութիւն բարձրութեան՝ քաղցրութեամբ ողոր-
մութեամբ եւ մարդասիրութեամբ՝ պսակեալ հանդերձեալ
եւ թագաւորեալ։ Ոյ առ ամենեսին, ամէն՝ ամէն
կարող ես՝ գթած․ եւ քեզ վայել է փառք յայսմ յա-
ւիտենի, եւ ՚ի հանդերձեալ մշտնջենաւոր ութ յայտ-
նութեան աւուրն մեծի, յաւիտեանս․ ամէն.



Նա

1 Եւ արդ՝ սոսուդապէս և իրաւաբար, ընդ որս
որք ըստ ձայնից կողկողանացն՝ և ըղձանիցն յար-
մարութիւն հանդերձեն, 'ի նոյն դեր բերեալ
զաւարտմունս տանցն, որովք առաւել սաստիկ
մորմոքեալ ճմլեցուցանեն զաղէտս կարեացն սըր-
տին ըղձից՝ առարտասուացն բղխմունս. ուստի և
բազմեալ իմ 'ի գլուխս պիրու՝ ակմբից դասու՝ այնր
երախանաց, որք զլալեացն յեղանակեն բանաստեղ-
ծութի, և ես ընդ նոսին՝ նոցին հեծութբ՝ առ
ղական ձայնարկութբ զանձինս տարածանեմ զվըշ-
տակրութիւն. Որ ոչ բնաւին մեռեալ աշխարհի,
և ոչ իսկապէս կենդանի այ. ոչ ջերմ սուկ, և ոչ
ցուրտ յատուկ, ըստ առակի աւետարանչին՝ դրեալ
'ի յայտնութեն. երեւցս ատելի՝ երրեակ տէրութեն,
և ամենատես արարչութեն. Եւ այս են պատկա-
նեալ թախծականացն կերպադրութիք, կրկին ողոր-
մելի այսու երևեցեալ, որ 'ի մի գիծ սահմանեալ
կացուցանեն զթշուառութեցն զօրինակ, այսպիսի
կցորդութբ շաղկապեալ:
2 Պարտուցն ժխտել զողնդացն՝ ձեպով մեծաւ 'ի
տուժի. ես ապիկար մատնել՝ անարժան գործովք
յիրուի. վասնիչ արքունի գանձուց՝ կրկնադատ և ան-
թողլի. պարտախնդ մեծին՝ ըմբռնել անհրաժարելի
բիւր քանքարոց խնդիր՝ և ես չունիմ կշիռ մի ունկի.
Անբարեխօս կապել 'ի պահեստ՝ դառն արգելանի.

հեծութեան և վտարանգ ցաւոց ճաշկեն՝ յաննշոյլ բան
տի, անապական տանջել անթօշակ՝ կամ ողորմելի
այլ յեղանակ ինձ ողբականաց՝ սաստուստ կնքեցի,
փոխատրեցի սովին բարբառով՝ կոծ կսկծելի,
կարգադրեցի շրջաբերութե՝ 'ի նոյն պայմանի ,
անհատական թիւ խորհրդական՝ երկնէ կտանելի·
Աղքատութեն հնոց՝ յամենուստ մատանց մրրկի·
անպատսպար թշուառ՝ վտանգել սրտիւ 'ի դրաւի·
տարակուսեալ հոգւով՝ ապաշնորհ այր 'ի վերպ·կի·
անխնամելի հայցմամբ՝ դատաստանն յինէն պահանջի·
Մեղաց և մահու զինուք՝ զգայարին գաղտնեցս խո
ցի·անփրկելի մատնեալ բռնութե՝ չարեացս դերի,
սուր սուսերու սաստից՝ գոյութի բնութես յօշատի·
Յիշատակաւ բեմին՝ սաստին 'ի դատաստանի ,
անծագելի մռայլ՝ չարատես աչացս երևի ·
անձեռնկալ կապեալ՝ եղկելիս 'ի տարակուսի ,
ահարկութի դիմաց՝ պատկերի վերնոյն տեսանի·
Յոյժ անարկ՝ և անվերարկու 'ի տարտարոսի ·
անապական մոլար՝ մորմոքեալ 'ի հուր գեհենի ·
անդայթնելի կորուստ՝ կործանեալ 'ի մեղաց վհի·
Ահա զոր ունիմ արծաթ անպիտան՝ ոչ երբէք յղդի,
և ոչ ընդունի և կամ համբարի՝ 'ի գանձ տրունի·
հայցուած պղտոր և ձեռն անմաքուր՝ աննուէ իլելի·
Այլ թեկել սրտիւ մատանց տատանմամբ՝ յոյս առել
դարձի, զդեմս 'ի յերկիր եդել պաղատիմ՝ մօրդ յի·
բարեխօսեա մաղթեա քաւութի ինձ մեղաւորի·
դու զօրաւոր փրկանակ կենաց՝ իսկուհի երկնի·
քեզ օրհնութիք ձայնից և բուրմունք՝ խնկոց 'ի յերկ
րի, և անուշից իւղոց մատուցու՝ մըն յամենայնի·

3 Արդ՝ յասացելոց ողբոցս հիւսուածս՝ այլ մասն յաւելել, բարերարին շնորհաց արտասուաց պտուղ մատուցի. զկորուսեան խորս չափելով՝ զորքան երբէք ոչ գտի. մասնաւորօք բանիւք ՚ի հանդէս՝ նորին ջանացի. զմտացս արագեալ զթեւս՝ յերեւոյթ իրին ոչ հասի. զուշին պարտուն յանվթարելեացն՝ բաժակ բարկութե ՚ի ձեռն իմ առի. զտարտամութ տարակուսանացս՝ իբր ճաշակումն մահու արբի. Արդ այժմ զյանցեցն յանձախութ՝ ողորմելի ձայնիւ յերգ արկի. աներեւոյթ կրակարան տապոյ՝ բորբոքմամբ մեծաւ անզուլանալի. անտեսական իմն վրայս հալեցաց՝ սաստիկ եռացմամբ անշիջանելի. ալեաց նետից պատկանել դեղովք՝ ՚ի շտեմարան խորութե սրտի. խիթք ցաւոց խոցոտման մահու՝ ՚ի գնացս երակաց գոյութե լերդի. կիրք երկանց անձարակ ձեպոյ՝ ՚ի պատուածս աղեացս անելանելի. անզօրելի դեղոց ջերմութ՝ ՚ի յերիկամանց մասունս երկակի. անհնարաւոր դառնութի մաղձի՝ ՚ի նախադուռն իմոյս կոկորդի. Աւաղս ձայնից լքուցանողաց ՚ի փողս շնչոյս խոչորս հնչի. բազմահատուած էութի բնութես՝ ներհակք միմեանց ՚ի պատերազմի. երկշոտութ կարծեաց վարանեալ՝ ամենայնիւ կայ ՚ի վտանգի. հարազատաց դաւաճանութ՝ անհաշտելի ՚ի կտտորուածի. ոչ մեռեալ եւ ոչ կենդանի՝ թաղեալ ՚ի մեղաց գարշութե տղմի. կասկածաւոր պատժապարտութե՝ վերականարկելով քեզ բարերարի, յանակնկալս կենաց վհէ՝ արտաբերել ՚ի լոյս անձկալի.

4 Նոյն ինքն որ զայս՝ բան տպաւորեաց, ընդ եր-



ջան

ջանկա՛ցըն պսակեսցի · անկարկելով քո ողորմութ̃,
անարատի՛ ցըն հաղորդեսցի · վասն զենման ոյ բա-
նիդ, բարեգործեալ քեւ կենդանասցի · օրհնութ̃ի
գովեալ քո շրթանց՝ ՚ի գլուխ բաշխողի՛ այսր մա-
տենի · հաստատեսցի ըղձականութ̃ի՝ սողոմոնեան
բանիս առակի · նկարագրեալ հոգւովդ քո՝ բարձրեալ
՚ի նորոգումն անեղծանելի · Զի դու միայն ես եր-
կայնամիտ, ներողդ՝ քեզ փառք յաւիտ · ամէն ·

---

† Ս. Երանելին յօրինած նշխին հեծութե՝ նորին հանողի, առ նոյն ողբերգ մաղթանաց բանի · Ի խորոց սրտից խօսք ընդ Այ · *Բան · ԽԱ ·

1 Արդ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծու-
թեանց վերընծայելոյ զդրութ̃ի թղթոյս
յարմարեցի կական եւ հեծութ̃ի, հառաչանք կող-
կողագինք, դառնութ̃ե լալումն եւ արտասուաց
երգ, դարձեալ սկսայց զձայն պաղատանաց՝ խոս-
տովանօրէն զղջականաբար, զգաղտնածածուկըն
յայտնաբարբառ · զի անդրադարձութ̃բ սկզբնաման՝
եւ վերջաւորօքն բանիւք, զնոյն համաձեւութ̃ի ՚ի մի
թախանձ նմին մաղթանաց՝ հոգեկեցոյցն խոնար-
հութեան՝ աստանօր եդից ·
2 Մեղայ մեծիդ բարերարութ̃ե, անարգս մեղայ ·
մեղայ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղայ ·
մեղայ շնորհացդ անբաւ երախտեաց, արդարեւ մեղայ ·
մեղայ սիրոյդ վերնումն գթութ̃ե, յայտնապ̃ մեղայ ·
մեղայ ստացողիդ յոչ էութ̃է, ստուգապէս մեղայ ·
մե

մեղա՛յ գերունակ գոգցոյդ գրկանաց, անբուս մեղա՛յ.
մեղա՛յ աննուաղ լուսոյդ վայելման, նենգօղս մեղա՛յ.
մեղա՛յ ճաշակման անճառելդ կենաց, բազումս մեղա՛յ.
մեղա՛յ անհաս պարգեւացդ ձրից, հանապազ մեղա՛յ.
մեղա՛յ գովելեալ մարմնոյդ ք̃ո, մահուչափ մեղա՛յ.
մեղա՛յ պաշտելի արեան արարչիդ, խնկոպէս մեղա՛յ.
Ահա՛ արդարեւ օրհնեալ է հատուած բանի՛ յու-
սադրակին սրտի՛ այսր մեղայի. ա՛յն սա՝ պատուելի
աւանդ. անմոռաց պատուէր. հայրենեացն տուր.
նախահարցն օրէն. համայնից թոշակ. անհերքելի
բան. զօրաւոր պատասխանի. կենդանութե̃ կամուրջ.
անխորժելի վէրնոյն. սրբելի մ̃եց. անխզելի կապ.
հրաշալի բարբառ. անշրջելի պատճառ. բաղձալի ա-
ղերս. փափաքելի սեղան. սրտաբեկ հնչումն. անհնա-
րից ճարակ. կարծրութե̃ վանիչ. ա̃ծապաշտից սահ-
ման. հեթանոսաց գիրք. վաղնջուց կանոն. քրիս-
տոնէից հարազատ. արարչութեն յաղթօղ. անջրպետ
հզօր. խորոց ահաւոր. արուեստ բարձրութե̃. խո-
րութի՛ անչափ. հիացման տեսիլ. խորհուրդ կըն-
քեալ, ը̃ որ չէ՛ք ումեք անցանելի, եթէ ո՛չ անըմբռ-
նելի մտաց արագման՝ զսա ծանիցէ. Զայն բարե-
պատեհ հրաշաւորական, որ ո՛չ յի՛շատակեցաւ 'ի վեր-
ջին դատակնիք դասուն լքելոյ. գուցէ առնմին խը-
ղեալ համառօտ զվրիժակն իրաւանց մահուն հա-
տելոյ, յորմէ ընտրութիւն ապագործ եղեալ, զսահ-
մանն յաւիտենական քակտեսցէ. Որդ փառաց
մեծութե, որով նոյն ինքն ա̃ծութի՛ն պսակեալ
բարգաւաճի. Քանզի սա՛ ոչ դիմեալ կալաւ զեղ-
ջերաց սեղանոյ այսր սրբութե, եւ ոչ առժամայն


պը

պրծեալ՚ի պատժոց՝ անուրաստ դատաւ։ Իսկ եթէ ա-
քար զարմեան, և սաւուղ կիսեան, և յուդա սիմո-
նեան՝ ասելով զայն ոչ արդարացան, և ես վկայեմ՝
իրաւամբք խոստովանեալ զայս պայման բանի, զի
ակամայիցն բռնադատելոց՝ ոչէ կատարեալ սէր,
ուստի և ոչ բովանդակապէս փրկութի։ Իսկ ես
կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զերջանիկ
բանիդ զմխիթարութե հարազատս։

3 Մեղայ երախտեացդ մոռացուե, վերստին մե-
ղայ։ մեղայ մարմնոյ ձեռն՝ յոգի հարեալ, յի-
մարս մեղայ։ մեղայ առ կեանսդ դժրողութե,
իսկ և իսկ մեղայ։ մեղայ բանիդ ապախտ առնելոյ,
չարաչար մեղայ։ մեղայ՚ի յօր սատակման՝ ինձէն ըս
տիպեալ, վատթարս մեղայ։ մեղայ պարտականս ան-
կենդան մահուն, ձաղելիս մեղայ։ մեղայ անպատ-
կառս քո բարձրուե, տաղտկալիս մեղայ։ Վերջին
ինձ կրկին աշխար հոգևոր, զի՚ի կորուստ և՚ի կոր-
ծանումն ինձ երևեցայ։ զի անդարձս վարատեցայ։
զի որդիս՝ թշնամի գրեցայ։ զի՚ի բարձանցն երկնից
ընկեցայ։ զի փուշս վարուց դիզի։ Եւ ես առ սմին
ողբք աղաղակի, զի անձամբ զանձն անարգեցի։ զի
բազկին կորուսչին գտայ։ Ը. ԱԼ իմն կսկիծ դժըն-
դակ սրտի, զի զիս ունիմ՝ առ որ չեմ, զարտաքնա-
յարդար բաժակս անմաքուր, զըռնեալ որմն գար-
շունակ, զսին պարծանօք սպաճուճեալս, զկոյսն՝ ՚ի
մայր շրջեալ, զգերանակիր ակնս՝ թշուառացեալ,
զջահս փառաց՝ շիջեալ, զածմիւս յամ ամ իբրօք վնա-
տակարս, առ անօրինականսն տրունականս։ առ յայտ-
նութիւն ածայինս։ առ երևմունսն արարչագիրս։

առ խոնարհութիւն սարսափելիս · առ այն՝ զոր տեսի
աչօք իսկ իմովք · Նա որ մեծ է պատասխանատ-
ւութիւս, քան առ համօրէն աւետարանին՝ զար-
մանս, հիացմունս · հոգս հալածականս · անդաձմու-
նըս անհնարաւորս · Թո՛ւականութիւս՝ մտաց անքար-
գելիս · եղմունս անկատարս · իջմունս անհաստատս ·
յուսահատութիւս յարմարականս · յանդիմանութիւս
պատշաճականս · ձաղանս պատեհագոյնս · նզովս
իրաւացիս · անէծս արժանահատոյցս · Որդ՝
այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք, և
ինքնահարուած տանջանաւորութի ·

Ա Եւ քանզի կարող ես զայս ամ զպարտս Թողուլ
և զխայթոտածս մահու բժշկել՝ տէր ողորմու-
Թեց, ամ բոլորից, քս Թագաւոր՝ բարձրեալ հօր
որդի, ստեղծիչ գԹած՝ բարերար, օրհնեալ՝ առատ՝
հարուստ, ահաւոր՝ հզօր՝ ողորմած, տեսուչ՝ ձեռն-
կալ՝ հաստիչ, ապրեցուցիչ՝ դարմանիչ՝ կեցուցիչ,
երկայնամիտ՝ անոխակալ ապաւէն, բժիշկ՝ գովել՝
երկնաւոր, անձառ՝ լոյս՝ կեանք, յարութի՝ նորո-
գութի՝ քաւութի, եԹէ հայեսցես մարդասիրութբ,
ըստ որում քոյդ են սովորութիք, նայեցեալ՝ ի քեզ՝
կողկողիմ և ես · ԵԹէ լուիցես, հառաչեմ · եԹէ
ունկն մատուցանիցես, պաղատիմ · եԹէ անսայցես,
աղերսեմ · եԹէ ներեսցես, աղաչեմ · եԹէ առ իս
դառնայցես, գոչեմ · Ապա եԹէ անտես առնիցես,
կործանիմ, իսկ եԹէ առ ոտն հարկանիցես, լամ ·
եԹէ զոգեպահն ոչ ընծայեսցես, մեռանիմ · ապա
եԹէ ահարկու դէմս ցուցանիցես, սատակիմ · իսկ
եԹէ սաստեսցես, դողամ · եԹէ խեԹիւ տեսանես,



սոս

սասկամ․ ապա եթէ սաստկանաս, սարսափեմ․
եթէ հալածես, հեծեմ․ իսկ եթէ ընդվայր հար-
կանիցես, հերքիմ․ եթէ զբոց վհատութեան ոչ
տացես, տագնապիմ․ եթէ խստանաս, փախնում․
ապա եթէ սպառնաս, ընկճիմ։ Իսկ եթէ քննես,
քարկոծիմ․ ապա եթէ ուժգինս ակնարկես,
սուզանիմ․ եթէ ոչ անխայեսցես, մերժիմ․ ե-
թէ կոչեսցես, խիթամ․ իսկ եթէ աչս յառեա-
ցես, ամաչեմ․ եթէ ձայն տացես, երկնչիմ,
զբարեացն պարգեւ մատնեալ․ զերանութիւն թո-
ղեալ․ զշնորհն լքեալ․ զուխտն ցրեալ․ զպա-
ւանդն կենաց՝ մոռացեալ․ զհամարձակութեան
վստահութիւն՝ կորուսեալ․ զստեղծիչդ էիցս՝
բարկացուցեալ․ զանճառութիւն շնորհին՝ ընդ-
ոտնեալ․ զպատուո՛յն պատկեր՝ աղտեղեալ։ Իսկ
եթէ առ այս խեղդ մահու հեծութեան ցաւոյ
մարդասիրեալ առ իս ժամանեցուսցես՝ տէր
յս քս՝ զազդեալն գիր ընակիլ 'ի յիս, եթէ բը
ժշկութիւն դադարեցուցանէ զմեղս մեծա-
մեծս․ որով ամենառատ քաղցրութեամբ պատ-
ուաստեալ 'ի քեզ, զքոյդ կերպարան լուսոյ նը
կարեալ յոգի վերստին գտեալ պնդեցայց քա-
ւեալ, եւ ստեղծեալ կրկին 'ի փրկութիւն անմա-
հից կենացն անախտականաց․ եւ քեզ ընդ հօր հո-
գւովդ սրբով փառք յաւիտեանս․

ամէն․

†Ս Երգոյն յաւելուած ներքին հեծութե՛ նորին հանգոյն, առ նոյն ողբերս մոլորանոյ բանի. Ի խորոց սրտից խօսք ընդ այ.

*Բան. ԻԱ.

1 Արդ՝ զորս յայտնեցի, և յաղագս որոց
նշանակեցի, և վս որպիսեաց ձայնեցի,
և զորքան ծածկեալս մերկացուցի, և կամ վս
որոց խոստովանեցայ. Զներկայիցս՝ զոր ար-
դէն ունիմ, թէ զանցելոցն՝ զոր մթերեցի. զապա-
գայիցն՝ յորոց կասկածեմ, թէ զբազմասահ շար-
ժութեցն՝ յորոց գլորեցայ. զվէրսն իմ համա-
րեալ՝ որ է այ մեծ գրեցեալ, թէ զանկերպագրե-
լին չը յիշատակելի. զնուաղն՝ որ է առաւել, թէ
զթեթևագոյնսն՝ որ են ծանունք. Զհոգեկանս-
ցըն կրից կորուսչաց, թէ զմարմնականաց ախտից
ապանողաց. զառ գրունս հեշտականացն, թէ զծայ-
րակատոր վնասակարութեցն. զաներևութիցն, թէ
զտեսականացն. զառ ձեռն հպաւորութի, թէ զառ
նոյն ինքն շունչ հեռաւորութի. Զլսողականն
դիւրին խածմունս, թէ զերկարաւորն նետաձը-
գութի. զխորութեն զանջրպետութի, թէ զամենածաւին
յայտնատեսիլ. զյոքնագլուխն պռանկութի, թէ
զառողջութեն անբժշկութի. զպարարումն չարին
մարմնովս, թէ զավիրն բարուոյն հոգւովս. ըզ-
խըռնամոյն հանդիսանալ՝ յոչ ախորժելիսն այ,
թէ զբռնադատութեն տառամբ ձգիլն՝ ի նոյն
մոլեգնութի. զառ ի ժամուն մեղաց, թէ զընդու-
նայնութեն կործեաց.

2 Արդ՝ արև ոմն կամաւ խնդագար զերծեալ ի ձորձոյ,



զա

զուսկանսցս տեսիլ յանդիմանեցի, զընդդէմն գոր-
ծեալ իմաստնոյն, որ՝ թէ հանճարեղքն վերարկես-
ցեն զամօթս իւրեանց, օտարացեալս 'ի կրօնից. հե-
ռացեալս 'ի կարգաց. 'ի սրբութենէ անսուրբք. 'ի կու-
սութենէ անմաքուր. յարդարութենէ ամբարիշտ. 'ի
բարեպաշտութենէ մնաստապարտ. բերանովս մերձ առ-
ստացօղն, և հեռի երկիւղածութեամբք. շնթամբք պատ-
ուամատոյց, զի մարգարէին, այլ ոչ եթէ սրտիւս.
Իսկ եթէ պարտէ զքստմնելիան ասել սատանոր,
չար քան զոտանջանսն յանդգնութի, իբր զուր իմն
պաշտօնատարս եմ, 'ի միտս անկայունս երկեակ ձա-
նապարհաւ մահու վարանեալս՝ ջանամ, և ոչ ինչ
օգտիմ. պնդիմ, և ոչ հասանեմ. փութամ, և ոչ ժա-
մանեմ. անձկամ, և ոչ տեսանեմ. փախչեմ, և ոչ
հանդիպիմ. կարօտիմ, և ոչ պատահիմ. ունիմ զամ
երկրի, և եմ պատգամաւոր տզօթանուէր ամ աշ-
խարհի. Այլ թող զբազում զայսոսիկ՝ բազմերար,
և մի՛ ունիցիս. դիւրինք են քեզ զսոսին եղծանել
քան ինձ տաժանաւորս աջով նկարել. մի այնորիկ
գրեցի առանց խնայելոյ, զի դու առաստապէս ջըն-
ջեսցես՝ օրհնեալ. Որ վասն մեր մեղաւորացս եր-
կայնամիտ անուանեցար, զի մաղթանաց բանի՛ հե-
ծուէն սրտի՛ եզրի երջանկի. յորժ նեղեալ անձն
և ձանձրացեալ ոգի՛ բանիւն մխիթարակաւ, որ զայն
պատմէ. յորմ կրից մահացուցանողաց վտանգել
անկեալ 'ի վիհ գարշութենէ մեղաց՝ անդնդականաց
անպակասն էց. քանզի չհաւատամ թէ լսես իսկ ինձ,
զի յօբայ ձայնին. Որդ՝ ես ինձէն ինքնադատով
անձնադատ գերի՝ կամաւորապէս մատն եղեալ


բնու

բնութեա , արգելի փականեցի կնքեցի առ յինէն՝
յամ մասանց՝ զկենացն հնար , զի 'ի փրկութի մեղօք
կապելոյս՝ կրկին մեծացիս գովեալ.
3 Նուքանզի 'ի մարգարէէն բարուոք խրատեալ փորձ
գտցուք , մաղթել ընդ նմին հոգւով քո եր֊
գեալ՝ յուսով հաստատնով 'ի քեզ ապաստանեալ ,
առէք ընդ ձեզ բանս , ասէ ովսէէ , եւ դարձարուք
առ տր ած ձեր , եւ ասացէք ցնա , կարող ես թողուլ
զմեղս . զի ընդունիցիք զբարիս , եւ վայելեսցեն
'ի բարութե անձինք ձեր . Նահա՛ ած խօսեցաւ , եւ
ո՞վ է որ ո՛չ լուիցէ . նոյն ինքն վկայեաց , եւ ո՞վ է որ
ո՛չ հաւատայցէ . Որդ՝ այսուքիկ վճիռ պաշտելի .
նուիրեալ պայման . սահման նոյնագոյ . կենաց օ֊
ւետիս . կէտ տէրունի . դուռն բարութե . սփոփա֊
նաց հրաւեր . ճշգրիտ պատկեր . անստգիւտ գանձ .
անմոռաց յիշատակ . Նյուու առ սոյն եւ ես հաւատ
ընկալեալ , աստուստ վկայեմ սմին՝ ը մարգարէին ,
կարող ես յամի թողուլ զմեղանս բազմաբեղունս .
եւ ես զօրացի՛ս կրկին բարձրացեալ՝ առ ամենա֊
թշուառ կործանեալ հոգիս . Զամի իշխես . ամի
բաւես . ամ ուրեք հասանես . ամենից բանուեց
յաղթես . զամ կարծրութի փշրես . զամ ընդդիմա֊
հար վանես . զամ խաւարութի վատնես . զամ սրացել
ընդոստնես . զամ դառինս անուշես . զամ դժուա֊
րամդքելիս քաղցրացուցանես . զամ զպարտս շնոր
հես . զամ յանցանս թողուս . Կարող ես՝ զօրաւոր
հզօր հնարաւոր ամենարուեստ՝ զամեցուն զմեղս
ընկղմել՝ եւ չքացուցանել բառնալ՝ 'ի միջոյ , իբր ըզ
ճանճանչ փոքու կայծակին՝ սահմանել՝ 'ի չափ ոչէից՝


ան

անկեալ ընկլուզեալ կորուսեալ՝ ՚ի տիեզերատա-
րած ծովու։

4 Արդ՝ բանին մաղթանաց վերծանողացն այսմ
մատենիս, ողորմեա՛ վս̅ խաչի և չարչարանաց մահու
որդւոյ քո՝ հա՛յր գթութե̅։ Սկիզբն առաքողի՛ ող-
բերգութե̅ ձայնի այսմ արտօսրածին նուագի, որ
զայս դեղ փրկութե̅ կենաց՝ մեզ յարմարեցոյց,
եղիցի՛ բժշկեալ յանուն քո հզօր։ Որ յետս ելից
խոստովանութե̅ մեզ նկատեցոյց՝ այսու պայմանաւ
պատշաճականաւ, լիցի՛ անարատ յիւրոցն պարտեց։
Որ զհպարտութե̅ն թեւս՝ հարթել մեզ վարդապե-
տեաց՝ ՚ի սոյն կանոնի կենաց պատգամի, եղիցի՛ զեր-
ծեալ ՚ի չար կապանաց մահու արկածից սկզբնակա-
նաց՝ վերջնոց՝ և միջնոց, երրորդութե̅դ բարե-
գործեալ, ՚ի նորոգութի̅ լուսաւորութե̅։ ընդ ո-
րում և մեք գրեսցուք երջանիկ գտեալ ը̅ սմին։

Ընդդխմմրք դխմոյ ոյ․ նուազ ողբեց․ և դխմոոր
ամոռ ընդմնորդխնոդ ոխոոռոթոթեց ող ֆորորհ։

5 Արդ՝ այսքանեօքս անբաւից հրաշից հանդերձից
հա՛յր ամենատեսակ՝ անուանդ ահաւոր․ ձայն
ասրաափելի․ կոչումն ընտանի․ բան համբուրելի․
ազդումն սքանչելի․ հրաման սոսկալի․ էութի̅ ան-
քննելի․ գոյութի̅ անճառելի․ իսկութի̅ անբաւելի․
զօրութի̅ անզննելի․ կամք ամենաբարի․ տրութի̅
անսահմանելի․ մեծութի̅ անչափելի․ բարձրութի̅
անբովանդակելի․ որքանութի̅ անկշռելի․ առաւե-
լութի̅ անհասանելի․ պատճառ որդւոյ հայրութե̅,
այլ ո՛չ նախադրութե̅․ քեւ՝ և ՚ի ձեռն քոյդ անպա-


րա

բազկիր զօրութենդ՝ սատանայ տագնապօղ և դիւա-
կան տենդիս ջերմութեան, որ պղծեալ մուծաւ
ընդ մեղաց՝ զի փախիցէ ՚ի մարդոյս, զարհուրեալ
՚ի սխրալի և յանբաւելի արեան վտակէ՝ գառինդ
երկնաւորի • որով սրսկեալ միանգամ ՚ի մշտնջենա-
ւորս՝ համայն մաքրեցաք •

6 Եւ արդ՝ յայս պատկառելի խոնարհութենէ ա-
րարչակերտս խորհրդոյ, ամաչեսցէ սատանայ ՚ի
գործս չարեաց իւրոցն հրեշտակաց • տանջեսցի և
հալածեսցի, հեռացեալ և արտաքս առաքեալ ՚ի շին
ուածոյ խորանէ քումդ բնակութեան՝ յարտաքին
խաւարն • Եւ ջնջեալ մաքրեա՛ զարտասուս ողբոցս
՚ի դիմաց մերոց, և զհառաչումն ձայնիս հեծութեան
՚ի սրտից մերոց • Եւ յիշատակաւ հարման հեղու-
ալիցն՝ քառամնափուշ տաժանատեսիլ ոգեպահանջից,
որով պնդեցաւ միածինդ քո յաշտարակ խաչին, ցա-
ւեսցի չարին • Եւ ՚ի կողահերձ սայրասուր սլաքէ
ուժգին բախմանէ, որով զվէրն մեծ ընկալաւ, խո-
պա՛ռ սատակեսցի սկզբնաւոր մահուն • Եւ զի խո-
նարհեցոյց զդալեալն գլուխ՝ յաւանդել զոգին ՚ի
ծոց քո՝ բարձրեալ, պատուամբուն անբարի բարուցն
բելիարայ ՚ի կոր կործանեսցի, ամենայն հերքեալ ՚ի կո-
րուստ • Եւ զի զօղեալ ծածկեցաւ անմահն իսկու-
թեն՝ յորովայնի երկրի, այսու ամբարձեալն հպար-
տութի՝ կործեալ գոռոզին ՚ի յատակս մահու դը-
ժոխոց՝ ՚ի թին ստուերին՝ յառեալ դիտեսցէ • և յի-
շեսցէ զառաջին հարուածն անբժշկական, որով մա-
հացաւ դիմամարտութի թիւնից վիշապին՝ կենա-
բարն կրիւք ամենազօրին • Աման զի ՚ի փառս քո՝

հայր ողորմութեան, իբր ՚ի գովեստ որդւոյ քո՝ հոգւովդ սրբով զայս խոստովանիմ. քանզի ո՛չ պիտակ ինչ առակ զօրութեանն ունի զմիւսմէն՝ առ մի խորհրդականն խորութեան, այլ զանսկիզ-բըն բանդ անձնաւոր՝ ընդ անժամանակդ հօր փառաւորեմք. Եւ քեզ միայնոյ ս̃բ երրորդութեդ, հաւասարապատիւ տէրութեդ, համաբուն՝ անբաժին ինքնութեդ՝ օրհնաբանութի̃, գոհութի̃, զօրեղութի̃, և անճառ վայելչութի̃ մեծութե̃, բարեվիճակ հարթութե̃, զուգակշիռ հաւասա-րութե̃՝ յաւիտեանս. ամէն.

† Ս̃ երգարին յաւելուած նշինի հեծութե̃՝ նորին հօնողին, առ նոյն ողերգս մաղթանաց բանի. ՚Ի խորոց սրտից խօսք ընդ Ա̃յ. *Բան. ԻԹ.

Եւ արդ՝ դու միայն սկիզբն բարեաց՝ գթու-թիւն անճառ՝ որդի բարձրելոյ միոյդ Ա̃յ, որ զողջոյն զօրն՝ թողութե̃ ցուցեր փրկարան, և ոչ կորստեան դատապարտարան, յեղանակեալ ինձ զաւուրն չար՝ առ մեծ աւետիս ակնկալու-թեան. Բժիշկ՝ ախտացելոյս. հովիւ՝ մոլորեալ ոչխարիս. տէր՝ ապաւինեալ ծառայիս. գինի անա-պակ՝ մեծ տրտմեցելոյս. սպեղանեաց դեղ՝ վէրա-ւորեցելոյս. ազատութի̃՝ մեղօք գրաւելոյս. օրհ-նութի̃ բարեաց՝ մերժելոյս. կնիք շնորհաց՝ խոտե-լոյս. օծումն կոչման՝ կապտելոյս. կանգնումն վե-րըստին՝ կործանեցելոյս. պատսպարան հզօր՝ դողե-ցելոյս. օժանդակ վէհ՝ գայթակղեցելոյս. դուռն



բարձ

բարձրութե̃՝ տարակուսելոյս. սանդուխք երանու-
թե̃՝ եղկելոյս. ճանապարհ շաւղաց՝ մոլորելոյս.
թագաւոր ներողդ՝ պարտելոյս. քաղցր յուսադրութի՝
լքելոյս. ձեռնկալ կենաց՝ հերքելոյս. Մե̃ծդ միայն՝
և ամենատուտ, որ զլիութի բարեաց սահմանեալ
հեղուս անչափ յաճախութբ՝ քան զոր խնդրեմք և
իմանամք, ըստ պօղոսի գոհաբանութե̃ն. Քանզի
ինուց յիսնից՝ և թուոց երից՝ և չորե̃կ տասանց՝
՚ի վաղորդայնէ տուընջեանն՝ առ մուտս արևուն.
անդուստ առ նմին յաւէտ կարկառմամբ՝ իսկ և իսկ
՚ի սոյն՝ անտրգել սրտի, ՚ի վեր է քան զաղերսանաց
ակնկալութի մարդկան բարեգործել միմեանց շնոր
հաւորութի. իսկ առ իմս թշուառութե և անար
գութե՝ գթոյդ եղեալ փառս՝ ամենակարող զօրու-
թեւն ահեղ՝ բոլորից ա̃ծ՝ օրհնեալ տր̃ քս̃, որովք
սահմանեցի կշռութբ չափոյ՝ հաստատողիդ ը̃ հո-
գոյս հաւասարութի կցորդեալ. Քանզի մեծաս յայ-
սոսիկ անբաւ և անհետազօտելի, ամենեւին բարի՝
անմասն բարկութե խաւարի. ուստի յոյժ նուաղ են
քում մեծութե՝ աստեղացն թիւք, զորս գոյացու-
ցեալ յոչէից, յորջորջմամբ անուանց կնքեցեր. և
կամ հիւթ երկրի ՚ի յօդս հեղեալ, զոր ՚ի չգոյից
հաստե̃լ, տարածումն յատակի կառուցեր, քան ինձ
նախագրեալ համարդ սակաւութե, որովք քեզ
նմանիլ վարդապետեցեր.

Ահա՛ ծածկեցաւ և ընկղմեցաւ ՚ի քոյդ լոյս կա
մաց երկայնմտութե՝ հանուրց չարութի, իբր
դոյզն մնայլ ՚ի տապ արևու. և ո՞ւ աստուստ իսկ
կիրք բնութեց զհասարակաց բարուց ցուցանէ.



Քան

Վասնզի ո՛վ որ 'ի մարդկանէ մեղաւ, և ո՛չ զղջա֊
ցաւ. ո՛վ որ զօրացաւ, և ո՛չ ամաչեաց. ո՛վ որ գա֊
րշեցաւ, և ո՛չ պատկառեաց. ո՛վ որ սխալեաց, և ո՛չ ա֊
պաշաւեաց. ո՛վ որ կործանեցաւ, և ո՛չ հեծեծեաց.
ո՛վ որ գայթակղեցաւ, և ո՛չ սորջացաւ. ո՛վ որ պար
տեցաւ, և ո՛չ ինքեամբ ըմբերանեցաւ. ո՛վ որ պատ
րեցաւ, և ո՛չ յոգւոց ելաւ. ո՛վ որ ճաշակեաց լեղի,
և ո՛չ դառնացաւ. Ո՛վ որ անկաւ 'ի բարձրութէ,
և ո՛չ ընդոստեաւ. ո՛վ որ կորոյս մեծութի, և ո՛չ աշ
խարեաց. ո՛վ որ զրկեցաւ յերանութէ, և ո՛չ ելաց.
ո՛վ որ կապտեցաւ 'ի շնորհէ փառաց, և ո՛չ ողբաց.
ո՛վ որ գտաւ ինքեան վնասակար, և ո՛չ սոգտաւ.
ո՛վ որ մերժեցաւ յերեսացն Այ, և ո՛չ հառաչեաց.
ո՛վ որ լուաւ զԱյ սպառնալիսն, և ո՛չ սոսկացաւ.
Ո՛վ որ ընդ մի չարեացն՝ հազարս չուաղեաց. ո՛վ
որ մերկացեալ յաւուրս ձմերայնոյ, և ո՛չ զոխացաւ.
ո՛վ որ անօրինեցաւ, և ո՛չ քարամբք զմիտսն կոծեաց.
ո՛վ որ ետես զատրուկն յիւրում մեծութեն, և ո՛չ զկր
ծեցաւ. ո՛վ որ կատարեաց չարիս, և ո՛չ զինքն իսկ նզո
վեաց. ո՛վ որ ախտացաւ, և ո՛չ զանձն դարմանեաց.
ո՛վ որ յամօթալեացն գործեաց, և ո՛չ զիւրն մարմին
ծաղեաց. ո՛վ որ 'ի պատկառելիսն հպեցաւ, և ո՛չ
զորն իւր անիծեաց. Ո՛վ որ զգործեցեալսն յի֊
շեաց, և ո՛չ տապացաւ. ո՛վ որ զգաղտնիսն մտաբե֊
րեաց, և ո՛չ խորովեցաւ. ո՛վ որ զծածուկսն նկա
տեաց, և ո՛չ մահ կորստեան խնդրեաց. ո՛վ որ զան֊
երևոյթսն կերպաւորեաց, և ո՛չ կրկին յերկիր կո֊
րացաւ, ո՛վ որ ընդ մեղացն հեշտութե՝ բոց անշէջ
հնոցի ո՛չ խառնեաց, ո՛վ որ զվնասակարսն բնութեն,



և

և ոչ պապակեցաւ. ո՜վ որ զկամաւ ներգործեալսն,
և ոչ սատակման ինքեան աղօթեաց. ո՜վ որ զանձա-
ռեալսն, և ոչ խռովեցաւ. ո՜վ որ զանկրելին կրու-
թեն, և ոչ թախծեցաւ. ո՜վ որ զմեծամեծս, և
ոչ մաշեցաւ. ո՜վ որ զանբծութեն ապականարարսն,
և ոչ տոչորեցաւ. ո՜վ որ զտարագրութեն պատճառ-
յանցմունս, և ոչ տագնապեցաւ. ո՜վ որ զերեսացն
աղտեղի տեսիլ, և ոչ բարկութե վերնոյն զանձն
պարտ վարկաւ. ո՜վ որ զմի ի կարևորացն մեղաց յ՚շս
կերպացոյց, և ոչ զինուք մահու խոցեցաւ. ո՜վ որ
զխայտառականացն, և ոչ վայս վհատութե ընդ-
հեծութիւ ձայնին հիւսեաց. Ո՜վ որ յարքայական
դահոյիցն տնանկացաւ, և ոչ կարկամեալ ի վայր գը-
լորեցաւ. ո՜վ որ ընդ պսակին պերճութե՝ հող ի
գլուխ եղեալ, և ոչ կրկին չարչարեալ յոգի մա-
հացու. ո՜վ որ ընդ պայծառ պատմուճանին՝ քրձա-
զգած եղեալ, և ոչ տխրեցաւ. Ո՜վ որ զկեանս իւր
կորոյս, և ոչ արեան արտասուս երկնեաց. ո՜վ որ
ընդ արկանելեաց լուսոյ՝ խաւար զգեցաւ, և ոչ նը-
ւաղեցաւ. ո՜վ որ ի վե՛ր ազգոյ սիրելւոյ ոչ թառա-
մեցաւ. Ո՜հ զայս կերպարանք ճշգրտագոյնք՝ պար-
տաւորիս յանդիմանութե, տխուր դէմ. քաղեալ
ճաճանչ, ցամաքեալ խոնաւութիւն. երիթացեալ
շուրթն. անշքեալ տեսք. տրտմեցել ոգի. այլայլեալ
ձայն. կրկնեալ պարանոց. Եւ զի թէ որ զխոկու-
թիւն իսկ նշանակեսցէ, ոչ անօրինէ անամբարտա-
ւան միտ՝ անհպարտ սիրտ. Անխնդրող պարգևի՝
թշուառ. անաղերսալի պասքեալ. ինքնակշտամբելի
դեգերեալ. իրաւամերժ սովեալ. արդարալուկ

քաղցեալ. պատշաճադատ հարուածեալ. ինքնամփկոյ
մահապարտեալ. արժանապէս հանեալ. անձնանէ ծ
եղկելի. Նոյն զայս Թարգմանեալ ցուցանէ արդա-
րագործ փարիսեցին կշտամբեալ, և մեղապարտ
մաքսաւորն բարեհամբաւեալ.

3 Նոյն արդ՝ եթէ զչարիսն՝ հնարաւորութի բան-
սարկուին՝ գտողին զմեզ գայթակղեալս, զիւրսն
'ի մեզ սերմանիս առ օրն համարեսցի, զիարդ ոչ ըզ-
բարիսն տնկեալս 'ի մեզ հոգւոյ արութիս՝ 'ի խնա-
մակալութէ կամաց կեցուցչիդ՝ օնեօն գրեսցես՝
տ՛ր բարեգութ, հզօր և յաղթող. քա՛ւ ինչ մեղու-
ցելոց. կ՛րող յամի՝ առ ամ փրկութի. Եթէ
զանդունդս առ երկինս փոխես, և կամ զխաւար
մթութե՝ 'ի լոյս հաստեսցես, եթէ զդառնութի
լեղւոյ՝ 'ի մանանայի քաղցրութիւն կազմես, և
կամ զկոծ սաստկութե վշտաց՝ 'ի պարս դասու բերկ-
րութե հարսանեաց կարգես, դիւրին և հնա-
րաւորք են քեզ այսոքիկ. Նոյն ևս քան զսոսին
բաւես առ նոսին՝ տիրեալ համայնից ահաւորապս.
քեզ փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն.

---

†Ս երրորդին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հանգոյն, առ նոյն տղերս ձողխնոտ բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ. *Բան. Ա.

1 Նոյն արդ՝ Ճշմարտեսցի՛ բան քո՝ ողորմած՝
բոլորից տծ՝ ներող և օրհնեալ, 'ի բազմա-
գթելին դարձաւորութի աւուրն պատկերի
զըղջման մեղաւորին, թէ և առ յետին իսկ

շունչն լիցէ ընտրութի, և կամ 'ի մէջ չարութեն փո֊
խադրութի. Մանաւանդ զի՛ դժնեայ կցորդս այս
անձնիշխանակին՝ միշտ մարտիկ. խաբօղ շողոքորթ,
յարեալ 'ի սատու, ընդ առաջողին, արածօղ հողմոց
դժուարութեանցն. հաստատողին փախչօղ. գերեալ որսո֊
ղին. մոլեկան մարմնոյս՝ ներհակ տնկակից, յոգնա֊
պատճառեան ամենավարան. զոր քո՛ է գիտել զքա֊
նեացն յաձախութ. Նաև զկնի մեղանացն, ողորմա֊
գինս իմն ողբարկութիս վհատակին՝ տաժանակոծս
բազմաւաղելիս, քո՛ առաջի մր գթարկութիս՝ գը
րեալս արտասուօք, թառանչս թշուառութեց կար֊
դելոց՝ անբաւս չար վտանգից մեղսատագնապ
պատկառեցելոյն.

2 Նաև զի մի՛ կրկնաբանութիս 'ի շատախօսութ կըր
թեացի, առաւել քան զոյն՝ այսու ողբալի.
քանզի ոչ երբէք համարձակի խնդրել իւր զար֊
քայութի, այլ զտանջանացն թեթեւութ. ոչ ընդ
կենդանեացն 'ի լոյս, քան թէ ընդ գերեզմանակա֊
նացն՝ զպայծառ շնչոյն 'ի խաւար. ոչ ընդ ամբար
ձեալսն, այլ ընդ բեկեալսն և ընդ խորտակեալսն.
3 Ի հանգստեան իբրու վաստակեալ 'ի խրախուսէ
իւրեանց որոմեցել. դիմօք ժպտել և մտօք խոցել.
կերպ 'ի ծաղր և աչք 'ի յողբումն. երեսք զափոփանս
ձեւացուցանէ և արտասուքն զդառնութի սրտին
ծածկարտէ. Ամպանակք երկու՛ յերկուսին ձեռին,
մինն արեամբ և միւսն կաթամբ. Երկու բուրա֊
նոցք կայծակնաւորք, մինն խնկով և միւսն ծծմբե
րին. Սկաւառակք կրկին կրաւորականք համոց,
մինն քաղցու և միւսն դառնութ. Բաժակք զոյգ՝
ու

ուերկուս բերմունս, մինն արտօսր և միւսն ծը-
ծումն։ Տաշտք կրեցեալք 'ի ծայրս մատանց, մինն
գինի և միւսն լեղի։ Պորունք տեսանելեաց ներ-
հակաց, մինն 'ի լոյս և միւսն 'ի վրիպումն։ Խանութք
հալոցականաց հակառակութեց, մինն արծարծէ և
միւսն շիջուցանէ։ Հայեցուածք գիտնոց երկուց,
մինն դպրի ողրքանօք և միւսն անմխայելի բար-
կութ։ Համբարձումն երկակի բաղկաց, ոմն 'ի հար-
ուածս և ոմն 'ի մերժումն։ Դէմք կրկնակի կեր-
պից, մինն տխրեալ և միւսն ցասուցեալ։ Աշտամ-
բանք՝ է մոյ երկու, մինն սատեացս և միւսն ա-
պաւնեացն։ Սպաւինութիւք կարծողականք, մինն
գոնէ և միւսն թերևս։ 'Ի մի բերան երկւկի բար-
բառ, մինն եղկուլի և միւսն խառովութի։ Երկուս
ազդմունս 'ի միում սրտի, մինն կեղակարծ յուսոյ և
միւսն ճշգրիտ կորստեան։ Սմպ լրթագոյն ահագ-
նատեսիլ՝ կրկին տեղացմանց, մինն նետս և միւսն
քարինս։ Արտասուքն ահեղ՝ երկոցունց բերմանց,
մինն կարկուտ և միւսն հրացան։ Զոյգ ցաւագին՝
երկուց վտանգից, մինն լալոյ և միւսն մահու։ Սուա
ւօտ ազդ՝ երկուց բողոքմանց, մինն սաստից և միւ-
սըն սպառնալեաց։ Արեգակունք երկու՝ 'ի յեր-
կուց ծայրից, մինն խաւարի և միւսն կիզման։
3 Եթէ հարուածոց ոչ կառուցանի, ինքեան վար-
կանի. և թէ ձեռն պարգևածիր, ոչ իւր անձ-
ունի։ 'Ի պտղանս ուրուք՝ կորնայ. յամբարձումն
գլխոյ՝ ընկճի. 'ի չարեացն յիշատակ՝ հեծէ. 'ի ճառս
մաքրոց՝ պատկառէ. 'ի պատմութիս հանդերձելոցն՝
երերի։ Եթէ օրհնի յումեքէ յայտնի, 'ի ծածուկ



զանձն

զանձն անիծանէ. եթէ գովեստ յումեքէ լսէ, ապա
տուանօք զինքն կշտամբէ. Եթէ գովեսցի սաստ-
կապէս, ինքեամբ ինքեան վկայէ. եթէ ձաղեսցի ուժ-
գին, սակաւ հատուցումն՝ առաւել պարտուցն գը-
րեսցէ. եթէ ըղձումն մահու ինքեան լսիցէ, այն
ասէ, և դարձեալ կրկնէ. Եթէ որոգայթ մահու
ձայլթեսցէ յերկնէ, հոգին զդէմսն համբառնայցէ.
Ո ջիւրոց իրաւանցն մատեան՝ խափեալ. զպատուս
խանութեան յոյս՝ լքուցեալ. զհամարձակութեան
ընթացս՝ փակեալ. Եւ եթէ ոչ էր անփրկանաւ որ
կորուստ գերելոյն, զիւրովին երթալ ոչ ինչ դան
դաղէր. Արդարև վայ մեղաւորին՝ որ տարակու-
սեալ կայցէ ՚ի վր երկուց ձանապարհաց, ըս հա-
գելից բանի իմաստնոյն.

4 Նաև արդ՝ զիա՞րդ ոչ ողորմեսցիս բարեգութ,
այսքանեացս ձայնարկութեց՝ կողկողագինս հե-
ծեծանաց, որ անուամբս այսու մեծացար, թէ ո-
ղորմած եմ ես տր. Ահա՛ առ չարութի գերւոյս
բարութի քո. առ մահապարտիս դատնութի, քաղց-
րութի քո. առ կորուսելոյս յայտնութի, ճառա-
գայթ քո. առ յանդգնելոյս մոլութի, ողորմութի
քո. առ խակութի չնաստակարիս; հեզութի քո. առ
կործանելոյս այցելութի, աջ քո. առ ընկղմելոյս
վերբերութի, ձեռն քո. առ բժշկութի անողջանալի
խոցուածոյս, մատն քո. առ պակուցելոյս պաշտպա-
նութի, ոգի քո. առ ապախտաւորիս իմ վստահութի,
երկայնմտութի քո. առ օծումն ամենադժնէիս,
զօրութի քո. առ մեղաւորիս քաւութի, հրաման քո.
առ փախուցելոյս ապաւինութի; ոտք քո. առ սրացելոյս


պա

պատապարուն ՚ բաղձունք քո • առ վրիպելոյս առաջ-
նորդուն ՚ լոյս քո • առ տարակուսելոյս հնարաւո-
րուն ՚ հանճար քո • առ անիծելոյս կրկէն ստացումն ՚
օրհնումն քո • առ վհատելոյս քաջալերուն ՚ խրախոյս
քո • առ վշտագնելոյս մխիԹարուԹի ՚ բաժակ քո •
առ նեղելոյս ընդարձակուն ՚ կամք քո • առ ատե-
ցելոյս կոչումն ՚ սէր քո • առ հաստատումն սասանեցե-
լոյս ՚ բան քո • առ հոգեւոր վէրաւորելոյս ՚ կաԹուծ-
արեան քո • առ աներևոյԹ մԹերս ցաւոցս ՚ ակնար-
կուն քո • առ յուսահատելոյս անդրէն ընտրուն ՚
իշխանուԹի քո • առ պատուհասումն կորեցելոյս ՚
կցորդուն քո • առ խաւարաւ մահու ծածկելոյս ՚
նշոյլ կենաց քոց • առ խռովեցելոյս իմ հանդարտու-
Թի ՚ խաղաղուԹի քո • առ վայրագուԹե օտարա-
ցելոյս ՚ ողջոյն քո • առ մոլորելոյս դարձաւորու-
Թի ՚ ձայն քո • Ո՛վ դու տէր ես ամի գԹուԷ ՚
և չիք յիքեզ մասն ինչ խաւարի • և ոչ է բա-
րուԹիւն առանց քո • և քեզ վայելէ փառք
յաւիտեանս • ամէն •

---

† Ս[illegible] [illegible] [illegible] հեծուԷ՝ նոյին հոլովի ՚
[illegible] [illegible] [illegible] [illegible] բանի • Ի [illegible] [illegible] [illegible]
ըն [illegible] • *Ր[illegible] • Ա Ա

1 Աւարդ՝ քանզի բազմացուցի պայմանաւ բա-
նիւ՝ զաղէտ տագնապի հեծուԹե ձայնիս
մեծ հառաչանացս՝ անափոփելի իմոյս վշտանգի ՚
զի դու՝ ողորմած սկզբնահայրդ խոստովանու-
Թե անյայտ ծածկուԹեց՝ որդի այ կենդանւոյ

մր յմ̃քս, քաղցրութ̃ նայեսցիս քաւել: Արդարև կարող ես. ճշմարտապէս բաւական ես. եթէ կամիս, հնարաւոր ես. կամիս առաւելապէս, ոչ և կարես. Հարստանաս մեծապէս ի տալն, քան եթէ ընդունելն. բազմանան քեզ գանձ 'ի ցրուելն, քան 'ի ժողովելն. յաճախեն ստացուածք քո 'ի սփռելն, քան 'ի ճշդելն. կուտին քեզ համբարք 'ի տարածանելն, քան 'ի շտեմարանելն. Հաւատամ այսմ ամ̃ տէր, գտանել քև ելք փրկութե. հաւատամ անարգս՝ ընդ պատուականին. յուսամ ընդ աբրահամու, և ընդ աննայի, զի մինն բանիւ քո հաւատաց, և միւսն քահանայապետին բարբառոյ անսաց. Այ̃լ և ոմն՝ 'ի խորին ծերութե՝ անհամար որդւոց հայր հաստատեցաւ, զառանցեալն և զամուլն արգանդ սառայի՝ անդաստան պտղածին արդեան օրհնութ̃ բազմում ժողովրդոց՝ մարգարէից սրբց՝ և թագաւորաց ընտրելոց՝ հայել յուսացաւ. Իսկ միւսն՝ զանհանդերձելի երկնի՝ արուլայնին սենեկի, եօթնեակ զուարկօք բարդաւաճեցոյց. որ է թիւ մի անբաժանե, զընաւն նշանակելոյ զէութի՝ ամծուեն յարակայութ՝ սահման անհետազօտելի, և աւազանին նորածին որդւոց՝ անհատ յորդութի. Այս թիւ պնծալի որում ոչէ կէտ կցորդ իւ և ոչ սպառումն վախճանի. այլ կոյս ամնէ ուրոյն ընտրութ̃ նուիրեալ՝ յաւէտ անճառ վիճակաւ համայն յաւիտենիւ, դժուարաթարգմանելի մերոց իմաստից. Որդ համօրեան յարդարութի անյուսալի փրկութե հոգւոյս՝ զամենավարան ձայն կողկողանաց արտիս հեծութ, ընդ նախագրելոցն երջանկաց

ծըղեալ և դատեալ զայս դաւանութի փոքր հաւա-
տոց՝ իմոյս խնդրուածոց. զի կեցից և ես առ նոքօք
բերկրեալ ընդ նոսին, բուռն հարեալ քան զիմոց
գործոց՝ զքոյդ շնորհաց. Մանաւանդ զի կրկին
բարձունք են և փառաւորք՝ և քան զչափ կշռուն
բանի գերագոյնք՝ իմումս խռովութե հաշտարանք
և հզօրապէս քաւարանք, և կարծեաց թերութե
մտաց սլացեալք. Ընդ արեանքո ահաւորի՝ և ը
մրմնոյ ծնողդ քո խնկելի. Պարք առաքելոցն. դասք
մարգարէիցն. գունդք մարտիրոսացն՝ ձիաւորէլքն
հետևակ՝ սպառազէն արիութե՝ մերկամարտիկն
մրցութե. գումարք միանձանց. բոյլք բանականաց
ընտրելոց. ժողովք բարեկրօնից. հոյլք հոգեղինաց՝
յերկրէ երկնաւորաց. զինուորութիւնք վերնականաց՝
ընդ մեզ կցորդելոց. Նուանդք երախայրեաց. մա-
տուցմունք զոհկաց. լուցմունք ղամբարաց. բուր-
մունք խնկոց՝ իւղոց հանդերձանօք. յաղթանակք
փրկական նշանաց. կառուցմունք խորանաց սրբա-
բնակաց. Ձեռք քահանայից՝ շնորհիւ կատարելոց՝
առ շարժումն անձին յիշատակ ամոյ. առ փոփոխումն
գարշապարի. առ կործանումն աջոյ, և համբարձումն
բազկի. առ բարիս գոհութե, և առ գթել աղաչանք.
Առ բանս ընտանիս. առ խօսս հասարակաց. առ ձայնս
բնաւորականս. առ գործոց յաջողուածս, առ առա-
քինութե ջերմութի, որ 'ի սուրբ ընջեան և 'ի դի-
շերի՝ ընթացմունս օգտականաց հոգևորաց՝ քա-
ռաջնորդելք. 'ի նիրհել և 'ի զարթնուլ. 'ի պատե-
րազմի ազգաց. 'ի մարտս դիւաց. 'ի հակառակութիս
հերձուածողաց. առ փոքունս. առ մեծամեծս. առ


ձը

ձգումն ընկելեաց և ճաշակումն կերակրոց. և որ
ինչ միանգամ 'ի կերս մեր կերպանան, եթէ հեշտա
կանն՝ եթէ տատամնելիս. վս սմանց աղօթս՝ ճնալ
'ի նոսին, և յաղագս սմանց՝ զի զերծ արասցես
սքանչելապէս հնարիւք անճառելիւք. հաւատացել
յամենեցունց, թէ բաւական ես ամի. կաթնա-
բոյծ հասակաց, տիոց պատանեաց, միոց վայրե-
նեաց, ստամբակաց գոռոզաց, մինչ զի առ թա-
տերս տեսարանաց, և առ կոյտս խառնիճաղանճ
բազմութեց, և կամ առ կաքաւս կայթից անախոր-
ժականաց կամաց հզօրիդ՝ ոչ ես մոռացեալ.
3 Արդ՝ դու ստացար զամենեսեան, և քո են ամե-
նեքեան, և ողորմեսցիս ամենեցուն՝ միայն բա-
րեգութ. զի թէ և մեղիցեն, քո են, վս զի 'ի քում
համարի են, քանզի գիտեն զզօրութի քո, ըս ա-
ռակողին մաղթանաց. Որում և ես կցորդիմ թըշ-
նաւս բանիւ՝ մխայեալ սորին յանցաւորաց. յան
դըգնիմ ասել, թէ որ կարդայ զքեզ գովեստիւ,
ծանուցել զքեզ թէ իցես, թէ և եօթնեամբք իցէ
վարակեալ՝ կրկնապատիկ պատժաւորութ, առ այս
օրինակ կիրթ ձեռնարկութե, զիարդ ոչ քո իցէ.
Որպէ տեսանել 'ի մէջ արջնատես ագռաւուց՝
ըսպիտականիշ երամս աղաւնեաց. 'ի մէջ խորխտա
կանաց ձիոց անմպըրից՝ ոլոջս հանդարտաբարս. 'ի
թիւ շանց գազանականաց՝ գառինս նուիրելիս.
Հեզութի 'ի խստութե. կատարելութի 'ի թերու-
թե. խոնարհութի յամբարհաւաճութե. ճշմարտութի
'ի ստութե. միամտութի 'ի մանկութե. անբծութի
յաղամուութե. բարօրութի 'ի չարութե. պարկեշ-

տութիւն ՚ի լկտութեան · ողորմութիւն յանդգնութեան ·
ապաշաւանք յանյուսութեան · քաղցրութիւն ՚ի բարկութեան ·
հաշտութիւն ՚ի թշնամութեան · անոխութիւն ՚ի խածան-
ղութեան · քաջալերութիւն ՚ի լլկութեան · օրհնութիւն ՚ի
նետաձգութեան · Զոր ոչ բաւականացայ երբեք ՚ի գա-
տել ճշգրտապէս, թէ ո՞վ յերկրածնաց սատ
կանխեսցէ ժառանգել զքեզ, որ միայն անաշա-
ռաբար կշռամբես իրաւամբք զարդարութիւն՝ առ
ամբարիշտ մաքուրն, և առ պոռնիկ զղջացեալն ·
առ ամենեսին բարեգործ՝ միայն թագաւոր օրհ-
նեալ ՚ի բարձունս, և յամենայն յաւիտեանս · ամէն ·

---

+Սկզբն յաւելուածոյ կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն,
ըստ նոյն ողբերգու մաղթանաց բանի · ՚Ի խորոց սրտից խօսք
ընդ Այ · *Բան · ԻԳ ·

Նւ արդ՝ ես յետնեալս ՚ի նախադրութեանց
արժանաւորաց՝ գրեալ ինձէն ընդ պար-
տաւորսն պատժոց, հայցեմ զողորմութիւն ընդ
ամցուն մաղթանաց · Ընդ նկունս և անհամարձակս ·
ընդ տկարսն և փոքրկունս · ընդ ընկեցիկսն և
արհամարհեալս · ընդ տարագրեալսն և առ քեզ
դարձեալս · ընդ երկուացեալսն և ճշմարտեալս · ընդ
կործանեալսն և յարուցեալս · ընդ ընկճեալսն և
հաստատեալս · ընդ գլորեալսն և կանգնեցեալս · ընդ
մերժեալսն և ընկալեալս · ընդ ատեցեալսն և կոչե-
ցեալս · ընդ ապշեալսն և զգաստացեալս · ընդ անա-
ռակեալսն և զսպեալս · ընդ հեռացեալսն և մեր-
ձեցեալս · ընդ հերքեալսն և սիրեցեալս · ընդ պատ-


կա

կառեալսն և զուարթացեալս․ ընդ ամաչեցեալսն և
խնդամոլեալս։ Այլ ես պատճէն ատանօր դար-
ձեալ՝ ոչ զմեղսն երուսաղէմի, ընդ մարգարէին հը-
րամանատուութեն, որ առ ժողովուրդն նախկին, և
կամ տանն յակոբու զանօրէնութիւս նոցա, այլ իմոյս
ժամանեցից յայտնութեան․ քանզի աւաղ ընդ աղէտս
մահու յարելով, ըստ մարգարէին, յանդիմանեցից
զիս ինքն՝ ինձէն իմովս ձայնիւ, ըստ սաղմոսողին․
որպէս զի յանձնառական յայսմ համայնապատում խոս
տովանութեան՝ ոչ կարօտացեալ կրկնակին, միանգամայն
իսպառ սրբեցայց՝ օրհնեալ հրամանաւ էիդ․
2 Նաւ արդ՝ կրկնելով ծունր բարերարիդ քաղցրու
թեան, տարածեալ զանձն իմ առաջի, զ'ի մահ
գլորմանն ցուցից կերպարան․ որ 'ի հող խոնարհեալ
մածայ ընդ երկիր, և ընդ անցաւորս այս կենցաղ
կորստեան՝ անասնական գեանագարշութեան սողնոյ
ասհեցմամբ՝ կամօք բևեռեցայ․ Այլ 'ի քեզ տէր
յեցեալ իբր 'ի հաստարան կենաց գաւազան՝ 'ի յար
մատոյն գաւթի ընծիւղեալ մարմնով անճառ շաղ
կապմամբ յանեղ աստուածութիդ, կանգնեցայց անդրէն
կիսայար՝ պատկառեալ 'ի քոյդ երախտեաց՝ 'ի վայր
կորացեալ դիմօք, աչք 'ի բարձունս յառեալ ողոր
մածին տեսութեան 'ի քեզ՝ մերձ 'ի հեծութեան, բնա
ւին ողորմութեան, բոլորովին քաղցրութեան, զլին լու
սոյս արտասուօք լցեալ՝ պաղատանս յուսոյ առջի
մեծիդ վերընծայեցից․ Զի ուր ամենատառատ անձը
ուաղ երկայնմտութեան՝ քո դառնացուցչիս, միայն
դու 'ի յամի սահման փրկութեան, աստուած բոլորից․ ան
ճառ մեծութեան․ անբովանդակելի բնութեան․ անքննելի



իս

իսկութի · հզօր զօրութի · կարօղ բարերարութի ·
անպակաս լրութի · անձառ ժառանգութի · վայել
չական վիճակ · առատ պատրաստութի · անստուեր
իմաստութի · տենչալի տուրք · անձկալի ձիր · բաղ
ձալի բերկրութի · անտխուր հանգիստ · անտարակոյս
գիւտ · անկապուտ կեանք · անծախելի ստացուած ·
անփոխանորդելի բարձրութի · ամենարուեստ բժիշկ
անսասանելի հաստատութի · Դարձուցիչ մոլորելոց ·
գտիչ կորուսելոց · յոյս ապաւինելոց · լոյս խաւա
րելոց · քաւիչ մեղուցելոց · ծածկարանդ փախուցե
լոց · անդորրիչ խռովեցելոց · փրկութիդ մահացելոց ·
արձակիչդ կապելոց · ազատիչդ մատնելոց · պատըս
պարանըդ սահեցելոց · վշտակիցդ գայթակղելոց , եր
կայնմտութի տարակուսելոց · Լուսոյ տեսակ · ցըն
ծութե ցօղք · օրհնութե անձրև · հոգի երեսաց ·
զօրութի դիմաց · հովանի գլխոյ , շարժարան շըր
թանց · ազդումն բանի · կառավար անձին · բարձումն
բազկի · ձգումն ձեռին · երասանակալդ սրտի · Ըն
տանի անուն · մերձաւոր ձայն · կցորդութի հարա
զատ · խնամածութիւն հայրենի · խոստովանել ա
նուն · պաշտեցեալ պատկեր · անպարագիր տիպ · եր
կրրպագեալ տրութիւն · բարեբանեալ յիշատակ ·
խնդութե մուտք · անվրէպ շաւիղ · փառաց դուռն ·
Ճշմարտութե ճանապարհ · երկնաճեմ սանդուղք ·
Նաւ այլ բազմութիւն բանից գովեստից անհա
մար կարգաց՝ և տանց անբաւից , զոր ոչ բերէ
բերան երկրածին , և ոչ տանի գործի մարմնեղէն ·
և ոչ կշռեն իղձք հոգեղէնք ·

3 Լուբեղ հայր ամ ակն տեսողի՝ ա՛ ծդ ամենայնի ·



նայեա

նայեա՛ 'ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց ծա-
ռայից, և թէ յաղախնեաց ոք աղաչեսցէ։ Եւ ըն-
կա՛լ զցօղ ողբերգութե լալոյ արտասուաց աչացս
ցանկասիրի՝ յանարատ ոտս մարդեղութե քոյ՝ ք՛ս,
և օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն յանցաւորի՝
զաւքեզ դարձն և կղաւանութի․ և համբուրիւ
շրթանցս առ ճաշակ փրկութե կենացդ հոգորդութե՝
համաշնչապէս պանքակ միութի․ և զնոյն գթութի
նորին ողորմութե ընկալեալ 'ի քէն՝ բարերարս
գրաւականեսցէս զմեծդ պարգև՝ ընդ փոքու հա
ւատոցս․ և 'ի ձեռն գթութե սիրոյ քոյ առ քո անձ
կալի անուանդ խոստովանեալ ծառայիս, դարձցի՝
ձմերուանք հողմոյն խստութե՝ 'ի յօդ հանդարտու
թե․ և միրկին սաստկութի՝ 'ի սին ախորժութե․
և կարծրք երկինղին՝ 'ի մեծ վստահութի․ և պա
տուհաս պատժոցն՝ յերանութե պատահումն․ և
վտանգք թախծանացն՝ 'ի հոգևոր խրախճանութի․
և ալէկոծութի ծփանացն՝ 'ի խոր խաղաղութի․
և զեկացն թևարկմունք՝ յանքոյթ նաւահանգիստն․
և՝ բերք բեռանցս մեղաց՝ փոխարկեսցի՝ 'ի թոշակ
շնորհաց․ Եւ յայսքանեացս ամենից բիւրուց
բարութեցս 'ի քէն եղելոց՝ մեծասցի՝ անուն հզօրիդ
խնկեալ և խոստովանեալ․ ամաչեսցէ բանսարկուն
չարեաց՝ հերքեալ և հալածեալ․ ունայնասցի՝ն մուր
հակք մեղացս․ խզեսցին խաղքն․ որոշեսցին որո-
գայթքն․ կապտեսցին կապանքն․ վանեսցի՝ վիհն․
վէրասցի՝ն վնասքն․ պարսեսցի՝ն պատրանքն․ ջրեա-
ցի՝ն մեղքն․ պատառեսցի՝ն պտուղքն խորտակեսցի՝
լուծն․ քակտեսցի՝ն քեղիքն․ Եւ ը մնայլ միթութե

չարեացն յանցանաց, և դիւացն բանակաց պաշարո-
ղաց՝ արև փառաց քոց ժամանեացէ՝ կեցուցանել
փրկել և լուսաւորել, յաջմէ և յահեկէ, 'ի դիմաց
և 'ի թիկանց. և եղիցի նշոյլ առաւօտու հոգւոյ
գարնայնոյ Է ակնկալութե սպասողացն քումդ
երևման. Զի դու ես բարերար առ ամենեսին,
և հնարաւոր են քեզ ամենայնք. և ամենեցուն ըզ-
կեալն կամիս, և զփրկութիւն բաղձաս.

4 Ո՛վ ամենապարգև ձեռն յի քի, և առ իս դարձ-
ցիս կարկառմամբ շնորհի աջոյդ քո ս՜րբ բնա-
կեալ միացեալ, և ոչ հեռացեալ յանձկութե սրտէ
տիրոյ անենեկիս. և անեղծական քո նկարագիր՝
նըշխար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկա-
ւէտ կոչմանս՝ ընդ իս պահեսցի, միջնորդեալ
ընդ քեզ 'ի մատեան յաւիտեան՝ կտակաւդ կենաց՝
հոգւոյդ աւետեաց՝ երկնից յօրինողիդ. Եւ քեզ
միայնոյ պատճառիդ, և միոյդ 'ի միոյ պատճառէ, և
ունողիդ զպատճառ միոյ, երրեակ անձնաւորու-
թեդ և միոյ ածութեդ վայելէն փառք յերկ-
նաւորացն վէհից, 'ի սրբոցն դասուց, յաւիտենս
յաւիտենից. ամէն.

---

+Ս_երովբէին յարուցեալ կիրակէն հեծանէ՝ նոյեն հովուին, առ նոյն ողբերգս մաղթանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք ընդ այ. *Բան. ԼԴ.

1 Որ՝ զյարմարութիւն պաշտաման բանիս 'ի
խայլեաց հոգւոյս քեզ նուիրելոյ՝ օրհնել
բարեգութ, կցորդելով ընդ խնկա-



զգես

զդեստուցն զուգամասնայս՝ խառնեցես 'ի յանտ-
շութի կազմութե իւրոյն մարմնոյ՝ կենաց բարե-
պաշտի. Որ հաւատարեալ նոյնութե ը երջանիկ
պոռնկացն՝ 'ի քեն ընկալելոցն՝ յաւետահրաշ յոր-
դանոք, պարարեցիս մեծապէս իմովս բանիւ նը-
ւաստիւ, ընկալեալ յանհաս և 'ի բարեբանեալ գը-
լուխ բարձրելոյդ. անկշտամբելի 'ի բանբասանաց
տաղմնուին; մի՛ օծցես զոտերև սուտոց գոգաւթան՝ իւր
մեղաւորին. Այլ արասցես զօրանալ կրկին յաւձա-
խութե՛ բուրման խոստովանութե այսր մատենի՝
'ի բազում աղբեալ, համասփիւռ ամենատարած և
աշխարհալիր տանն տեսակաւ, ըստ օրինակի համե-
մատութե նոցայն յիշատակի. քանզի դու նոյն տէր
զվստացուցիչ նախնի չարախորհրդ կնանց մեղա-
ւորաց. Որոց առաքեալ զմարգարէին կերպարան՝
քումդ ճշմարտատիպ պատկերի յեղանակեցեր, ան-
տուստ առ սուրբն անճառ ներգործութե՛ 'ի յիս
վերաբերեալ զծայրագոյն շնորհին կատարումն. Ընդ
անտանելական գարւոյն կերակրոյ, զլիզմահամբար պը-
տուղ ցորենոյդ՝ կենացդ հացի. ընդ ապականացու-
արծաթոյն, զարքունական պատկեր. Է յիմարտ-
բար թմբրութե գինւոյն, զբաժակդ արեան արար-
չիդ. Է իւրոյն առելոյ՝ 'ի յայլրատ կնոջէն հնոյ ժո-
ղովրդեանն, զօծումն շնորհին առ իս դարձելոյ.
ընդ զերծման գլխաշուք կատարոյն, զանապականութե
վերարկուն. ապարանջանին պաճնութե՛, պլթուիչս բա-
րեմասնութե , օրհնիւն և աւետարանաւն՝ հան-
դերձ գործնական առաքինութե՛ն. ընդ ունկանն
դնդի՝ վայելչականն զարդու, զանմոռնելի յիշատակ



տէր

տրտունջականդ ձայնի · ընդ քայլս՝ պերճութեան լան-
ջացն , զորքնահասանք սանդս ուղղութեան՝ քոյինա-
կրօն լծոյդ քաղցրութեան ·

Բայց զի՞ է յայսոսիկ ինձ պարծել, և ոչ մերոցս
տին ՚ի նոյն պատկառել · Աւա՛ղ աւա՜ղ օրինակ փո-
խեալ զմասեան մաղթանաց այսր ողբերգութեան որ
ինչ ինձ է յարմարաւոր, մինչ հատուցից զպատիժ
պարտուցս իմոց մեղանաց, ՚ի մերձաւորեցն տարից
բերել համառօտս՝ ՚ի նոյն յարկ մուծից սաստիկ դա-
տախազ · Է՛ ողբոց նոցին լծակցեալ, քան թէ ընդ-
բերկրութեան նոց պարել · յորս հաւաքանս, ձայնս հե-
ծութեան, բողոքս բարկութեան, նախատինս խորտակման,
լալութեան կարևոր · Աւա՛ղ մեծիդ մոյ գթութեան ամե-
նաժամանն՝ կանուխ ազդեցաւ յիմ յուսատրութեան ·
սա որս՝ զղջմունս խոստովանութեան, աւետիս, պար-
գևս · լուսոյ երևմունս, խրախոյս մեծայինս, փա-
ռաց ժառանգութեան, հրաշից յայտնութեան, սքան-
չելեաց տեսութեան · Յորոց ոմանք յոյս ընձեռեն,
և ոմանք մխիթարութեան բազում մատուցանեն · յորս
ես կամաւ կործանեալ՝ կորստեանն մերձակեցայ ·
Ո՛չ ի եթէ զգեստ մոյ զխորագութեան պատրուակս
սաց եզեկիել յորում արար ժողովուրդն կուռս
կարկատունս՝ որով պոռնկեալ է ՚ի նս · իսկ որքան
պատիժ անմաքրութեան եղիցի՝ զմեծ զգեցողիս ներ-
քոյ և արտաքոյ · Ո՛հ զարմանամ, թէ զիա՞րդ ոչ կե-
զում · հիանամ, թէ ընդէ՞ր ոչ այրիմ աճիւնիմ, թէ ընդէ՞
չյափշտակիմ տանջեալ, լքեալ, չարչարեալ, ջա-
խեալ, մանրեալ, խորտակեալ, կտրեալ, բաժա-
նեալ ՚ի յօրինակէ ժանեաց կորուսչին, Է՛ գրոյն ·

Սոյն այս միայն է պահեցեալ ինձ նշոյլ յիշատակի փրկութեան յուսոյ, զի քրիստոսեան աւետարանն կեանս է ամենեւին, ՚ի կերպարանաց պատկերի բանին ծանուցեալ: Որով առ մեղանսն դարձն. առ պարտիսըն՝ շնորհն. առ եղծուածն՝ նորոգութիւն. առ անօրէնութեան՝ քաւութիւն. առ վէրն՝ բժշկութիւն. առ վտանգն՝ անդորրութիւն. առ պատիժն՝ ներումն. առ պատերազմն՝ հանդարտանալն. առ հուրն՝ անձրեւն. առ պատուհասն՝ պարգեւն. առ ակնկալութիւնն սատակմանն՝ ձիրն. առ գործարան մահուն՝ կենացն ազատութիւն.

3 Նաեւ զի ո՛չ է ինձ զայսքանեաց յիշմանց ՚ի թիւ արկանել, եւ ո՛չ զանձառելեացն սատանօր դասել: Յիշատակաւ հօրն բարձրելոյ՝ յորդւոյն կցորդութիւն յանուն միածնին՝ առ հայր ընտանութիւն. սոցին ակնարկութեամբ ընդ հոգւոյն հաղորդութիւն. Խաչին փրկանք. բանին սփոփութիւն. բարւոք վարձ կամացս՝ առ կշռութիւն գիտողին. աւազանն կենդանարար՝ հաշտութեան միջնորդութիւն. Նաեւ այլք ամենայնք անթիւք բարիք՝ ՚ի բարերարէն բարգեւեցեալք, ազատք ՚ի հարկէ, արձակք ՚ի լծոյ. իշխանականք՝ եւ ո՛չ իշխեցեալք. Սոքիկ են՝ որ ինձ ՚ի մէջ դառնութեան մահու՝ կեանս անտարակոյս աւետարանեն. քանզի եթէ ո՛չ զայսոսիկ ունէի, կանխաւ արդեօք կորուսեալ էի իսկ եւ իսկ ըստ բանի երգողին. Ես փոքրկութեամբ որդւոյ՝ զհայր փառաւորեմ, ո՛չ նուաստութեամբ հոգւոյ՝ զորդի նախադասեմ, համափառ ունիմ զերեսեան՝ եւ նոյն արարչութեամբ. Քանզի եւ ՚ի դէմս հոգւոյն սրբոյ՝ այս են աղաչանք նախընծայ

սկզբան պատարագին՝ յորում գառն երկնաւոր
զենանի, զայս աղօթեսցի.

Աղօթք, որ նոյն ժամն շշնջաբարբառն մատուցանի։

4 Ամենակալ բարերար մարդասէր Աստուած բոլորից,
յօրինող երևութից և աներևութից, փրկ
կող և հաստատող, խնամող և խաղաղարար, հօր հը
զօր հոգի, հայցեմք բազկատարած մաղթանաց գոչ
մամբ հեծութեան՝ յընդդիման եղեալ քեզ ահաւորիդ.
Մատչիմք մեծաւ դողութեամբ՝ սաստիկ երկիւղիւ՝ մա
տուցանել նախ զգանձական զայս պտուղ՝ քում ան
զննին զօրութեանդ, իբր աթոռակցի փառակցի և ա
րարչակցի հայրենի անկշռելի պատուոյդ, և քննո
ղի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կա
մաց հօրդ եմմանուէլի՝ զքեզ առաջի, փրկչի և կեն
դանատուի և արարչի Աստուծոյ: Ի ձեռն քո ծանուցաւ
մեզ երրեակ անձնաւորութեամբ միասնական աստուածութեանդ,
յորոց մի և դու ծանուցիս անհաս: Բայց, և՛ ի ձեռն
քոյ առաջինքն նահապետականն տոհմին շառաւիղք՝
տեսանողք անուանակոչեալք, զանցեալսն և զգա
լոցսն, զեղեալսն և զոչ գոյացեալսն, անստուերապար
բարբառով բանի վերապատմեցին: Ոգի Աստուծոյ քարո
զեալ զքեզ մովսէսի, որ ՚ի գնալն քոյ ՚ի վերայ ջրոցն՝
անպարագիր զօրութեան, ահեղ շրջարկութեամբ տածո
ղականաւ՝ թևապարփակ պաշտպանողաբար՝ զթաս
բեալ ՚ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ
ծանուցեր: Յոր կերպարան օրինակաւ՝ նախ քան
զկառուցանել զայծդ մածուած վերջնում վարա
գուրիդ՝ յօրինեցեր կարող ուրապէս զբովանդակ

բնութիւս ամենեցից բնաւորից բոլորից գոյից ամ՟ էից՝
յանէից։ Որ և ստեղծանէին ՚ի նորոգումն յարութ
ամ՟ եղէականքս առ ՚ի քէն՝ յայնմ ժամանակի, որ է օր
վերջին՝ այսմ կենցաղի, և օր առաջին՝ երկրին կեն
դանեաց։ Որեւ հնազանդեցաւ միութե՟ կամացն՝
ով հօրն խորհուրդ, աղաչանօքն քո՝ էակիցն հօր՝ անդ-
րանիկն որդի․ մերում կերպիւ զքեզ աւետարա
նեաց Ճշմարիտ ած՝ հաւասար և համագոյ հօր իւր
հզօրի, և զառ ՚ի քեզ հոյհոյութիւն անքաւելի քա-
րոզեաց, և իբր զած․ մարտիցն զքո հեստելոցն՝ հա-
րաբանական բերանս կարկեաց, և զխուրն շնորհեաց՝
արդարն և անարատն՝ գտիչն ած․ որ վասն մեղաց
մերոց մատնեցաւ, և յարեաւ վս զմեզ արդարա-
ցուցանելոյ։ Նմա փառք ՚ի ձեռն քո, և քեզ բա-
րեբանութիւն ընդ հօր ամենակալի, յաւիտեանս
յաւիտենից․ ամէն։

Պարզեալ ներբողեան ՚ի նոյն նորին բանի, ընդ հարա-
հուբիանն շնորհոյ հրաշագէս ցուցանելոյ աղերսեալ։ ...ե
տարանել վերոյին շնորհին խաղաղութեան։

5 Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ
յամ անձնէ՝ զփառաւորեալ արարչութիդ՝ ան-
եղծ և անստեղծ՝ անժամանակ հօգւոյդ դթածի,
որ բարեխօսդ ես վս մեր յանմռունչ հեծութիւ՛
առ ողորմածդ հայր․ որ զբան պահես, և զմեզ ղու-
ցեալսն մաքրես՝ և տաճարս կազմես կենդանի և
կեցուցիչ կամաց բարձրելոյդ հօր։ Սուրբ՝ ողո-
ւեւ զմեզ յամ անմաքուր գործոց, որ ոչ է հա-
ճոյ քում բնութե․ և մի՛ շիջցէն առ ՚ի մէնջ



լու-

լուսոյդ շնորհաց փայլմունք՝ 'ի տեսականացս ա-
չաց իմաստից · վ̃ս զի զքեզ ուսաք միանալ 'ի
մեզ 'ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց·
Եւ քանզի մինչ յերրորդութենէդ պատարագի,
և միւսոյդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար
արեամբ անդրանկի իւրոյ · իսկ դու ընկալցի՛ս
զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթևանս
պատուականս ա̃մ պատրաստութ̃բ՝ 'ի վայելումն
ճաշակման երկնաւոր Գառինդ, առանց պատ-
ժոց դատապարտութ̃ե՝ ընդունել զայս անմա-
հացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութ̃ե·
Եւ հալեցեր 'ի հրոյս յայսմանէ դայթագղու-
թիս մեր, որպ̃ մարգարէին կենդանախարոյկ
կայծակամբն՝ 'ի ձեռն ունելեացն մատուցման·
զի յա̃մ քոյդ քարոզեսցի գթութիւն, որպ̃
որդւոյդ ա̃յ հօր քաղցրութ̃ի · որ զանառակ որ-
դին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութիւնն,
և զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայու-
թի̃ն՝ արդարոցն երանութ̃ե· Այո՛ այո՛՝ և ես
մի եմ 'ի նոցանէ · և զիս ընկա՛լ ընդ նոսին իբր
մարդասիրութ̃ե կարօտեալ մեծի, շնորհօք քո
ապրեալ, զարեամբ քո̃ սրբոցեալս. Ո՛ ի յայսմ
ա̃մի՝ յա̃մի ծանիցի քո ա̃ծուիդ՝ ընդ հօր փա-
ռաւորեալ համապատուաքար 'ի մի կամս, և 'ի մի
իշխանութիւն գովութեան · զի քո՛ է գթութ̃ի,
և կարողութ̃ի և մարդասիրութիւն, զօրութ̃ի
և փառք յաւիտեանս յաւիտենից·

ամէն·

+ Սերովբէն յաւերժական կրկին հեծանէ՝ նորին հնչումն, առ նոյն ողերգս ծաղկանոց բանի. Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ոչ. *Սաղմ. Լ Գ.

1 Որդ՝ առ այսորիկ Թշուառացեալ շնչոյս իմոյ
խղձք, և առ քեզ դաւանութիւք յարմարա-
կանք, որ բովանդակես բանիւ զամ՛ ած, զոր
՚ի նախնին Ճառեալ՝ և յերկրորդումն ցուցից.
Իսկ յանդիմանութիւս գրաբանականս՝ ՚ի կոյտս բազ-
մութե ազգաց, և Թարգմանութիւ ժողովրդոց, զայս
արդահատութիս մաղթողականս նուիրեցի, զոր
ներքնաշարեալ զդ սահմանադրեն գոհաբանութիք.

2 Ի հանդիսարանս խօսից առէնի՝ բանս ծաղկանոց, որոշ
հոգին ոչ հաշտեալ՝ հատանէ յօդնողականութիւն.

2 Ողջեմ զանփոփոխելի էութի ամենազօր
հօգւոյդ հզօրի. առաքեա զզօղ քաղցրութե
քոյ, և բարեգործեա ՚ի յանձին՝ և յէշխանական
ազդման զգայութե՝ զամենայնից շնորհս բազմապա-
տիկ քո ողորմութե. Նա հերկեա զբանական ան-
դաստան՝ մարմնեղէն կարծրացեալ սրտիս, յընդու-
նակութի արդասեաց հոգևոր սերմանց. Քում
ամենիմաստ էութեդ խոստովանիմք զամ պարգևս
՚ի մեզ ծագեալ և աճեցեալ. որ ձեռնադրես ա-
ռաքելս. լցուցանես մարգարէս. ուսուցանես վար-
դապետս. բարբառեցուցանես համրս, և բանաս
զփակեալ ականջս խլից. ո՛վ ազգակիցն քո՝ էակիցն
հօր՝ անդրանիկն որդի, քոյին գործակցութե
ներգործելով զայս ամ՝ քարոզեաց զքեզ ած հա-

ւստարանկէց իսկութեդ հօր. Շնորհեա՛ և ինձ
մեղաւորիս խօսել համարձակութբ զկենդանարար
խորհուրդ աւետեաց աւետարանիդ. հետևել արա
գալթուիչ ընթացիւք մտաց՝ ըբ անհուն ապարէզ զօ
քոյինաշունչ կտակարանիդ. Եւ ՚ի մատչել իմ ՚ի գըր
լուխ հանդիսի՝ մեկնութե բանի. Նախաժամանեացէ
առ իս գթութի քո, խօսելով յիս զարժանն և ըղ
ղիտանիսն և զհաճոյսն քո՝ ՚ի ժամանակի, ՚ի փառս
և ՚ի գովեստ ածութեդ քո, և ՚ի լրութի շինութե
կաթուղիկէ եկեղեցւոյ. Եւ կորկառեա՛ ՚ի վըր իմ
զամենամերձ աջ քո. և զօրացո՛ զիս շնորհօք գթու
թեդ քո. Փարատեա՛ ՚ի մտաց իմոց զմեգ մթութե
մոռացութե, ապաքինեալ ըբ նմին զխաւար մեղաց,
ամբառնալ ուշիւ իմաստից՝ ՚ի կենցաղոյս երկրէ
՚ի բարձունս. Լուսաւորեա՛ ՚ի յիս վերստին՝ զծա
գումն անստուեր հրաշից գիտութե ածութե քոյ՝
հըզօր. արժանի լինել՝ առնել և ուսուցանել՝ յօրինակ
բարեաց ածասէր լսողաց. Եւ քեզ ամ փառք՝ յամս,
ընդ հօր ամենակալի, և ըբ որդւոյդ միածնի և բա
րերարի. այժմ և յանվախճան յաւիտեանս. ամէն.
Իսկ զհաւատոյ սահման բանի ընտրութե շնորհի՝
կենաց կանոնի՝ առ համագոյ սբ երրորդութեն՝ զայս
վարդապետեցի. զոր շաւիղ կարգիդ վերանկարէ.

Սերոբերոյն տեոյշլոյելոյն նորոգ սոեղծօղէնոյն, ող
ջեուն յոյ, յոր ինչ ՚ի նինկիոյն սոհմոնեցոս հաստոք.

3 Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և եր
կրպագեմք զղուգափառ միութի ամենասբ
երրորդութեն. Միութիւն անճառ. միշտ
ըբ



բա

բարի. նոյնագոյ, հաւասարապատիւ. անհաս իմաս-
տից թեւոյ սլացման, ՚ի վեր քան զօրինակ և անդր
քան զնմանութի, գերազանց գոլով սահմանի՝ ան
պարագծի բացարձակութ̅բ, յաւէլ քան զհիմն
յաւխտեանցս անտարրափակ էութեց, ստեղծակա-
նացս կարգաց, օրհնաբանութ̅բ անթարգմանելեաւ՝
ամենահարուստ մեծութեամբ՝ յաւէտ պսակեալ.
հաստիչ ժամանակաց՝ և որ ՚ի ժամանակի են կեր-
պաւորեալք. ինքն պատճառ հանդերձից և յար-
մարապէս յօրինիչ տեսականաց և աներևութից.
Ո՛չ անուամբ չափեալ, և ո՛չ յորջորջմամբ նշանա-
կեալ. ո՛չ որակութ̅բ նմանեալ, և ո՛չ քանակու-
թեամբ կշռեցեալ. ո՛չ օրինակաւ ձևացեալ, և ո՛չ
որպիսութ̅բ ծանուցեալ. ո՛չ ՚ի թերութենէ առա-
րածեալ, և ո՛չ ՚ի լրմանէ ամփոփեալ. ո՛չ ուրեք
երբեքի գրաւեալ, և ո՛չ ՚ի տեղւոջ վայրի
երևեալ:

4 Հայր գթութեց՝ ունող ամ̅ի, և ամ̅ծ հանուրց՝
որ յերկինս և որ յերկրի, բաց ՚ի բանէն միայնոյ՝
որով զամ̅ ինչ ունի. Ստեղծիչ և տուիչ ընչոց ա-
մենից, բաց ՚ի հոգւոյն իսկակցէ՝ որով զհամայնն
կազմեաց.

5 Մ՟ինն յերջանկափառ համազօր ահաւորութե
երիցն անձնաւորութեց, խոնարհեալ ՚ի վերուստ
աստուստ ՚ի ստորինս. որ էրն իսկ ՚ի բնէ անբաժ ՚ի
ներքնոցս՝ անկապուտ մնալով փառացն աթոռոյ, և
անկարօտ դիմացն ծնողին իւրոյ. Մտեալ ՚ի սե-
նեակ կուսին արգանդի պարզաբար, և եղեալ անտի
յօդաւորաբար մարմին էակս՝ անորոշելի. անթերի
մարդ.

մարդկութեն, և անպակաս աստուածութեն։ Մի որդի
հօրն միայնոյ, և միածին անդրանիկ՝ ածամայր տե֊
րածին կուսին, արարիչն՝ յեղականութեն մարդ ելով
ճշմարիտ սկզբնածին. ահա ոչ զկնի եղելոց երկրա֊
ստեղծիցս նմանութե, այլ նոր և չքնաղ թագաւո֊
րաց վեհափառ, որ ոչ ցուցաւ ՚ի դարս, և ոչ գոյա֊
ցաւ ՚ի ժամանակս, անդրանիկ՝ ըստ սաղմոսողին,
քան զամ թագաւորս երկրի. անապական խառնու֊
թե՝ կերպացեալ զմերս ՚ի մարմնի, ըստ օրինի հո֊
գւոյ ընդ մարմնոյ, և ոսկւոյ ընդ հրոյ, և կամ յայտ֊
նապէս իսկ ասել՝ լուսոյ ընդ օդոյ. ոչ փոփոխեալ
և ոչ անջատեալ։ Նոյն ինքն եկեալ կամաւորութբ
՚ի խաչն մահու, իբր զգառն անարատ՝ ՚ի սպանդ վա֊
րեցաւ, և հանդերձեաց զօրեղ ինքնիշխանութե՝
զարարածոց իւրոց փրկութի. չարչարեալ իսկութբ
կենդանեօք՝ եդաւ ՚ի շիրիմի անորոշելի յածութեն.
եռօրեայ թաղմամբն՝ ՚ի դժոխս սանդարամետակա֊
նացն վհատելոցն բանտարգելիցն՝ քարոզեալ ցու֊
ցաւ նորոգումն և լոյս։ Եւ աւետեալ զտնօրի֊
նականացն զփրկանաւորն զտնտեսութի, ածապէս
վերակենցաղեաց. և կառավարեալ ՚ի թևս հողմոց՝
ելեալ ՚ի քերովբէս՝ ամպով անքննութե ծածկեցաւ.
համբարձեալ գեր ՚ի վերոյ ամ երկնի, նստաւ ճո֊
խութբ յաթոռն իւրական սկզբնաժառանգ հօրն
հաւասարութե, յորմէ և բնաւ իսկ ոչ մեկուսա֊
ցաւ, անկորուստ առեցելովն, և աննուաղ սեպհա֊
կանօքն. Որով և եկեսցէ ՚ի դատաստան հատուց֊
ման, քննել զծածկեալն կշռութբ չափոյ՝ արդար֊
իրաւանց. որում սպասեմք, և յոր աղօթեմք, հա֊

ւատացեալք յանձն ամին ամենակալ տրութեն նր․
որ արդարև միննէ միայն 'ի միայնոյն՝ 'ի միոյն փա
ռակցութի յաւիտեան երկրպագեալ։

6 Բարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ որդւոյ և է
հօր, և զհոգին էութե նոցին՝ ամենազօր․ ճշմա
րիտ, կատարեալ, և սբ․ որ յանէից գոյացոյց զբոլոր
եղեալքս ամ․ ինքնագործ հոմիշխան երկուցն և
ընդ նմին՝ անեղծ և անսահման թագաւորութե․
որ ինչ պատճառն առջին, և բանն աջաւոր նորին
ինքնութե, նոյն ինքն և հոգին բարձրացեալ․ Բարի
ինքնակալ, ամենից բաշխիչ զհօրն պարգևս՝ 'ի գո
վեստ անուան փառաց միածնին․ որ ազդեաց յօ
րէնսն, շնչեաց 'ի մարգարէսն․ փչմամբ ազդակցին՝
տպաւորեցաւ յառքեալսն․ կերպիւ աղաւնւոյ ցու
ցաւ 'ի յորդանան՝ 'ի մեծութի փառաց ծնելոյն․
փայլեաց 'ի գիրս աւանդականաց․ արար հանճարեղս․
զօրացոյց իմաստունս․ ցոյց վարդապետս․ օծ ար
քայութիս․ օծ անդակեաց թագաւորս․ ետ վերա
կացուս․ հրամանատրեաց փրկութիս․ շնորհեաց
ձիրս․ հանդերձաւորեաց քաւութիս․ զմկրտեալս
'ի մասն քի՝ 'ի բնակութի իւր մկրազարդեաց․
զոր հայր և որդի, զնոյն և հոգին ներգործեաց․ և
ինքն է ած խնկեալ տիրապէս՝ ամ յամի․

7 Քանզի ոչ՝ նախամթունելով յերրորդութեն ոք
մեծ ինչ քան զմիւսն․ և կամ զկնի անուանին՝
նուաստագոյն առ նմանն․ և կամ 'ի միոյն ասելով
խառնակութի գոլ զ իմացն․ և կմ յերիցն տրոհումն՝
ուրոյնութի եւ կամացն․ Քանզի անմեծար հայր՝
ամին, եթէ ոչ զբանն ունիցի ինքեան զօրութի․


ոչ

ապ ո՛չ գոլով ընդ նմա հոգւոյն՝ անհաղագ ումն և
անկենդանն՝ և առ ո՛մ հրաման նուաղէր: Նաև բանն՝
եթէ ո՛չ անուանմբ հօրն ծանիցի, որբ ումն՝ և կամ
լքեալ, և կամ 'ի մանհացուէ ումեմնէ ուչէի. Այլ և
հոգին՝ եթէ ո՛չ 'ի պատճառէն նշանակեսցի, ապա-
շուք ումն թափառեալ՝ իբր զշունչ ինչ անդասելի.
Այլ եթէ ոք հակաճառական բանիւ՝ յաւակնի կապ-
տել զհայր 'ի յետուստ բանէն, որ թէ էր երբեմն,
յորժամ և չէր, և անբանութեն բամբասանօք պատ-
ուել վարկանի զվեհին մեծութի, և կամ ստորկութի
տացէ բղխողին՝ ո՛չ բնաւորաբար գոլով հոգւոր,
որովայն իմն գոյութի օտար՝ մուծանել, և կամ
ամբոխումն ինչ այլայլակին՝ յանարատ պատիւ միութե-
ան երրորդութեն, զայնպիսին՝ քարամբք պարսից՝
հաւատոյ բանից, իբր զդժնդակ դևս դիմամար-
տիկս գազանական՝ հերքեալ 'ի միջոյ՝ 'ի բաց հալա-
ծեմք. եդեալ 'ի նզովս զնոյնս ընդ նոսին, փակեմք
ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականս գաւթի.
Ուստի զքեզ երրորդութին փառաւորելով 'ի
նոյն տէրութի միակցորդ հաւասարութե, զու-
գաձայն որբաբանութբ, հանգուցանելիպ հարթու-
թբ, օրհնեալ և փառաւորեալ յերկնի և յերկրի,
'ի ժողովս անդրանկացն, և յազգս երկրածնացս
բանականաց յաւիտեանս յաւիտենից. ամէն.
8 Արդ՝ զայս գոչումն ծածուկ խորհրդոց կերպա-
ւորելոց յայսմ մատենի, ամենալուր ականջաց
մեծիդ ո՛յ ընծայեցուցի սովիմբ սպառազինեալ,
և ապա մտի 'ի հանդէսն. Այլ ո՛չ եթէ կարօտեալ
իմիք ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչև ստեղ-


ծեալ

ծեալ էր քո զնամ՝ նախքան զլինելն երկնի, մտա-
ւորբանչօքն անմահից՝ և երկրաստեղծս բանաւո-
րօք, դուքեղէն 'ի քում լուսէ՝ փառաւորեալ
իսկ էիր, այլ զի զմերժեալս զիս յարդարեսցես՝ ան-
ձառ քաղցրութի, ծածկել զքեզ բանիս հաղոր-
դութբ. Իսկ զի ինչ պարտ իցէ ըստ արքունական
հրամանիդ՝ կենաց կանոնիդ՝ առնել ադոնայի տր,
և զհրամայեալ պատուէրդ ոչ առնել. որ ինձէն իսկ
զիս զոսկեղէն տախտակս խօսուն՝ նուիրել քում
պատգամի, զգրեալս մատամբդ այ՝ եղծի, որ և խոր
տակելն է իրաւացի. և ես տխրատես սակ մրուր զերկ
րորդն նմանութի առեալ հայթայթեմ. Այլ արդ՝
քանզի բազմօք պաղատեցայ դրուանկօք խանդաղա
տականօք, որ ոչ է գրեալ 'ի յայս կարգ ձայնի, լռու-
բարեգութ, ըստ ամենայն բանի՝ այնմ ամի. Ողջիցէ և
այս աղերս բարբառոյ հայցման աղօթից՝ յօդեալ
ընդ նոսին. Թերևս 'ի մաքրոց և 'ի կամարարից այս
նուէր հացի պանից բաղարջոց՝ իւղով զանգելոց,
'ի սեղան փառացդ քոց մատիցէ.

9 Այլ դու բարերար և յամ մարդասէր, քնդ մի
այ միոյ. հզօր և ամենակալ. որ յաղթես գթու-
թբ խնամոց քաղցրութե քո, ոչ հասարակականաց
միայն մարդկութես՝ իմոց գոյակցաց, առ որս յա-
ւէտ է ամբոխութի և բիւրամասնեայ հակառակու-
թիւն, այլ և հրեշտակացն անախտականութե. նաև՝
ևևս քան զայս՝ սրբասնելոցն անարատութե, յորոց
մի էր և հեղինաս. որոյ ցոյց լուսութեն՝ 'ի քերբե-
լերբինն նշանակեցաւ յերկս օրինակս. 'ի շարժումն
մեծ, 'ի հողմն ուժգին, 'ի հուրն կիզանողական. իսկ



քաղ

քոյդ հեզութեան երկայնմտութեան՝ ՚ի հանդարտութեան
մեղմութեան օգոյն քաղցրութեան. քանզի կամաց ողոր
մութեց՝ դու միայն ես, ըստ գրեցելումն. Մինչ զի
թէ և հաճոյք գտան մերասերքս՝ առաքինութեան
յեղանակեալ յայլ նմանութիւն վերնային, սակայն
երկրածինք են և նոքա, ընտրեալք ՚ի մարդկանէ.
Իսկ դու ո՛չ ունիս չարանալ՝ խոկութեան բարիդ.
յամենայն օրհնեալդ. ամենևին փրկութիդ. ամենայն հան
գիստդ. համայնից անդորրութիդ. համօրէն ախ
տացելոց՝ դեղ առողջութեան. աղբիւր ջրոյ կենդա
նւոյ, յաւիտեան երևելոյ. Պարծանս առիս և ողորմեա՛ ինձ.
որ այնքան ծարաւես պաքիս անկարօտդ ամենայն՝ ի
մում փրկութեան, մինչ զի զուարթնոցն երկնից ան
մահից օրհնաբանողաց՝ բան իմն ընծայեցեր մարդ
կօրէն փրկական քահանայաձիս և քաւչապետաբար՝
անեղծական յարակայութեան՝ մշտնջենաւոր պաղա
տանս օրհնեալդ քո գթութեան՝ ՚ի մերոց դիմաց կեն
ցաղականաց՝ վասն իմ լքելոյս հաշտութեան մաղթել,
ողորմեա՛ եղէմի. որ է լուսաւոր խորհուրդ յայց
ելանելոյ մեծիդ յայտնութեան, առ հրեշտակականն
Թափուր տեղի ստորանկելոց, ՚ի ձեռն մարդկան՝ քո
կցորդութեան՝ աւետարանեալ առակաւ ոյսր օրհ
նականս եղէմի.

10 Արդարև լուսոյ՝ բարեգութ. անսասցեր Թագա
ւոր. ունկնդրեսցեր կեանք և յոյս. ՚ի միտ ա
ռեր երկնաւոր. յորդեսցեր հզօր. նկատեսցեր ծած
կագէտ. տեսեր իմ՛նամսկալ. կարեկցեցեր ա՛նպա
տում. խոնարհեցար՝ մի՛շտ բարձրեալ. նուաստացար
ա՛հաւոր. յայտնեցար ա՛նճառ. ամփոփեցար ա՛նսահման.

 քա

քանակեցար անքննին. մածար ձմռադայթ. մարդա-
ցիր անմարմին. շօշափեցիր անքանակ. կերպաւորեցիր
անորակ՝ լցեր իսկոյն զաղաչողացն բաղձանս. Պսա-
ւակ եղեր թշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարթ-
նոցն՝ բարի բարեխօս. միջնորդ կենդանի. պատա-
րագ անմահ. սպանդ անվախճան. նուէր մաքրութե.
ողջակէզ անծախ. բաժակ անսպառ. Նա ողոր-
մած, մարդասէր, օրհնեալ, մի՛շտ կատարեսցես առ-
մեղուցելոյս զբարեբաստութի կամաց քոց կեն-
դանատուաց, գովեալ երկայնամիտ. և քեզ վայե-
լէ փառք յաւիտեանս. ամէն.

† Սերտին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հոգւոյն, առ նոյն ողբերգս մեղքանաց բանի. Ի խորոց սրտից խօսք ընդ այ.

*Բան. ԼԳ.

Ա Եւ արդ՝ տէր զօրութեանց, մեծութի ահեղ,
անտարակոյս տեսաւորութի, կամք ամէն-
ընդարձակ, առատութի անպակաս, ո՛չ ոք զօրեա-
ցէ տօնել հանդիսիւ պարերգութե՝ ի միոյ կաթ-
ուածոյ ցօղոյ քումդ բարութե, որ ցանկ դե-
գերիս պատրաստել պատճառս հնարից՝ իմում փրկ-
կութեան. Եւ զոր մեծն է գրեցից՝ պատմել յա-
պառնիսն. քանզի ո՛չ անուանեցար հրեշտակասէր,
և որ զպետութիս նոցունց հաստատեցեր, այլ և
զերկինս զամբարօք նոցին՝ զմատանց քոց գործ, ո՛չ
գրեցեր երբէք սիրել զնոսա. այլ առ եր՝ ի պատիւ
մեծաց գովեստից առաջին դասեալ զմարդասիրու-
թիւն. Մարդոյ կրկին մեծացուցեր քեզ անուն

անճառ ՚ի խորհուրդս սոսկալիս․ զերկնայինս լու-
սեղինացն կոչեցեր զնոսին սպասաւորս և գլխա-
ւորս յատուկ մատակարարութեց․ իսկ զստորնային
ծնունդս մարդկանացուաց՝ մերձակին և ԱԾակին պաշ-
տելի անուամբդ պերճացուցեր․ Ընծեալ վերասլին
ըստ սահման կշռութե չափոյ, լայնեցեր քեզ կատակս
գրոց՝ ճառից անբաւից՝ զանապակ ծործոնն ծայ-
րագունին վերնում բարութեն․ Նաև և ՚ի մարդա-
նալդ քո միդ յետութէն, ոմանց մն խուրեանց, և կե-
վշեմական վարուց նախընթաց և յառաջաշաւիղ սբ ածածին. Այ զի ոչ երևեալն 'ի քեն մի-ածին անդրանիկ բնութեն հօր սկիզբն ամե-նեռևման խաչուեալ մահակէր ծգանց , այսպ երանեալդ և բարեբանեալդ գերօրինակ յուց-ման տեսակի ածակրօն կարգաց ծագեցար. Քև զանմատոյց հուրն կիզանող անապական ծաքմամբ ծախեցաք. քև զարագեալն 'ի Թեւս օդայինս 'ի քառընթաց կենդանիս տեսաք. քև զանկցորդն տեսականաց 'ի մարդկային կերպ նկատեցաք. քև զդովեալ բարձօղն մեղաց եբր զդառն ճաշակ ընկալաք. քև դատելոյն 'ի չարա-գործաց ոչ այ ճշմարտի երկրպագեցաք. քև զանծանօթն հօր որդութեն ազգակցապէս օրհնա-բանեցաք. քև զմուրհակ պարտուց անիծիցն 'ի յաւազանին ջուր ընկղմեցաք. քև զանտեսն ա-չաց հրեշտակաց տղայական տիօք գգուեցաք. քև զանսահման բանին բնութիւն 'ի հասարակա-ծին տիպ համբուրեցաք. քև զադամն նոր հո-գեզէն 'ի չափ հասակի առաջնոյն տեսաք. քև զարեգակն արդարութեն կենցաղակից մեր կցորդ-տասացաք. քև զանժամանակ բանին էութի սկը-սեալ 'ի դաւթայ պատմեցաք. քև զանհամեմատն մարդոյ պատկերի մեղ նմանաւրիպ գործով գրե-ցաք. Արդ' այսքանեաց սրբազնական մասանցս ճառեցելոց դու միայնակ պատճառ, անարատ կու-սից՝ նպատակ կրօնից՝ տիրամայր սբ ածածին. Քանզի թէ չէր 'ի քեն ածեալ ուղէշն երկ-նային, ոչ էր պաղաբերեալ զանճաշակելին 'ի շըր-

Թանցս

թանցն մեր հաղորդումն · և թէ չէր երևեալ հօրն արդարութիւն 'ի յերկնից , չև էր սկսեալ ճշմարտութիւն 'ի յերկրէ · և թէ չէր յղացեալ յանփորձականդ քում արգանդի , ոչ էր մարմնացեալ · և թէ չէր յայտնել մերով բնութեամբ , ոչ էր շօշափեալ և ըմբռնեալ անհասն իմաստից · և թէ չէր կրեալ 'ի գիրկ բարձողաց հողեղէն բազկաց , ոչ էր ծանուցեալ · և թէ չէր համբուրեալ երկրաւոր շրթամբք , ոչ էր ճառեցեալ · և թէ չէր հետևեալ 'ի մարդկան ընթացս , ոչ էր քարոզեալ էակն 'ի յէից · և թէ չէր թափեալ իւղն անապական 'ի վեհագունեն , ոչ էր զմեզ օծեալ · և թէ չէր խառնեալ զմերս ընդ իւրումն , ոչ էր մկրտեալ · և թէ չէր խոստախուսեալ մարդն 'ի յերկնայնումն , ոչ ևս էր սրբեալ · և թէ չէր խոնարհեալ բարձրն 'ի յընտանի փառացն , ոչ էր վերացեալ 'ի ստորնայնոցս առեցեալն · Բայց մեր մնացաւ , որքան մարդացաւ · նոյն և յայտնեցաւ , ըստ որում ծանուցաւ · աւետարանեցաւ , ուստի փառաւորեցաւ · իսկ մաքրեցաւ , ոչ երգեցաւ · իսկ մկրտեցաւ , որ և վկայեցաւ · նոյն իսկ պատմեցաւ , ոչ ճառեցաւ · իսկ տնանկացաւ , որով ճոխացաւ · իսկ հնազանդեցաւ , որով պաշտեցաւ · իսկ երկրպագեցաւ , որով խոցեցաւ · իսկ կենդանացաւ , որով թաղեցաւ · իսկ պատուեցաւ , որով պատժեցաւ · իսկ ամաչեցոյց , որով պատկառեաց · իսկ բերկրեցոյց , որով տրտմեցաւ · իսկ զգեցոյց , որով մերկացաւ · իսկ ողջացոյց , որով բևեռեցաւ · իսկ



կանգ

կանգնեցաւ, որում վտանգեցաւ. և սլացաւ ո՜վ վերնային Թռեաւ որպէս հոգեղէն. ծածկեցաւ. ո՜վ զանքնին. փախեաւ ո՜վ զանհաս. 'ի յամպս երկնից եդ զգենացս. գովեցաւ ո՜վ միածին. բոսորաբուղխ կայլակօք ներկեաւ. ննջեց վիրացն խոցով հորցաքննե-ցաւ. 'ի վեհից անմահ հրեշտակացն հաւատացաւ. յաղթող մրցման և մարտի փառաւորեցաւ. դա-տաւոր արդարակշիռ յամ ազգաց վերապատմե-ցաւ. «Քանզի 'ի քէն հիմնադրեաց զկիրզն մար-դեղութե անեղն խոկութի. և յընտրեալ ան-պատուամ շնորհէ զայս ամ անփոփոխանորդելի պար-գեւական ձիրս ընկալաք. Նոյնքև ամ այս պատ-րաստութի բարեբաստութե բազմերանեան յու-սոյ հրձուանաց մեզ հանդերձեցաւ. Նոյն զամ փառս երանական լուսոյ նշուլից վերնոց և ներք-նոյ ծածուկ խորհրդոց բազմադովեստ պայ-ծառ յորինման նոր արարածոց անձառ շինուա-ծոյ սուրբ եկեղեցւոյ, 'ի քէն ծնիցելոյ կեր-պիս մերոյ և բարձրացելոյ անուանն յ՛ի ծըն-կովք կրկնելովք մատուցանեմք. Ուստի և քեզ բերկրեցելոյդ զամփորականն օրհնաբանու-

թիւն բանիս երկրորդեմք.

Օրհնեալ ես դու 'ի կանայս, գլուխ նոցին պանծանաց, և պայծառ պսակ. Պսակ կուսու-թեան մաքուր հարսնութե. պսակ ընտրութե անփորձ դովլութեան. պսակ անճղծութեան լուսոյ նմանութեան. պսակ շնորհանորոգ եին ծնելութեան. պսակ երանական բանին հօր մայրութե. պսակ աբ պանծանաց կենացն բարձ-



րու

րութեան · պսակ պայծառափառ վարուց եմաստութեան · պսակ տիրապատուաստ երկնահանճարն գիտութեան · պսակ պիտանական եկեղեցւոյ գեղեցկութե · պսակ պաշտելութե ուխտին նորոյ զարդարման · պսակ յոգնանկար յարփից եօթանց փայլատակման · պսակ առաջնորդական վերնոցն ազգակցութե · պսակ անբըծութեան շաւղացն արդարութեան·

Մարդ՝ ամենեցուն վերակարգելոց Թո՛ւոցս այսոցիկ բնակարան բաղձալի, և երանելի, և ընդունարան ընտրական կամաց անբաւին՝ զքեզ խոստովանիմք երկրաւոր ծնունդքս ստորատեղծականն ադամայ · որոց անհամար և անթիւ ազանց ամրական և պահպանական պարիսպ կառուցար· Քանզի յորժանահայց և յամենազօր քոյ բարեխօսութիւդ միշտ ապաւինեալ· մնամք 'ի հաստատութեան, խնամեալք և հանգուցեալք ընդ հովանեաւ պաշտպանութե ամուր պատուարի սուրբ ծածկինդ·

Պատուար պճնայօրէն 'ի զանազան մաքրազարդականց յարմարեալ· պատուար հրապարփակ անմատոյց ընդդիմողացն հէնից · պատուար բոցանշոյլ անհուպ և անհաս մատուցման դժնեայ դժրողաց · պատուար ամենահրաշ ըստ եզեկիէլի, որ ազխեալ զմուտ քո՝ ճշդրտապատումն գրեաց · պատուար շրջապարիսպ ըստ դաւթայ, որոյ հիմն անշարժութեան 'ի բարձրելոյն հաստատեցաւ · պատուար ամրակառոյց քաղաքին վերնոյ ըստ պօղոսի, որում զհանուրս

բնակիչս արարեր։ Քանզի զքո ծնար 'ի մարմ
նի, և զծնունդս մարմնաւոր սեռին որդիս ա
րարեր վերնումն հօգևորի։ Որոյ աղագաւ օրհ
նեցաւ արդարդ քոյ կուսութի 'ի շրթունս նո
ցին, և խոստովանեցար յամենեցունց մարմնարին
և տաճար հօր ևսկակցին։ Որով արդարապէս 'ի
քեզ ընծայեալ զբան պատմողին, եղեր մեր օգ
նական և տուն ապաւինի յուղխից հեղեղաց յա
ւուր անձկութե․ մաքրութի կուսից և սկզբ
նաշաւիղ դասուց երջանկաց․ մայր հիմնադրու
թեան հաստատութեան եկեղեցւոյ․ և ծնօղ ա
նարատ բանին այ։ Ո՛ քեզ յաւէտ օրհնութի
միշտ պսակեմք 'ի նուիրեալ տեղիս սրբութեան
քում տաճարի, և 'ի թևս պահպանութե լայնա
տարած քումդ մաղթանաց ապաւինելով, զձեռս
մեր 'ի սմա տարածեսցուք․ և աներկբայ յուսով
հաւատամք ապրել։ Արդ աղաչեմք ընկա՛լ զեր
գարեան օրհնութի մերում լեզուի․ և հաճել
տացես սմա զձիրս շնորհաց սեռին և բեթղե
հեմի։ Ուստի արժանասցուք ընդունել մասն
փրկութե յաւուր գալստեան մեծի յայտնութե
փառաց աներծի, փրկչին անմահի, քումդ մի
ածնի, միայն այ, տեառն յի։ Իսկ երբ զպատ
ճառ սկզբնաշաւիղ այսքանեաց բարեաց 'ի սոյն
կամարի գեղապաձնելոյ զքեզ պատուեսցուք՝ ան
ժամանակ էին բարձրացեալ ծնօղ։

Նորին վերաբերին 'ի վր գրոց տնօրէն խորոյ։

Գերազանց չափոյ կշռման երկրային բնութե
և քրովբէական նախադասութե եղեր վեհա-
կան, որբուհի պայծառ առագաստ ի վերնչին քո·
և նորուն բուկ տեսաւորիչ վս մեր· ծունր կրկնեա
ցի արժանապատիւ քում պատկերի· հայցեա
վս մեր առ ծնեալն 'ի քէն ած 'ի մարմնի·

Բոպէից յոգնաթիւ մասանց բերկրութի· աղ-
գաց և ազանց արմատդ օրհնութե·'ի ծագմանե
փառացն երկնայնոյ անստուեր նշոյլ տարփալի շո-
ղեալ 'ի ստորինս տեղի· անորէշ հոգմամբ մեր-
ձաւոր անմատոյց լուսոյ՝ անձառ խոստմամբ ա-
պաւնեացն յուսոյ՝ 'ի մահու պարտեացն զերծո
զառ քեզ ապաստան ծառայքս քում որդւոյ·
'Ի յերկրաւոր նիւթոյ մարմնաւոր փարուցն՝
երկնայնոցն կրօնից եղեր հպաւոր· մարխամ ա-
ռիթ տեսութե նոցին զանզնեին որդւոյն կերպա
րան· Աւստի տեսին զանկէտն սկսեալ, և երա-
նեցին զարմատդ և զպտուղս· յորմէ և մեք հայ
ցեմք զնորոգութի կենաց· և պաշտպան զտիրամօրդ
ձեռնտուութիւն·

Գովեստաւորեալ այսօր 'ի քեզ զխմանալին փարթամ
մեծութի· որ ելացել հասեր 'ի բարձունս երկնից·
իբր անընդունակ ապականութե և մահու լուծման՝
մարմնին· յորմէ պատկառեաց ամօթով պարտէքն մա-
հու· և ցուցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց
երկրին՝ ընդ կենակից որդ տիրամայր· արդ հատեա
միշտ զողորմութի որոց պանդխտիմք 'ի վիհս ներքին
Սենով հրձուծնաց անթիւ խրախուսեաց ած ային ան
կեան խոստմանց 'ի բաւրաստանս անդաստանաց

անկոյն • որոյ ստեղունք շառաւեղացն երկրայ-
ին հնարից գերազանց • անդր մուծցես զքո
դաւանողքս մբ տիրուհի մայրդ յսի •

Բատեմք 'ի քէն աղերսիւ բանի, որ ես քաղցրա-
լուր գրաւ աշխարհի • միայն երանել և բարեբանել,
հօրն հաճութբ հովանաւորել • որդւոյն ծնող •
հոգւոյն վերընդունող • երրորդութե փառացն
տարող • վերանկարեալ զառ յաւաչանէն անախտ
արգանդէ զկարդացելս անուն 'ի գիր մատենի
վերնում դպրոցիդ • Նաւ վերգագրութի սակա-
ւամանեայ այսր գովեստի արժան հաստատեալ
միշտ անկործան սրբոյդ առաջի • ընծայեալ
մարմնոյս զմխաշարս գիծ, և զգայական շնչոյս
զպատկեր բանիս • Զի իբր 'ի դոյից երկուց
զուգելոց 'ի մի խառնութի միոյ կենդանւոյ •
միշտ փառաւորեսցիս դու սովին օրհնութբ,
ով անեղծ պաշտոնէիցդ օրհնաբանութբ • Սւե-
րես 'ի ձեւն զօրեղ քոյին հայցուածոց լիցի մեզ
անդատապարտ համարձակութի յատենի մեծ և
ահաւոր մբ դատաւորին • Նաւ գտցուք արժա-
նի անբիծ վարուք, և ուղիղ դաւանութբ՝ հա-
ւատոցն հաստատութբ հանդիպել և անդանօր
ընծայիւք բանից քումդ երանութեան • փա-
ռաւորել ընդ քեզ և ընդ քոյսն յանդիման դի-
մաց պաշտելի և պսակելի քում ածափայլ և լու-
սանշոյլ մեծ պայծառութեդ զեռութի անքակ և
անքննելի մբ երրորդութեն 'ի միում տրութե և արար-
չութե • Որում վայելչակն պատիւ • և գովեստ ան-
դադար երգոց այժմ և միշտ յաւիտենս յաւիտենից • ամեն

## *Յիշատակարան Մատենիս Գրութեան.

Ըստ հոլովման ընթացից ամանակաց յառաջ շարժութեն , որ ըստ լրապատարն նշուլագեղն արփիածածանչ լուսակերպն օրակշռեան մղոտափարան ակնապարար՝ ակայնն արեւու՝ ստեղծականն արուսեկի , որ համբարէ հոլովէ կուտէ ամաց յոլովութեն 'ի չափս դարուց՝ շնչասպառ և կենդանանորոգ առուղեկան յաւիտենիս , 'ի յաւարտումն կատարման իններեակ յոբելենին՝ 'ի սկիզբն պսակելոյ մոի տասնեկին՝ Յաբեթական տոհմիս տումարի . յետ երից ամաց անցելոյ՝ որ զկնի գալստեան՝ 'ի կայս և 'ի կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արևելից՝ յաղթօղ և մեծ կայսերն հռոմոց Պաւլի , յորժամ ընդ արձակ և մակագունեթ կանոնաւ ըղփիռ տարածէր՝ ըխտասահման և անխարոց 'ի ստոր̂տորակարկատ կոթողս կարծր արձանաց՝ 'ի ձգումն ձեռին՝ և յանխղելի լորս պարանաց երկարագունից՝ անթալթափ 'ի նոյն վերասլացեալ 'ի յաջ և յահեակ՝ սեպհականել յաւելուլ բաժինս մասանց վիճակաց՝ խմբից աշխարհաց 'ի ծոց իւր .

Արդ՝ 'ի յայնմ անդորրութեն միջոցի , յորում եղերեալ ընդ ոտնեցաւ թշնամիք եկեղեցւոյ, ստացեալ հիմնեցի , կառուցի , կարգեցի , կուտեցի , արձանացուցի , դիզի , բարդեցի , կացուցի , ցուցի , հաստատելով 'ի հրաշակերտութն միադոյ իւրի՝ զբաղմաստեղնեան դրոշադս դրութեան դյամ ասփերի արդասաւորի , ես Գրիգոր

կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսաց, և կրտսեր վարժապետաց, գործակցութե՟ եղբօր իմոյ ընտրելոյ՝ Յովհաննէս կոչեցելոյ՝ Նարեկայ մեծափառ և բարձրապատուի ուխտի վանականի. որք իբրև զմի մարմին բանական՝ 'ի յերկուց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղավարելով· ոչ միայն հարազատք, այլ և միաշունչք միակրօնք համապատիւք զուգահաւանք, 'ի քառից աչաց՝ առ մի և նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք·

Արդ՝ հայցեմք 'ի ճաշակողացդ յայսմ սեղանոյ՝ յոքնօրէն և ախորժահամ հանդերձելոյ՝ յիշատակել զմեզ 'ի մաղթանս ուղիղս և 'ի պատկանաւոր խնդրուածս, սեռն սիրով 'ի միասբարիս· որով և դուք եղիջիք գրեալ 'ի մատեանս կենաց վերին դպրութեն.

*Յիշատակ վարուց հոգէկիր հաւրն մերոյ Գրիգորի.

Ամենափայլ նշողիւք ճառագայթից շնորհաց հոգւոյն Աստուծոյ՝ լուսապատար պայծառազարդեալ՝ հրշտկն ՚ի մարմնի սբն Գրիգոր՝ էր յԱնձեւացեաց գաւառէ Վասպուրական աշխ̃ին. որդի տն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսին. ՚ի ժամանակս կայսերութեն յունաց Վասլի եւ Կոստանդեայ. յաւուրս Սենեքարիմայ հայոց արքայի. եւ ՚ի Հայրապետութեն տն Վահանայ կաթողիկոսի. Որ անեալ ՚ի կարգ կրօնաւորութեն ՚ի Վանս Նարեկայ, որում եւ եղեւ առաջնորդ, ուստի եւ հռչակեցաւ Նարեկացի. Սոյն սա երկնահանճար վարդապետութբ գերափայլեալ՝ մեկնեաց զերգն երգոց Սողոմոնի. Գեղգեղեց զճառ Խաչին, եւ զներբողեանս ՚ի սբ Աջածինն, ՚ի համօրէն գունդս առաքելոց, եւ ՚ի սբն Յակոբ մծբնայ. եւ զքարոզս գանձից. Ապա բանապաճոյճ պերճաժամանութբ գրեաց զայն զգե բանս աղօթից ՚ի խնդրոյ հայցման հարց միանձանց, զոր թողել մեզ վերջին ժառանգուն անսպառ մթերից՝ փոխեցաւ յաստի կենաց՝ վախճանեալ յերր-տասնորդական հասակի, ՚ի թւկնիս հայոց՝ ՆԾԴ. եւ ամփոփեցաւ ՚ի նոյն վանս Նարեկայ. Իսկ յորժամ Սենեքարիմ արքայ փոխեաց զտէրութին ՚ի փոքրն Հայաստան, ապա եւ միանձանցն Նարեկայ դիմեալ մերձ ՚ի կողմանս քաղաքին Ակնայ եւ Տիւրիկեայ, շինեցին վանս յանուն Նարեկայ, ուր բերեալ հանդուցին զպատուական



մար

մարմինն, թէեւ այժմ է աւերակ, և կոչի ուխտ Առակայ, յորում լինին նշանք բժշկութեան ՚ի փառս Աստուծոյ։ Որոյ Աստուածախօս մաղթանաց օժանդակութք արժանասցուք զմայլական տե- սութեանն Աստուծոյ. որում պատիւ փառաց ծընրադրական երկրպագութք յաւիտեանս.
ամէն.

Յառաջնի եւ փոխ Հորդորողէի Մխիթարայ Գօշի խոստ- ովանողին ճգնաւորի. Յայս բան ՚ի բերան հաւատոյի. Աս- ցեալ շողոքս ՚ի սուրբ պատարագին
եւ տաղ.

ՏԷՐ Աստուած իմ Յիսուս Քրիստոս. բան՝ հօր և կերպարան. կենդանի և կենդանարար. լոյս և փրկութիւն ամենեցուն որ կարդան առ քեզ. Որ շնորհես առաւել քան զարժանն. և տաս խընդ- րողացն զպիտոյսն կարեաց. Զի ոչ միայն արա- րեր. և ստացար վերստին. յանցանելն մեր չար- չարանօք խաչի քոյ. Այլ և միշտ զքեզ ետուր փրկանս մարդկան թշնամեաց և ատողաց զպատ- ուիրանս քո. մանաւանդ քան թէ բարեկամաց և սիրողաց. Վասն որոյ՝ մեծ եղև մինչև յերկինս ողորմութի քո. և յամ երկրի ցուցու փառք քո. Նա այնքան գերազանցեաց պարգևաց քոց նշանակ. Զի ոչ միայն մարդկային հիանան ազգք. Այլ և երկնայինն զօրքն ևս առաւել մերձա- կայք.

կայք Ընդորս սոսկացեալ փառաւորեն անլռելի ձայնիւն ասելով. Սբ̃ Սբ̃ Սբ̃, Տր̃ զօրութ̃ենց. Օ որ եւ ուսեալ մեր՝ երգեմք 'ի ժամ անմահիդ զենման կցորդելով անմարմնոցն երջանկաց. Օ ի տու մեզ զանճառն տեսանելով խորհուրդ. Նու ընդ մեր եղեալ՝ զօրինակ մահուն ճշմարտի մարդկապէս ընդ մեզ եղանակեն զերգս օրհնու-
թեան.

Օ ի եթէ զօրինակն անգիտանան գովասանու-թեան. Միայն զս̃բն կարդան զանուն. ուստի զերեան ծածկեն եւ զոտս. Մեք զոր ասասցուք զօրհնութ̃ի կամ զգոհութ̃ի. Բայց միայն ընդ քեզ օրհնեսցուք սարսափմամբ. եւ հաւատովք մերձեսցուք յանտեսանելիդ. եւ 'ի տեսանելիդ
անճառութ̃ի.

Օրհնեմք զՀայր պատուքօղ փրկողիդ.
Օրհնեմք եւ զՀոգիդ սբ̃. զկատարիչ եւ զլրու-
բիչ. զգալոյն օրինակի.
Օրհնեմք զանիմանալի զքո խոնարհութ̃իդ.
Օրհնեմք եւ զմեծ քո քաղցրութ̃ե կամսդ.
Օրհնեմք որ կենաց զմարմին քո՝ ետուր դեղ.
Օրհնեմք որ զարիւն քո շնորհեցեր մեզ 'ի քաւ-
ութիւն.
Օրհնեմք որ հուր ա̃ծութեան քոյ՝ ոչ կէզ զու-
զբնութ̃իս հողեղէն.
Օրհնեմք զոր ոչ տանին երկինք ա̃մ. տանին
նիւթական եւ նուաստական եկեղեցիք.
Օրհնեմք որ նստիս 'ի քրովբէս. եւ բազմիս 'ի
սեղան սրբութ̃ե.

Օրհնեմք զոր ոչ ունին երկինք վերին · և թննեալ զսայք անմարմնոցն · բառնան տաւան մատունք քահանայիցն։

Օրհնեմք զոր և սերովբէն ունելեօք մատուցանէր 'ի բերան մարգարէին · իսկ աստ համարձակութբ ձեռօք բաշխիս հողեղինաց · և մատամբ մատչիս ճաշակողաց։

Օրհնեմք որ ոչ գարշիս յաղտեղութե մարմնական կրից · Այլ մաքրես սրբութբ քո։

Օրհնեմք որ զպէս պէս յանցանաց անտես առնես · զազգի մարդկան որք հաւատալ ապաւինին 'ի քեզ։

Օրհնեմք որ միջնորդութբ մարմնոյ և արեան քոյ · հաշտեցուցանես զհայր քո՝ ընդ օտարացեալքս մեղօք։

Օրհնեմք, որ յառաջագոյն զօրինակ Աե մարմնոյ և արեան քոյ ցուցեր զգալի օրինակօք յանձնիւր դարս և 'ի ժամանակս։

Աբելիւ և Նոյիւ · Մելքիսեդեկիւ · և Աբրահամաւ · Իսահակաւ · և ակոբաւ։

Եւ 'ի յելսն եգիպտոսի մովսիսիւ · և ահարոնիւ։

Յեսուաւ · և սամուէլիւ · Դաւթիւ · և սողոմոնիւ · և նախանձաւորին եղիայիւ։

Զայսուիկ համայն լցեր զօրինակ · բանդ՝ հօր Յս Քս 'ի վերնատունն · 'ի զգալեաց և 'ի նիւթականաց։ Յերկնաւորդ և 'ի հողեւորդ կոչելով խորհուրդ պատարագի զսուրբ զառաքեալսն։

Ասելով զայս արարէք առ 'ի յիշատակ իմ, նոր ուխտ։

ուխտ · և առաւել քան զմովսիսին· Տուրմ
վճիռ , ոչ ուտողացն և ոչ ըմպողացն , ո՛չ
ունել կեանս · և ուտողացն և ըմպողացն՝ ըզ
բնակելն ՚ի քեզ , և քեզ ՚ի նոսա·

Օ՜ որ և հաւատամ լինել քաւութի աշխարհի
արեամբ քո · ըստ յովհաննու թէ՝ արիւն որդ-
ւոյն այ սրբէ զմեզ ՚ի մեղաց·

Քանզի՝ տիրապէս մարմին և արիւն քո , կա-
տարեալ արձակումն , և ազատութիւն է ՚ի կա-
պանաց մեղաց·

Նա և ես զայս պատշաճ համարիմ · իմոյս մաղ
թանաց ժամանակ · ընդ բնաւիցն թողութիւն
ննջեցելոցն և կենդանեաց· Ո՛վ ամենաբարի
տուող շնորհաց Յս Քս· Այժմ եկեալ իբր
զղջատապարտեալ առաջի քո անկանիմ·

Օ՜ ի եթէ սրբ ամ առ հասարակ յիշին · և
քո՛յդ բարեաց կարօտին · միանգամայն և՚ի
բարեխօսութի· Օ՜ քանզ և ոչ ես անկեալ · ՚ի
շնորհաց·

Օ՜ ի եթէ այժմ ոչ ողորմիս , յորում բացեալ
ես զդուռն անձառ ձրից , երբ տայցես յայ-
լում ժամու· Եթէ թագաւորի ոք պատահի
սեղանոյ ՚ի ժամ ճաշոյ՝ և ունայն յայնմանէ ելա
նէ , երբ կերակրեսցի զրկեալն ՚ի հասարակաց
պարգևէն·

Օ՜ ի մի՛ անվրէպ և յայսմ ժամու է առնուլ ՚ի
քէն զխնդիրս· ապ և նոցայն ՚ի քաղցրուն ժամանակի
Օ՜ ի եթէ յորժամ ընդ հանուր երկինք և
երկիր առ հասարակ բարեխօսեն ոչ լսես,



այլ

այլ յորում ժամու զամենեսեան ժողովեցից·
Զի եթէ մինչ հիանան անմարմնոցն դասք, ի
առատութի պարգևաց քոց՝ և օրհնութի միայն
մատուցանեն, ո՞չ առնում յորժամ 'ի կշիռ դը
նես · զիա՞րդ ընկալայց·
Զի մի՛ եթէ յորժամ գոչեն ասելով · ողոր-
մեա՛ քո արարածոց · մասն ինձ ո՛չ տացի · ընդ
որո՞ց այլոց առից·
Յորժամ ըստ անսուտ հրամանի քում · ո՛չ քա-
ւիմ ընդ աշխարհի, արեամբ քով·
Յետոյ և ո՞ զիս քաւեսցէ· Զի ո՛չ են ինձ
կեալ իմովք գործովք · և ո՛չ աղօթք յայլում
ժամու հաճոյ է քեզ 'ի հեղգացելոյս· Այսմիկ
ակն կալայց ժամու · թէ պարգևաց արժանա-
նամ թողութե հանդիպելով·
Ես դարձեալ զարհուրիմ 'ի պղերգութէ իմ-
մէ · թէպէտ և քոյն պատրաստ է յամ ժամ·
Ես հաւատացի միայն առնուլ 'ի քէն անկեալս
'ի բարեաց գործոց· Առաւել յայս զմիտս հաս-
տատեցի զքաղցրութե գիտելով ժամ·
Աղաչեմ զքեզ Տր · մի՛ և այժմ ունայն դար-
ձուցաներ զիս անչափ պարգևացդ իշխան·
Յորժամ յորդեալ է իբրև զգետս 'ի լիութենէ
ծովու մեծիդ պարգևք· Ուստի և ինձ կա-
թիլ մի բաւական է·
Զի սակաւն քո՛ անչափ ունի մեծութի · և
առաւելեալ է քան զխորս ծովու·
Զի եթէ 'ի ծագել լուսոյ արեգականդ ո՛չ
լուսաւորիմ · 'ի գիշերի ո՞վ պայծառացայց·

Եւ յորժամ ձրի բժիշկդ մերձես՝ և զդեղդ կենաց ոչ տացցես. Այլ ուր գտից բժիշկ զի բժշկեցայց.

Եւ թէ յորութեանդ պատահեալ մեռանիմ, զիս ո՞ յարուսցէ. Եթէ բնութիւն ճոխացուցինդ, զաղքատութիւնս ոչ բարձցես, առ այլ ո՞վ երթայց ՚ի փարթամաց.

Եթէ ընդ արքայութիւն քով ոչ անկցիմ, և տակաւին ունի զիս իշխան աշխարհիս. Ե՞րբ զընդիմամարտն հերքեսցես. Բախեմ այժմ զի բացցի դուռդ՝ տո՛ւր համարձակութիւն զի առից.

Ընդ խաղաղութիւն աշխարհիս որ շնորհես, տո՛ւր և ինձ խաղաղութիւն յամբոխից կրից. Ընդ հաստատութեան եկեղեցւոյ, հաստատեա՛ և զշարժեալ անձնս. Ընդ քահանայապետաց՝ և քահանայից. սարկաւագաց՝ և դպրաց. և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ պահպանութիւն.

Ողորմութիւն քո և զիս ընդ հովանեաւ քով ամրացո՛. Ընդ թագաւորաց՝ և իշխանաց. զօրավարաց և զօրականաց. յաղթող և զիս ՚ի վերայ աներևոյթ թշնամւոյն արասցես.

Ընդ ննջեցելոցն հաւատացելոց, յիշեա՛ և զիս Տէր զմեռեալս մեղօք. Զորս ՚ի խորոցն հաներ անդնդոց, ընդ նոսին հան և զիս՝ ՚ի չարին բանտէ. միջնորդութիւն մարմնոյ քոյ և արեան. Առ հայր քո՝ և ինձ լիցիս բարեխօս. Հաւատովք և զիս արդարացուսցես նման աւազակին. Զի հաւատամ և ես՝ Տէր արքայութեան քում

յիշեա՛ և զիս։ Տէ՛ր արա՛ զկամս հօր քո. զի նո՛ր
են ախորժակ՝ զի մի՛ ոք կորիցէ.
Ընդ այնոսիկ մանկանցն կացուսցես և զիս,
զորս և հօր քում առաջի կացուսցես. Մեծ է
ողորմութի . և զնա կամիս առաւել քան զող
ջակէզս արա՛ և դու.
Գիտեմ զի անչափ է քոյն. բայց յիմոցն զան
գիտեմ չարեաց. եթէ հանէ զիս 'ի նմանէ.
Արժանաւորեա՛ և այժմ գոհանալ ինձ զողոր-
մութենէ քո.
Գոհանամ զքէն Տէր որ արժանի արարեր զիս
տեսլեան ս̃բ խորհրդոյ քոյ.
Գոհանամ՝ զի զսոսկալին և զահաւորն լուսոյ
օրհնութեան.
Գոհանամ՝ զի զաստուածախօսութիւն քո լուայ.
Գոհանամ՝ զի ոչ եղէ քարկոծ 'ի բանէդ, հա-
լածեալ իբր զգազան.
Գոհանամ՝ որ զհոգիս յուսով լցեր, և զսիրտս
ուրախութեամբ.
Ո՛վ օրհնութի կամ զգոհութի քեզ մատու-
ցանեմ. զի եթէ արժանի եղէց կենաց հացին,
և անմահական բաժակին.
Ո՛վ իսկ եթէ որք տեսինն՝ երանեցան 'ի քէն 'ի
Ճշմարիտ գիտողէդ. Ո՛վ որ երանութի ոչ ու-
նիցին որք հաղորդին ևս.
Ո՛վ իցէ՝ որ զբանդ ած անձառաբար ծնա-
երանեաց զանձն Որդ՝ և երն տիրապէս երանելի
Որքան երանութեց արդ՝ չիցեն արժանի. որք
միշտ զմարմին և զարիւն քո ճաշակեն. Նա այս
պար

պարգեւք առ՚ի քէն՚ի վեր է քան զմտոս եւ զբան·
ոչ միայն յերկրաւորաց, այլ եւ երկնաւորաց · յոր-
մէ դողամ եւ սարսափիմ, մի՛ գուցէ ըստ մեծու-
թեան իրին պահանջեսցես · եւ զպատշաճն ար-
ժանաւորութե՛·

Եւ այսոքիկ յայտնի ցոյցք անհնարութե՛ ինձ·
Եթէ սրբոցն ահարկու եւ պարգեւօք, զի՞նչ
եւ պղծոյս· Եթէ հրեշտակքն զերեսս ծածկեն,
ես որ լրբենի երեսաց դիմօք հայեցայց·
Եթէ երկինք աթոռ քո են եւ երկիրս պատ-
ուանդան ոտից քոց·

Եւ որպէս բնակիլ յիս վստահացայց· Եթէ
զա՛մ դու լնուս՝ ես զիա՞րդ յիս ընդունել անկ-
կալայց· Եթէ յերկիր հայիս՝ եւ տաս դողա-
ման, մերձիս՚ի լերինս եւ ծխեսցին, իմ որ զօ-
րութիւն կեցցէ առաջի քո· Չարէ ինձ մեր-
ձենալն չարեօք՝ եւ տարակուսանք հեռանալն · մա-
նաւանդ զի անսուտ սահմանեցեր եթէ որ ոչ
ուտէ զմարմին իմ, կեանս ոչ ունիցի յանձին
իւրում·

Ա՛հա յայտնապէս խոստովանիմ · զի ես մեռեալ
եմ, եւ քեզ է յարուցանելն·

Չէ ինձ եւ ոչ բնաւ յայսոսիկ խորհել, զար-
ժանն իմ· Դու տես ծածկագէտ, տուր եւ
յաջողեա՛ արժանապէս · յետ այսորիկ առ հայր
քո աղերսել· Թէպէտ եւ ոչ ոք վայելէ եմ արժա-
նի · այլ որքան նո՛ պատահեցայց մարդասիրութե՛·
Եւ փառաւոր արարից զքեզ ընդ հօր
քում ամենազօրի · եւ ընդ

ամե

ամենա̄սբ Հոգւոյդ ճշմարտի․ այժմ և միշտ և յաւիտեանս․ ամէն։

Ամենակալ ամենախնամ․ Ա̄ծ յա̄մի օրհնեալ․ Որ յա̄մի ես և ամենեցուն անհաս․ և բովանդակեալ պահես զամենեսեան անվթանգ, ըզկենդանիս և զանկենդանս․ զբանաւորս՝ և զանբանս բոլորին՝ և մասամբ․ էութբ զօրութբ և ներգործութբ․ Նա կրեալ կերպարանս ըստ բնութեան անպակաս լրմամբ․

Ով հողեղէնս, և զհրեղէնս․ Ով յանիւթս՝ և նիւթեղէնս․ Ով ի մահկանացուաց կեանք ես․ և անմահութե յարամնայութի․ Նա էիցս էութեան ես հա́ց․ և գոյիցս գոյեղէնութեան․ Կենդանեացս՝ կենաց կերակուր․ և մտաւորաց՝ գիտութե և իմաստութե․ Բա́ց զդուռն ողորմութեան քոյ գթած․ Նա ծագեա́ լոյս խաւարելոյս, ապրեցուցանող արդարութբ՝ ըստ վերնոյն ա̄ծատեսակ ունակութե՝ զանգէտ հոգիս պարարեա́․ Ով ծանրացեալս բեռամբք մեղաց թեթևացո́․

Ով սևացեալս աղտեղեալ կրիւք՝ սպիտակացո́․ Ով սառուցեալ ցրտացեալս, յա̄ծային սիրոյդ՝ ջերմացո́․ Ով վթացեալ խաւարեալս՝ անսասանական ոտնեցմամբ՝ զգաստացո և լուսաւորեա́ զմբըռնեալս ՚ի ծուղակ որսողին․ փրկեա́ և ազատեա́ Ով մանրեալս ՚ի ժանեաց կերչին, կորզեա́ և կենագործեա́․ Դարձո́ զդերեալ խորհուրդս՝ հոգւոյ ՚ի գերողէն․ Ով մեռնեալ կամս, զերծո́



՚ի

Ի խորհրդախորհէն. Ո՜վ յօժարութիւն՝ քաղցրութե՟
ի քեզ միացո՛, զբանական մասն հոգւոյս՝ խոհե-
մացո՛. Ո՜վ սրտմտական արիացո՛. Ո՜վ ցանկականս
ողջախոհացո՛. և առ քեզ դարձո՛. Արդարութե՟
զերիս մասունս ամրացո՛ զինաւարեալ միտս լու-
սաւորեա՛. Ո՜վ ներտրամադրեալ բնութի բա-
նիս՝ հոգւով քո խառնեա՛.

Ո՜վ արտաբերեալս յօգուտ լսողաց՝ շնորհօք քո
ներկեա՛. Ո՜վ դայարանք կարկառման մտացս առ
քեզ հայեցո՛. Ո՜վ դայութիւք պատուհանացս աղ-
մամբ քո լցո՛. Տեսանելեացս՝ ցո՛յց զողորմութե՟
քո. Լսելեացս՝ լսելի արա՛ զձայն քո. Ճաշա-
կելեացս՝ քաղցրասցին բանք քո. Հոտոտելեացս՝
բուրեսցի հոտ կենաց քոց.

Շօշափելեացս ընդ Թովմայի՝ ջահեսցի՛ հրա-
մանք քո. Տեսողականս առ քեզ հայեսցի. Իմա-
ցականս՝ միշտ զանհաս իմասցի. Յիշողական
խելացս՝ գանձարան միշտ ազդմանց քոց լիցի
Արկլինս մարդ՝ եօթն, որպիսեան շնորհօք քո լցի
Նուճաղի քնարս ըստ դաւթայ լցեալ հոգւով՝
միշտ զքեզ օրհնեսցէ. Ունկնդիր Տէր տուող
բանիս. Ո՜վ աջ քո մերձեցո՛ յախտացեալ հոգիս
Տէ՛ր որ ոչ նենգես զաղէտ վտանգիս. Բանիւ մի-
այն բժշկեա՛ զհոգիս. և անուշահոտ լինիմ ա-
տեղիս. Աղբիւր արտասուաց՝ տո՛ւր աչացս աղ-
բիւր բարութե՟ Նուաղիղ հայեցուած յարա-
բաձս առանց նենգութե՟, Ընծա լուսով քո
լցո՛ զհոգիս առանց նենգութե՟. և միշտ առ
քեզ հայեցո՛ առանց թուլութե՟. Ո՜վ սատուեր


իմա

իմացութիւ՛ մաքրեա՛ իմացուածքդ։ Իրաւադատ
լինել հայեցողութ՟բ։ Ընդ տեսողութեա՛ լցեա՛
զնթացք գիտութեա։
Եւ տուր միշտ յաւանդ յիշող զօրութեանս,
զգաստացո՛ զմիտս ՚ի թմրութենէ․ զունայնու-
թիւնս ՚ի միշտ խոկմանէ․ զխորհուրդս յս-
տակ ՚ի հայեցմանէ․ յօժար զկամս ՚ի պնդութե
զհոգիս անբիծ յարդարութե․ միշտ զքեզ խոր-
հել եւ խօսել։ Զքեզ պաղատել եւ աղաչել․ եւ
քեզ երկիրպագանել։ Ախմամբ կրծից։
Տարածմամբ ձեռաց։ Տատանմամբ մատանց։
Ականմամբ ձայնից։ Արտասուօք աչաց։ Յայտ-
նութ՟բ գաղտնեաց։ խոստովանութ՟բ մեղանաց։
Եւ ՚ի քէն ընդունել թողութիւն սղալանաց։
եւ քաւութի յանցանաց։ Եւ հանգիստ փառաց։
եւ զուարճանալ տեսութ՟բ աչաց։ ՚Ի փառս եր-
րեակ անձնաւորութեդ յաւիտենից յա-
ւիտեանս․ Ամէն։



Եւ

Որ զօրէն Աւետարանչացն՝ շնորհս բժշկութեան առէ- տարանին , և շնորհօքն չորրորդարանեայ Ձն վոխ՝ Աւետարանն , երկու տար ՚ի վերջոյ . առնս բժշկութեան հիւանդաց.

## Սէջ Աւետարանիս ՅԻ ՔԻ Որ Ըստ Մատթէոսի. Տէրն մեր Յս՟ Քս՟

Եւ շրջէր Յս՟ ընդ ամ՟ կողմն Գալիլեացւոց. ուսուցանէր ՚ի ժողովուրդս նց՟ և քարոզէր զաւետարանն արքայութե՟, և բժշկէր զամ՟ հիւան դութիւ՝ և զամ՟ ախտս ՚ի ժողովրդեանն. Եւ ել լուր նր՟ ընդ ամ՟ երկիրն Ասորւոց. և մատուցին առ նա զամ՟ հիւանդս , որ նեղեալ էին ՚ի պէս պէս ցաւս և ՚ի տանջանս , և զդիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս , և բժշկեաց զնս՟. Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ՚ի Գալիլեէ և ՚ի Դեկապօլեայ և յԵրուսաղեմէ և ՚ի Հրէաստանէ և յայնկոյս Յորդանանու . և բժշկեաց զնոսա.

Եւ իբրև էջ ՚ի լեռնէ անտի , գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք. Եւ ահա մա տուցեալ բորոտ մի՝ երկիր պագանէր և ասէր Տէր՝ եթէ կամիս , կարօ՛ղ ես զիս սրբել. Ձգեաց զձեռն իւր և հասոյց



՚ի

՚ի նա յս՝ և ասէ՝ կամիմ սրբեա՛ց. և վաղվաղակի սրբեցաւ ՚ի նմանէ բորոտութիւնն. Եւ ասէ ցնա յս, զգո՛յշ լեր՝ մի՛ ումեք ասիցես. այլ երթ ցո՛յց զանձն քո քահանային, և մատո՛ զպատարագն՝ զոր հրամայեաց Մովսէս ՚ի վկայութիւն նոցա.

Եւ իբրև անց յայնկոյս յերկիրն գերգեսացւոց՝ պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ՚ի գերեզմանացն չարաչարք յոյժ, որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ. Եւ ահա աղաղակեցին և ասեն. զի՞ կայ մեր և քո յս որդի այ, եկիր տարաժամ տանջել զմեզ. Եւ էր հեռագոյն ՚ի նոցանէ երամակ մի խոզից արօտական. Եւ դևքն աղաչէին զնա և ասէին՝ եթէ հանես զմեզ աստի, հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն. Եւ ասէ ցնոսա՝ երթա՛յք. և նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. և դիմեաց ամ երամակն ՚ի դարէ անտի ՚ի ծով. և մեռան ՚ի ջուրսն. Եւ խոզարածքն փախեան. և երթեալ ՚ի քաղաքն պատմեցին զամ, և զդիւահարացն. Եւ ահա ամ քաղաքն ել ընդ առաջ յի. իբրև տեսին զնա՝ աղաչէին զի գնասցէ ՚ի սահմանաց նց.

Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիրպագանէր նմա և ասէր, դուստր իմ արդ ևս վախճանեցաւ, այլ եկեալ դիցես զձեռն քո ՚ի վր նորա, և կեցցէ. Յարեաւ յս՝ և գնաց զհետ նորա աշակերտօքն հանդերձ. Եւ ահա կին մի տեռատես երկոտա-

սանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի դը-
րօշակ հանդերձի նորա. Քանզի ասէր 'ի միտս
իւրում, թէ միայն մերձենամ 'ի հանդերձս նր̅
փրկիմ. Իսկ յս̅ իբրև դարձաւ և ետես զնա՝
ասէ քաջալերեա՛ց դուստր՝ հաւատք քո կեցու-
ցին զքեզ. և փրկեցաւ կինն 'ի ժամէն յայն-
մանէ. Իբրև եկն յս̅ 'ի տուն իշխանին, և ետես
զփողահարսն և ամբոխս յոյժ, ասէ ցնոսա 'ի բա՛ց
գնացէք. զի ո՛չ եթէ մեռեալ է աղջիկն՝ այլ
ննջէ. Եւ ծաղր առնէին զնա. Եւ իբրև ել
ամբոխն 'ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նր̅ և
յարեաւ աղջիկն. Եւ ել համբաւս այս ընդ ամ̅
երկիրն ընդ այն.

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն յս̅՝ զհետ ե-
ղեն նորա կոյրք երկու. աղաղակէին և ա-
սէին, ողորմեա՛ց մեզ որդի դաւթի. Եւ իբրև
եկն 'ի տուն, մատեան առ նա կոյրքն. և ասէ
ցնս̅ յս̅. հաւատայք եթէ կարօղ եմ առնել
ձեզ զայդ. ասեն ցնա՝ այո՛ տէր. Յայնժամ
մերձեցաւ յաչս նոցա և ասէ, ըստ հաւատոց ձե-
րոց եղիցի ձեզ. Եւ բացան աչք նոցա. և սաս-
տեաց նոցա յս̅ և ասէ՝ զգո՛յշ կացէք՝ մի՛ ոք գի-
տասցէ. Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ը̅
ամ̅ երկիրն ընդ այն. Եւ յելանելն նոցա ա-
ռաջի, ահա՛ մատուցին առ նա այր մի՝ համր դի-
ւահար. Եւ յելանելն դիւին՝ խօսեցաւ համրն.
և զարմացան ժողովուրդքն և ասէին, թէ և ո՛չ
երբէք երևեցաւ այսպիսի ինչ յիսրայէլի. Իսկ
փարիսեցիքն ասէին՝ թէ իշխանաւն դիւաց

հանէ դա զդեւս.

Եւ շրջէր յս՟ ընդ ամ՟ քաղաքս եւ ընդ գիւղս՝ ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա. եւ քարոզէր զաւետարանն արքայութե՟, եւ բժշկէր զամ՟ ախտս եւ զամ՟ հիւանդութիս ՚ի ժողովրդեանն

ՍԷՋ Աւետարանն ՅԷ՟ ՔԷ՟ Ըստ Մարկոսի.
Տօնմը մերով ՅԻ՟ ՔԻ՟.

Եւ մտանէն ՚ի կափառնաում, եւ իսկ եւ իսկ ՚ի շաբաթուն մտեալ ՚ի ժողովուրդն ուսուցանէր զնոսա. Եւ զարմանային ընդ վարդապետութի՟ նր՟, զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխանութե՟, եւ ոչ որպ՟ դպիրքն. Եւ էր ՚ի ժողովրդեանն նց՟ այր մի՝ յորում այս պիղծ դ՟ր ՚ի նմա. որ աղաղակեաց եւ ասէ. Թո՛յլ տուր, զի՞ կայ մեր եւ քո՝ յս՟ նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ ո՛վ ես սրբդ այ՟. Սաստեաց ՚ի նա յս՟ եւ ասէ, կարկեա՛ց եւ ել ՚ի դմանէ. Եւ զարկոյց զնա այսըն պիղծ եւ աղաղակեաց ՚ի ձայն մեծ, եւ ել ՚ի նմանէ. Եւ զարմացան ամենեքին, մինչեւ հծծել ընդ միմեանս եւ ասել. զի՞նչ է այս նոր վարդապետութիս. զի իշխանութե՟ եւ այսոց պղծոց սաստէ եւ հնազանդին նմա. Եւ ել լուր նորա ընդ ամ՟ կողմն գալիլեացւոց.

Եւ մտեալ դարձեալ ՚ի կափառնաում յետ աւուրց. Լուր եղեւ եթէ ՚ի տանի է. եւ ժողովեցան բազումք՝ մինչեւ տեղի եւս ոչ լինել՝ եւ ոչ

առ

առ դրանն, և խօսէր նոցա զբանն. Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ ՚ի չորից. Եւ իբրև ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին զյարկն ուր էր յս՟. և բացեալ զառաստաղն՝ իջուցին զմահիճսն յորում կայր անդամալոյծն. Եւ տեսեալ զհաւատս նոցա ասէ ցանդամալոյծն, որդեակ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո. Եւ էին ոմանք ՚ի դպրաց անտի, որ անդ նստէին՝ և խորհէին ՚ի սիրտս իւրեանց. Զի՞նչ է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւն. ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ եթէ ոչ՝ մի ած՟. Եւ գիտաց յս՟ յոգի իւր՝ թէ այնպ՟ խորհէին ՚ի սիրտս իւրեանց, և ասէ՝ զի՛ խորհիք զայդ ՚ի սիրտս ձեր. Զի՞նչ դիւրին է, ասել ցանդամալոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի՛ առ զմահիճս քո՝ և երթ ՚ի տուն քո. Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ ՚ի վերայ երկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն՝ քեզ ասեմ արի՛ առ զմահիճս քո՝ և երթ ՚ի տուն քո. Եւ յարեաւ վաղվաղակի առեալ զմահիճսն՝ ել առաջի ամենեցուն. Մինչև զարմանալ ամենեցուն և փառաւոր առնել զած՟ և ասել՝ թէ այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք.

Եւ եմուտ միւսանգամ ՚ի ժողովուրդն, և էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր. Եւ սպասէին նմա եթէ բժշկիցէ զնա ՚ի շաբաթու՝ զի չարախօսեսցեն զնմանէ.

Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր, արի՛ անց ՚ի մէջ. Եւ ասէ ցնոսա, զի՞նչ արժան է ՚ի շաբաթու՝ բարի՛ ինչ գործել՝ եթէ չար առնել. ոգի՛ մի ապրեցուցանե՞լ՝ թէ կորուսանել. և նոքա լռեցին. Եւ հայեցեալ յի՛ զնոքօք լի՛ ցասմամբ՝ տրտմեալ վասն կուրութեանց սրտից նոցա, ասէ ցայրն՝ ձգեա՛ զձեռն քո. և նա ձըգեաց, և ողջացաւ ձեռն նորա.

Եւ իբրև անց յ̅ս միւսանգամ յայն կողմն, ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծովեզերբն. Եւ ահա՛ մի ՚ի ժողովրդապետացն գայր, որում անուն էր յայրոս. և իբրև ետես զնա՝ անկաւ առ ոտս նորա. Աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ դուստր ն̅մ մեռանի ՚ի մահ. զի եկեալ դնիցես նմա ձեռն. ո̅պ զի ապրեսցի, և կեցցէ. Եւ գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում զհետ նորա, և նեղէին զնա. Եւ կին մի էր ՚ի տեւատեսութե̅ն արեան զերկոտասան ամ և յոյժ վշտացեալ ՚ի բազում բժշկաց. և ծախեալ զինչս իւր զա̅մ՝ և չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ. Իբրև լուաւ զյ̅է՝ եկն ՚ի մէջ ամբոխին յետոյ՝ և բուռն եհար զհանդերձէ նորա. Քանզի խորհէր ՚ի մտի, միայն մերձեցայց ՚ի հանդերձս ն̅ր, փրկեցայց. Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան ն̅ր, և գիտաց ՚ի մարմին իւր թէ բժշկեցաւ ՚ի տանջանացն. Եւ անդէն վաղվաղակի գիտաց յ̅ս յանձն իւր զզօրութի̅ն որ ել ՚ի նմանէ. դարձաւ յամբոխն և ասէ, ո՞վ մերձեցաւ ՚ի հան

դերձս իմ։ Եւ ասեն ցնա աշակերտքն․ տեսա-
նես, զի ամբոխդ նեղէ զքեզ, և ասես թէ ո՞վ
մերձեցաւ ՚ի հանդերձս իմ։ Եւ շուրջ հայէր
տեսանել՝ թէ ո՛վ զայն արար։ Եւ կինն զար-
հուրեալ և դողացեալ վ̃յ գաղտն արար, քանզի
գիտէր զի՛նչ եղև նմա․ եկն անկաւ առաջի նր̃,
և ասաց զա̃մ իրսն ստուգութբ̃։ Եւ յս̃ ասէ
ցնա՝ դուստր հաւատք քո կեցուցին զքեզ, երթ
՚ի խաղաղութի̃, և եղիջիր ողջ ՚ի տանջանաց քոց։
Մինչդեռ նա զայն խօսէր՝ գան ոմանք ՚ի տա-
նէ ժողովրդապետին և ասեն, թէ դուստրն
քո մեռաւ՝ զի՛ ևս աշխատ առնես զվարդա-
պետդ։ Իսկ յս̃ իբրև լուաւ զբանն ասացեալ,
ասէ ցժողովրդապետն, մի՛ երկնչիր՝ բայց միայն
հաւատա։ Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ․
բայց միայն զպետրոս՝ և զյակոբոս՝ և զյովհան-
նէս եղբայրն յակոբայ։ Գնայ ՚ի տուն ժողո-
վրդապետին՝ և տեսանէ ամբոխ յոյժ և լալա-
կանս և աղաղակ յոյժ։ Եւ մտեալ ՚ի ներքս ա-
սէ ցնոսա՝ զի՛ խռովեալ էք և լայք․ մանուկն
ոչ է մեռեալ՝ այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին
զնա․ և նորա հանեալ արտաքս զամենեսեան՝ առ-
նու ընդ իւր զհայր մանկանն և զմայր, և զնոսա
որ ը̃ նմայն էին, և մտանէ ուր դնէր մանուկն։
Եւ կալեալ զձեռանէ մանկանն ասէ ցնա՝ տա-
լիթա կումի․ որ թարգմանի՝ աղջիկ դու, քեզ
ասեմ արի։ Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն
և գնայր․ քանզի էր ամաց՝ իբրև երկոտասա-
նից․ և զարմացան մեծաւ զարմանալեօք։ Եւ



պատ

պատուէր տայր նոցա յոյժ՝ զի մի՛ ոք գիտա-
ցէ զայն, և ասաց տալ նմա ուտել։

---

## Սբ. Աւետարանն Յի Քի Որ Ըստ Ղուկասու.
## Տրն մեր Յս Քս.

Եւ էջ ՚ի կափառնայում ՚ի քաղաքն գալիլեաց-ւոց՝ և ուսուցանէր զնոսա ՚ի շաբաթս. Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա՝ զի իշխանութբ էր բան նորա. Եւ էր ՚ի ժողովրդեանն այր մի՝ զոր ունէր այս դիւի պղծոյ. և աղաղակեաց ՚ի ձայն մեծ և ասէ՝ թուլացո՛, զի՞ կայ մեր և քո Յս Նազովրեցի. եկիր կորուսանել զմեզ՝ գիտեմք զքեզ՝ ո՛վ ես սուրբդ Այ. Սաստեաց ՚ի նա Յս և ասէ՝ պապանձեա՛ց և ե՛լ ՚ի դմանէ. զդետնեաց զնա դևն ՚ի մէջ անդ, և ել ՚ի նմանէ. և ինչ ո՛չ վնասեաց նմա. Եւ եղեն զարմանալիք ՚ի վե՛ր ամենեցուն. խօ-սէին ընդ միմեանս և ասէին, զի՞նչ է բանս այս՝ զի իշխանութբ և զօրութբ սաստէ այսոց պղծոց և ելանեն. Եւ ելանէր հռչակ զնմանէ ընդ ամ տեղիս շուրջ զգաւառաւն. Եւ յա-րուցեալ ՚ի ժողովրդենէ անտի՝ եմուտ ՚ի տուն սիմօնի. և զոքանչ սիմոնի տագնապէր ջերմամբ մեծաւ. և աղաչեցին զնա վասն նորա. Եկաց առ նմա, սաստեաց ջերմանն, և եթող զնա. և վաղվաղակի յարեաւ և պաշտէր զնոսա. Եւ ընդ արևուն մտանել՝ որոց էին հիւանդք ՚ի պէս պէս ցաւս՝ բերէին զնս առ նա. Եւ նա իւրա-



քանչ

քանչիւր ումեք ՚ի նոցանէ դնէր ձեռս եւ բը-
ժշկէր զնոսա։ Ելանէին դեւքն ՚ի բազմաց՝ ա-
ղաղակէին եւ ասէին, եթէ դու ես որդի ա̃յ։
Եւ նա սաստէր՝ եւ ոչ տայր նոցա թոյլ խօսել.
զի գիտէին զնա թէ ք̃ն է։

Իսկ եղեւ ՚ի հասանելն նորա ՚ի մի քաղաքացն,
ահա այր մի լի բորոտութ̃բ իբրեւ ետես զյ̃ս,
անկեալ ՚ի վերայ երեսաց աղաչեաց զնա եւ ա-
սէ. տէր եթէ կամիս, կարող ես զիս սրբել։
Ձգեաց զձեռն իւր՝ հասոյց ՚ի նա եւ ասէ, կա-
միմ սրբեա՛ց. եւ վաղվաղակի գնաց ՚ի նմանէ
բորոտութիւնն։ Եւ նա պատուիրեաց նմա մի՛
ումեք ասել. այլ թէ՝ երթ ցո՛յց զանձն քո
քահանային, եւ մատո՛ պատարագ վասն սրբու-
թեան քո. որպէս եւ հրամայեաց մովսէս ՚ի
վկայութիւն նոցա։ Եւ յորդէր առաւել բանն
զնմանէ. եւ ժողովէին ժողովուրդք բազումք
լսել եւ բժշկել ՚ի հիւանդութեանց իւրեանց։
Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս, եւ կայր
յաղօթս։

Եւ եղեւ ՚ի միում՚աւուրց եւ ինքն ուսուցա-
նէր, եւ փարիսեցիքն եւ օրինացն վարդապետք
նստէին. որ ժողովեալ էին յամենայն քաղա-
քաց գալիլեացւոց եւ հրէաստանի եւ երուսա-
ղէմի. եւ զօրութիւն տեառն էր ՚ի բժշկել ըզ-
նոսա։ Եւ ահա արք բերէին մահճօք զայր
մի՝ որ էր անդամալոյծ, եւ խնդրէին զնա
մուծանել ՚ի ներքս եւ դնել առաջի նորա։
Եւ իբրեւ ոչ գտանէին թէ ընդ



որ

որ մուծանիցեն զնա 'ի ներքս վս̃ ամբոխին, ե-
լին 'ի տանիս, և 'ի ցռուոցն կախեցին զնա, և ի-
ջուցին մահճօքն հանդերձ 'ի մէջ առաջի յի̃·
Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա, ա՛յր
դու՝ թողեալ լիցին քեզ մեղք քո։ Սկսան խոր-
հել դպիրքն և փարիսեցիքն և ասեն · ո՞վ է սա
որ խօսի զհայհոյութիւս · ո՞վ կարէ թողուլ
զմեղս՝ բայց միայն ա̃ծ. Իբրև գիտաց յի̃
զխորհուրդս նոցա, պատասխանի ետ և ասէ
ցնոսա, զի՞ խորհիք 'ի սիրտս ձեր. Ո՞ր ինչ
դիւրագոյն է ասել թողեալ լիցին քեզ մեղք
քո, եթէ ասել արի՛ և գնա՛. Բայց զի գի-
տասջիք եթէ իշխանութի̃ ունի որդի մարդոյ
յերկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն,
քեզ ասեմ՝ արի՛ առ զմահիճս քո և երթ 'ի
տուն քո. Եւ առ ժամայն յարուցեալ առաջի
ամենեցուն՝ էառ զիւրև յորոյ վր̃ անկեալ դը-
նէր, գնաց 'ի տուն իւր՝ և փառաւոր առնէր
զա̃ծ. Զարմանք կալաւ զա̃մն, և փառաւոր
առնէին զա̃ծ · լի եղեն ահիւ և ասեն, եթէ
տեսաք այսօր նոր նշան.

Եւ իբրև կատարեաց զա̃մ բանս իւր, 'ի լսե-
լիս ժողովրդեանն, եմուտ 'ի կափառնա-
ում. Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար
հիւանդացեալ՝ մերձ էր 'ի վախճանել՝ որ էր
նմա պատուական · իբրև լուաւ զյ̃սէ, առա-
քեաց զծերսն 'ի հրէից, աղաչէր զնա զի ե-
կեսցէ ապրեցուսցէ զծառայն նորա. Եւ նոքա
եկեալ առ յի̃ աղաչէին զնա ստէպ՝ և ասէին,

թէ արժանի՛ է՝ որում զշնորհս զայս առնես.
զի սիրէ զազգս մեր. և զժողովրդանոցն նա
շինեաց մեզ. Եւ յ͞ս գնաց ընդ նոսա. իբրև
ոչ ինչ կարի հեռի էր 'ի տանէն, յղեաց առ
նա հարիւրապետն բարեկամս, և ասէ ցնա, տ͞ր՝
մի՛ ինչ աշխատ լինիր. զի չեմ բաւական եթէ
ընդ յարկաւ իմով մտանիցես. Վ͞ն որոյ և ո՛չ
զանձն համարեցայ արժանի առ քեզ գալոյ. այլ
ասա՛ բանիւ, և բժշկեսցի մանուկս իմ. Քան-
զի և ես այր մի եմ կարգեալ ը͞ն իշխանութ͞ե.
ունիմ ընդ ինև զինուորս. և ասեմ սմա երթ,
և երթայ. և այլում թէ էկ, և գայ. և ծա-
ռայի իմում թէ արա՛ զայս, և առնէ. Եւ իբրև
լուաւ զայս յ͞ս զարմացաւ. դարձաւ առ ժողո-
վուրդն որ երթային զհետ նորա և ասէ՝ ամէն
ասեմ ձեզ՝ թէ և ո՛չ յի͞էլ այսչափ հաւատս
գտի. Եւ դարձան անդրէն պատգամաւորքն
'ի տուն, և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ.
Եւ եղև 'ի վաղիւն երթայր 'ի քաղաք մի, ո-
րում անուն էր նային. երթային ընդ նմա և
աշակերտք նորա և ժողովուրդ բազում. Իբրև
մերձ եղև 'ի դուռն քաղաքին, և ահա ելանէր
մեռեալ մի՝ որդի միամօր մօր իւրոյ. և նա էր
այրի, և ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ
նմա. Իբրև ետես զնա տէր՝ գթացաւ 'ի նա
և ասէ, մի՛ լար. Եւ մատուցեալ մերձեցաւ 'ի
դագաղն. և որք բարձեալն տանէին՝ զտեղի
առին. և ասէ՝ պատանի դու՝ քե՛զ ասեմ արի՛.
Կանգնեցաւ և նստաւ մեռեալն, և սկսաւ խօ-

անել, և ետ զնա ցմայր իւր։ Եւ ահ կալաւ զա-
մենեսին և փառաւոր առնէին զԱծ և ասէին՝
Թէ մարգարէ ոմն մեծ յարուցեալ է 'ի միջի
մերում. և Թէ այց արար Ած ժողովրդեան
իւրում 'ի բարութիւն. Եւ ել զրոյցս այս
ընդ ամ հրէաստան վս նորա՝ և ընդ ամենայն
կողմանս աշխարհին.

Եւ եղև 'ի մտանելն նորա 'ի տուն ուրումն իշ-
խանաց փարիսեցւոց 'ի շաբաթու ուտել
հաց՝ և նոքա սպասէին նմա. Եւ ահա այր ոմն
էր անդ ջրգողեալ առաջի նորա. Պատասխանի
ետ Յս և ասէ ցօրինաւորս և ցփարիսեցիս՝ եթէ
արժա՞ն իցէ 'ի շաբաթու բժշկել. և նոքա
լուռ եղեն. Եւ բուռն հարեալ զնմանէ՝ բժշ-
կեաց զնա և արձակեաց. Եւ ասէ ցնոսա՝
ո՞յր ուրուք 'ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի 'ի
ջրհոր, և ո՞չ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր
շաբաթու. Եւ ո՞չ կարացին տալ նմա պատաս-
խանի առ այն.

Եւ եղև մինչ երթայր նա յերուսաղէմ, և ինքն
անցանէր ընդ մէջ սամարիայ և գալիլեացւոց.
Եւ մինչդեռ մտանէր 'ի գեօղ ուրեմն, պա-
տահեցին նմա տասն այր բորոտ, որք կացին 'ի
հեռաստանէ. բարձին զձայնս և ասեն՝ Յս վար-
դապետ՝ ողորմեա՛ց մեզ. Եւ իբրև ետես ըզ-
նոսա՝ ասէ ցնոսա. երթայք ցուցէք զանձինս
քահանայիցն. և եղև իբրև գնացին առ ժամայն
սրբեցան. Մի ոմն 'ի նոցանէ իբրև ետես
եթէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն, 'ի ձայն
մեծ

մեծ փառաւոր առնէր զաստուած։ Անկաւ առ ոտս նորա 'ի վերայ երեսաց իւրոց՝ և գոհանայր զնմանէ. և ինքն էր սամարացի. Պատասխանի ետ յ՟ս և ասէ, ո՞չ տասն սուրբ սրբեցան. իսկ արդ ինունքն ո՞ւր են. Զի ո՞չ գտան դառնալ տալ փառս ա՟յ, բայց միայն այլազգիս այս. Եւ ասէ ցնա. արի՛ գնա՛ զի հաւատք քո կեցուցին զքեզ.

Եւ եղև 'ի մօտել նորա յերիքով՝ կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ. Իբրև լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր թէ զինչ իցէ այն. Եւ պատմեցին նմա թէ յ՟ս նազովրեցի անցանէ. Աղաղակեաց և ասէ՝ յ՟ս որդի դաւթի՝ ողորմեա՛ց ինձ. Եւ որ առաջի երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ. և նա ևս առաւել աղաղակէր որդի դաւթի՝ ողորմեա՛ց ինձ. Զտեղի եառ յ՟ս՝ և հրամայեաց ածել զնա առ իւր. և իբրև մերձ եղև առ նա՝ եհարց զնա և ասէ, զինչ կամիս դու զի արարից քեզ. և նա ասէ՝ տ՟ր զի բացցին աչք իմ, և տեսից. Եւ յ՟ս ասէ ցնա՝ հայեա՛ց, հաւատք քո կեցուցին զքեզ. Եւ առ ժամայն ետես. երթայր զհետ նորա և փառաւոր առնէր զա՟ծ. և ա՟մ ժողովրդեանն տեսեալ՝ տային օրհնութիւն աստուծոյ.

## Մէջ Լուսաւորութի Յ̅ի Ք̅ի Որ Լոյս Յօհաննու.
## Տ̅ն մեր Յ̅ս Ք̅ս.

Յետ այսորիկ տօն էր Հրէից, եւ ել յ̅ս յե̅մ. Եւ էր յերուսաղէմ 'ի պրոբատիկէ աւազանին՝ որ կոչէր եբրայեցերէն բեթհեզդայ՝ հինգ սրահ. Յորս անկեալ դնէր բազմութի̅ յոյժ հիւանդաց. կուրաց՝ կաղաց՝ գօսացելոց՝ որ ակն ունէին ջրոյն յուզելոյ. Եւ հրեշտակ տ̅ն իջանէր ըստ ժամանակի յաւազանն՝ եւ յուզէր զջուրս. եւ որ նախ 'ի շարժումն ջուրցն իջանէր յաւազանն՝ բժշկէր, ո՛չ ունելով նշան հիւանդութեան. Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն եւ ութ ամ էր 'ի հիւանդութեան իւրում. Զնա իբրեւ ետես յ̅ս զի անկեալ դընէր, եւ գիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետեւ, ասէ ցնա՝ կամի՞ս ողջ լինել. Պատասխանի ետ նմա հիւանդն. տէր ո՛չ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին, արկցէ զիս յաւազանն. եւ մինչ ես գանգաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ. Ասէ ցնա յ̅ս, արի՛ առ զմահիճս քո եւ գնա՛. Եւ ողջացաւ այրն. եւ յարեաւ առ զմահիճս իւր եւ շրջէր, եւ էր շաբաթ յաւուրն յայնմիկ. Ասէին հրեայքն ցբժշկեալն՝ շաբաթ է եւ ո՛չ է արժան քեզ առնուլ զմահիճս քո. Պատասխանի ետ ն̅ց եւ ասէ. որ բժշկեացն զիս, նա ասաց ցիս, ա՛ռ զմահիճս քո եւ գնա՛. Հարցին ցնա եւ ասեն, ո՞վ է այրն՝ որ ասաց ցքեզ, ա՛ռ զմահիճս քո եւ շրջեա՛ց.



Եւ

Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ ով իցէ․ քանզի
յս̅ խոյս ետ վասն ամբոխին ՚ի տեղւոջէ անտի․
Յետ այսորիկ գտանէ զնա յս̅ ՚ի տաճարին , և
ասէ ցնա․ Ահաւասիկ ողջացար , մի՛ ևս մեղան-
չեր , զի մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ․ Գնաց
այրն և պատմեաց հրէիցն , եթէ յս̅ էր որ բը-
ժշկեացն զնա․ Եւ վասն այնորիկ հալածէին
զյս̅ հրէայքն , զի զայն առնէր ՚ի շաբաթու․
Եւ յս̅ պատասխանի ետ նոցա՝ Հայր իմ մինչև
ցայժմ գործէ՝ և ես գործեմ․ Վասն այնորիկ
առաւել խնդրէին հրէայքն սպանանել զնա ,
զի ոչ միայն լուծանէր զշաբաթս , այլ և Հայր իւր
կոչէր զա̅ծ․ և հաւասար առնէր զանձն՝
աստուծոյ․

Յայնժամ ետ զնա ՚ի ձեռս նոցա , զի ՚ի խաչ
ելանիցէ․ Եւ նոքա առեալ տանէին զնա․ և
բարձեալ էր ինքնին զխաչափայտն․ և ելանէր ՚ի
տեղին՝ որ անուանեալ էր գագաթն․ և կոչիւր
եբրայեցերէն գողգոթա․ Ուր և ՚ի խաչին իսկ
հանին զնա․ և ընդ նմա երկուս ևս այլս աստի
և անտի , և ՚ի միջի զյս̅․ Գրեաց և տախտակ մի
պիղատոս , և եդ ՚ի վր̅ խաչին և էր գրեալ յս̅
նազովրեցի , Թագաւոր հրէից․ Զայն տախ-
տակ ընթերցան բազումք ՚ի հրէից․ զի մօտ էր
՚ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն յս̅ ․ և
էր գրեալ եբրայեցերէն , դաղմատերէն , և յու-
նարէն․ Ասեն ցպիղատոս քահանայապետքն հրէ-
ից , մի՛ գրեր Թագաւոր հրէից․ այլ թէ նա
ասաց՝ Թագաւոր եմ հրէից․ Պատասխանի ետ



պի

պիղատոս · զոր ինչ գրեցի՝ գրեցի· Իսկ զին-
ւորքն իբրև հանին ՚ի խաչ զյս̅ , առին զհան-
դերձս նորա · և արարին չորս մասունս , իւ-
րաքանչիւր զինուորի մասն իսկ զպատմուճանն՝
քանզի էր առանց կարանի , ՚ի վերուստ փո-
րանկեալ ամենեւին· Ասեն ցմիմեանս · մի՛ պա-
տառեսցուք զայդ · այլ արկցուք վիճակս ՚ի վ̅ր
դորա՝ ում և ելցէ զի լցցի գիրն՝ որ ասէ·
Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս , և՚ի
վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկին զին-
ւորքն զայս ինչ գործեցին· Եւ կային առ
խաչին յս̅ի մայրն նորա · և քոյր մօր նորա մա
րիամ կղէովպայ · և մարիամ մագդաղենացի·
Յս̅ իբրև ետես զմայրն , և զաշակերտն , զոր
սիրէր , զի կայր մօտ · ասէ ցմայրն , կի՛ն դու,
ահա՛ որդի քո· Ապա ասէ ցաշակերտն · ահա՛
մայր քո· և յայնմ ժամանակէ առ աշակերտն զնա
առ իւր· Յետ այսորիկ իբրև գիտաց յս̅ , եթէ
ահա ա̅մ ինչ կատարեալ է , զի կատարեսցի գիրն,
ասէ · Ծարաւի եմ· Եւ անդ կայր աման ինչ
լի քացախով · և նոցա սպունգ լցեալ քացախով
ընդ լեղւոյ՝ շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի՝ մա
տուցին ՚ի բերան նորա· Իբրև առ յս̅ զքացախն
հանդերձ լեղւովն՝ ասէ , ա̅մ ինչ կատարեալ է·
և խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին·

## Յիշատակարան Տպագրողի Գրոցս.

Փառք և գոհութիւն անլռելի ձայնիւ Մե-
նաւորելոյ երրորդութեան Հօր և Որդւոյ և
Հոգւոյն սբյ. Որոյ ամենառատ շնորհօքն և
ողորմութեամբն, և օգնականութբ հոգեկիր
հռետորի Սբյն Գրիգորի Նարեկացւոյ հը-
րեշտակակրօն վարդապետի, վերստին 'ի լրումն
եկեալ կատարեցաւ տպեցումն ախտաբոյժ
Գրքոյս նորին Մաղթեաց՝ որ կոչի
Նարեկ.

Ուրեմն՝ որք վայելէքդ զսա, Նախապէս
տուք փառս Աստուծոյ յաջողողին և տնօ-
րինողին ամի.

Նաև զինէ՝ զտէր Պաղտասարեան Առիստակէս
Քահանայս յետին որ 'ի սէր սորին
վառեալ և յորժ ստիպեալ՝ յայսմիկ ըստ
ամենայնի երաշխաւորեալ եղանակի՝ բազում
աշխատանօք զայս համադամ խորտիկ տպե-
ցուցմամբ ձեզ Սիրելեացդ սեղանաւորեցի
նոյն ծերունի հայրս և Տալիթայ իրեցակին
մայրս, և Խոսկուհի և Տիրուհի քերբքս ե-
մովք հանդերձ, և զմկրտիչ և զյօհաննէս որ-
դիսն իմ, զռուսիա՝ զկալէնիկէ և զմարիամ
դստերսն իմ ընդ Մ՝ելքի անուն իրեցակին
մօր նուրեանց՝ 'ի պահպանութիւն յամենայն պա-
տահարաց չարաց, 'ի մաքուր մաղթանս ձեր ա-
ղերսեմ յիշել 'ի Տր.

Նաեւ՝ զննջեցեալ տէր յօհաննէս մայրապապն
իմ եւ զտէր պօղոս որդին, եւ զերիցակնայս նոցա
զսաւղդանն եւ զմարգարիտն. եւ զպապն իմ զհիւմ-
րիւզն եւ զմամն իմ նուրին. եւ ինձ աներացեալ
գրչու Առաքելի եղբայր զխաչէմքեար մահտեսի
Մկրտիչ երախտաշատ վարպետն իմ՝ ընդ այլ
համօրէն արենամերձ ննջեցեալսն իմ յիշեսջիք
առ Քս.

Յիշեսջիք եւ՝ զՄիրիձանեան հանգուցեալ
Շնորհ Մկրտիչ Ամիրայն, որ զայս Տպարան
էածոյց յայսմիկ Դպրոցտան. եւ որոյ նարդենիս
Մութէվէլի զորդի՝ զՄուրատ ամիրայն,
եւ ընդ նմին՝ զպայազատ Մանուէլ եւ զՔէ-
րոբէ միւս որդիսն, իւրեանց արենակցօքն
հանդերձ.

Նաեւ ապա յիշեսջիք զպատրաստակամ ծառայ
ձեր զԽումարզատեան. Հանգուցեալ Յօհան-
նիսի որդի զՏպագրիչ չնչին Տէրացու Մար-
տիրոս. եւ զՄայրն իմ զհանգուցեալ Հազար-
խանն.

Նաեւ յիշեսջիք զաշխատաւոր մշակսն Տպա-
րանիս զԱրապկերցի՝ հացագործ ղուկասի որ-
դի զտիրացու Աւետիսն. եւ զընկերն իւր ըզ
Մեծկերտցի Անթառամի որդի զմելքոնահար-
զաշխատաւոր ադամն.

Նաեւ զձեզ զամենեսեանդ՝ բարեգութ եւ արդար
դատաւոր Տրն մեր Յս Քս՝ յիշեսցէ 'ի սու-
կալի եւ ահաւոր միւսանգամ Գալստեանն,
իւրում. Ամէն.

և ծնծղայուդ[illegible] ք :

Ալէլուիայ. ալէլուիայ. ալէլուիայ:

Այօր է զոր արար տր. եկայք ցն՝ծասցուք և ուրախ եղիցուք 'ի նմա· 'ի տնէ՛ եղ՛և այս. և է սքանչելի առաջի աչաց մերոց:

Ալէ՛: Տէ՛ր ով կացցէ 'ի խորանի քում. կամ ով բնակեսցի 'ի լեառն սուրբ քո :

Որ գնայ ամբիծ. գործէ զարդարութիւն. և խօսի զճշմարտութի 'ի սրտի իւրում: փառք և՛:

Ալէլուիայ. ալէլուիայ. ալէլուիայ:

Մերձ եղէ ես ով [illegible] ցեռ 'ի [illegible] տուն [illegible] ցուք մեք. Հասեալ [illegible] ու ղր [illegible] քո [illegible]

---

Աս [illegible]

Աս [illegible]

[illegible] Ալէ: [illegible]

Եւ շըջ[illegible]

Խոստովանութի [illegible]

Թի զգեցար. ար[illegible] զօթոց. Զգեցեր զ[illegible] և արկեր 'ի վր ջր[illegible] նր. փառք [illegible]

Ալէլուիայ. ալ[illegible]

ր հովուէ՛ք [illegible]

ռաջնորդես [illegible]